



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
EUROPEAN UNION FOR ARMENIA



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ.

հիմնախնդրի ուսումնասիրում  
հայաստանյան համատեքստում

Հետազոտություն

Երևան 2022



Ընդդեմ կանանց նկատմամբ  
բռնության կոալիցիա  
Coalition to stop violence  
against women



# **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ.**

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետազոտություն

© Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն

Երևան 2022

Գործածված օրինակ

Սույն հրատարակությունը պատրաստել է Մարդու իրավունքների  
հետազոտությունների կենտրոնը

Պատվիրակել և տպագրել է Կանանց ռեսուրսային կենտրոնը

Պատրաստվել է «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում  
Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շրջանակում

## **Վերլուծական և խմբագրական կազմ**

Անահիտ Սիմոնյան

Շուշան Ղահրիյան

Նարինե Ալեքսանյան

## **Լեզվական խմբագրումը՝**

Ազնիվ Նասյանի

## **Համակարգչային ձևավորումը՝**

«Չարտարիստ» ՍՊԸ-ի

Այս հետազոտությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Հետազոտության իրականացումը պատվիրակել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» ծրագրի շրջանակում: «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ.) ծրագիրն իրականացնում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Այս հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն

Երևան 2022

# Բովանդակություն

Հապավումներ.....	4
Խմբագրակազմի կողմից .....	5
Մեթոդաբանություն .....	8
<b>Բաժին 1. Ազատությունից զրկման վայրերում գեղեցիկ հիմքով բռնության հիմնախնդրի ամփոփ նկարագիր.....</b>	<b>11</b>
1.1. Ի՞նչ է «գեղեցիկ հիմքով բռնությունը», և ինչպե՞ս է այն սահմանվում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային աղբյուրներում և ներպետական օրենսդրությամբ: .....	11
1.2. Որո՞նք են ազատությունից զրկման վայրերը միջազգային և ներպետական կարգավորումների համաձայն: Ազատությունից զրկման ո՞ր վայրերն են դիտարկվում տվյալ հետազոտության շրջանակում: .....	14
1.3. Որո՞նք են ազատությունից զրկված կանանց նկատմամբ գեղեցիկ հիմքով բռնության դրսևորումները, ի՞նչ առանձնահատկություններ ունի տվյալ հիմնախնդիրը. միջազգային աղբյուրների և տեղական համատեքստի դիտարկում: .....	16
<b>Ամփոփում և արձանագրումներ (Բաժին 1) .....</b>	<b>30</b>
<b>Բաժին 2. Ազատությունից զրկման պայմաններում գեղեցիկ հիմքով բռնության համար պատասխանատվության սահմանում և հիմնախնդրի իրավական ճանաչում.....</b>	<b>33</b>
2.1. Արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ ամրագրում ստացել են ազատությունից զրկման պայմաններում գեղեցիկ հիմքով բռնության համար պատասխանատվության սահմանման՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում տեղ գտած պահանջները: .....	34
2.2. Արդյո՞ք ներպետական իրավակարգավորումներով ճանաչում է ստացել կանանց նկատմամբ գեղեցիկ հիմքով բռնության հիմնախնդիրը: .....	40
2.3. Արդյո՞ք բռնության դեպքերի վիճակագրության վարման վերաբերյալ ներպետական իրավակարգավորումները գեղեցիկ հիմքով ճանաչում են: .....	44
<b>Առաջարկներ (Բաժին 2).....</b>	<b>46</b>
<b>Բաժին 3. Հիմնախնդրի հասցեագրում քրեակատարողական ոլորտի համատեքստում.....</b>	<b>47</b>
3.1. Արդյո՞ք ՀՀ ԹԿԶ-ներում, մասնավորապես հիմնարկ ընդունման փուլում իրականացվում է ռիսկերի գեղեցիկ հիմքով ճանաչում, որը հնարավորություն կտա վերհանելու կնոջ նկատմամբ նախկինում կատարված բռնության փաստը: .....	49
3.2. Արդյո՞ք օրենսդրորեն ամրագրված են և գործնականում պահպանվում են ՀՀ ԹԿԶ-ներում ազատագրված կանանց նկատմամբ գեղեցիկ հիմքով բռնության կանխարգելման առումով առանցքային նշանակություն ունեցող պահման պայմանների և վարվեցողության միջազգային չափանիշները: .....	60
3.3. Արդյո՞ք ներպետական օրենսդրությունն ու ձևավորված գործելակերպերը արտացոլում են միջազգային չափանիշներով սահմանված՝ քրեակատարողական ծառայողների՝ գեղեցիկ հիմքով վերապատրաստումների իրականացման պահանջը:.....	70
<b>Առաջարկներ (Բաժին 3).....</b>	<b>77</b>
<b>Բաժին 4. Հիմնախնդրի հասցեագրում հոգեկան առողջության ոլորտի համատեքստում.....</b>	<b>80</b>
<b>Առաջարկներ (Բաժին 4).....</b>	<b>96</b>
<b>Բաժին 5. Հիմնախնդրի հասցեագրում ազատությունից զրկման վայրերի նկատմամբ արտաքին մշտադիտարկման և ներքին վերահսկողության միջոցով .....</b>	<b>98</b>
<b>Առաջարկներ (Բաժին 5).....</b>	<b>105</b>
<b>Հավելված 1. Հետազոտության մասնակիցների ցանկ.....</b>	<b>106</b>
<b>Հավելված 2. Հարցումների արդյունքում ստացված քանակական տվյալներ.....</b>	<b>109</b>
<b>Հետազոտության աղբյուրների ցանկ.....</b>	<b>112</b>

# Հապավումներ

<b>ԱՆ</b>	Արդարադատության նախարարություն
<b>ԱռՆ</b>	Առողջապահության նախարարություն
<b>ԱՍՀՆ</b>	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
<b>ԲԿ</b>	Բանտարկյալ կանանց հետ վարվեցողության և այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ կամ «Բանգկոկի կանոններ»
<b>ԵԱՀԿ</b>	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
<b>ԵԽ</b>	Եվրոպայի խորհուրդ
<b>ԼԳՔՏ</b>	Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
<b>ԿՆԽՎԿ</b>	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՀՈՒԱԻՀԿ</b>	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԱԿ ԳԱ</b>	Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեա
<b>ՄԻՀԿ</b>	Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
<b>ՄԻՊ</b>	Մարդու իրավունքների պաշտպան
<b>ՆՄԿ</b>	Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ վերանայված կանոններ կամ «Նեյտոն Մանդելայի կանոններ»
<b>ՊՈԱԿ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
<b>ՔԿԾ</b>	Քրեակատարողական ծառայություն
<b>ՔԿՀ</b>	Քրեակատարողական հիմնարկ

# Խմբագրակազմի կողմից

**«Գեոդերային հիմքով բնությունը ազատությունից զրկված կանանց նկատմամբ հիմնախնդրի ուսումնասիրում հայաստանյան համատեքստում»** հետազոտությունն անդրադառնում է գեոդերային հիմքով բնության կանխարգելմանն ուղղված հարցերի ընդգրկուն շրջանակին քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտների համատեքստում դիտարկելով տվյալ ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում գործող ազատությունից զրկման վայրերի<sup>1</sup> քրեակատարողական հիմնարկները և հոգեբուժական կազմակերպությունները:

Գեոդերային հիմքով բնությունը Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության առանցքային հիմնախնդիրներից է: Կանանց՝ գեոդերային հիմքով բնությունից պաշտպանության հարցերը շարունակաբար բարձրաձայնվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, կին իրավապաշտպանների և ակտիվիստների կողմից, սակայն դրանց հասցեագրմանն ուղղված և պետության կողմից ձեռնարկված առարկայական քայլերը մեծ մասամբ իրականացվել են մեկ համատեքստում, այն է՝ ընտանեկան բնության բացահայտման, կանխարգելման և դրա համար պատասխանատվության սահմանման ուղղությամբ:

Թեպետ կանանց նկատմամբ գեոդերային հիմքով բնությունները, այդ թվում՝ սեռական բնությունը և սեռական ոտնձգությունը, հանրային կյանքի տարբեր ոլորտներում աշխատավայրում, կրթական հաստատություններում, հանրային տարածքներում, նույնպես բարձրաձայնվում են հասարակության տարբեր խմբերի, կազմակերպությունների և փորձագիտական շրջանակների կողմից, այնուամենայնիվ չեն թիրախավորվում գեոդերային հիմքով բնության կանխարգելման պետական քաղաքականությունների շրջանակում:

**Միևնույն ժամանակ գեոդերային հիմքով բնությունը ազատությունից զրկված կանանց նկատմամբ դեռևս չի ձևակերպվել հանրային և պետական օրակարգերում իբրև մասնավոր ուշադրություն պահանջող հիմնախնդիր:**

Սույն հետազոտությունն իրականացրել է Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնը (ՄԻՀԿ)<sup>1</sup> կարևորելով խնդրի բարձրաձայնումը և դրա հասցեագրմանն ուղղված առաջարկների ներկայացումը տեղական համատեքստում:

Ազատությունից զրկված կանանց նկատմամբ գեոդերային բնության հիմնախնդիրն բավարար չափով անդրադառնում են միջազգային ուսումնասիրություններն ու զեկույցները, իսկ հիմնախնդրի հասցեագրման պահանջը և դրանից բխող չափանիշներն ու նորմերը տեղ են գտել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային գործիքներում և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայում:

Հարկ է նշել, որ առկա ուսումնասիրությունները փաստում են հիմնախնդրի քողարկվածության և բնության դեպքերի լատենտայնության մասին՝ արձանագրելով, որ ազատությունից զրկված կանանց կողմից գեոդերային հիմքով բնության մասին հաղորդումները,

1. Այսուհետ «ազատությունից զրկման վայր» և «հաստատություն» եզրույթներն օգտագործվելու են փոխլրացվելով:

ահագանգերը հաճախ ուղեկցվում են կրկնագոհականացմամբ, դրանց արժանահավատության հարցադրմամբ, բռնությունը գործադրողների կողմից հաշվեհարդարի ենթարկվելու հավանականությամբ, ինչի հետևանք է նաև պաշտոնական վիճակագրություններում ազատությունից զրկման վայրերում գենդերային հիմքով բռնության դեպքերի սակավ արձանագրումը:

Նշանակալի է, որ հետազոտության շրջանակում հավաքված տվյալների վերլուծությունը ևս հաստատում է ազատությունից զրկման վայրերում գենդերային հիմքով բռնության քողարկվածության վարկածը՝ իսկոյի «թաքնված», «լռեցված», «անտեսված» և պետության կողմից դեռևս չհասցեագրված լինելը, ինչն առանցքային է հայաստանյան համատեքստում հիմնախնդրի ուսումնասիրման և առաջարկների ձևակերպման առումով:

Սույն հետազոտության շրջանակում ընտրված հայաստանյան հաստատություններից քրեակատարողական հիմնարկներում գենդերային հիմքով բռնության վերաբերյալ ամկա տվյալները փաստում են, մասնավորապես, ԼԳԲՏ անձանց, այդ թվում՝ տրանսգենդեր կանանց նկատմամբ բռնության, ներառյալ սեռական և այլ շահագործման դեպքերի ամկայության մասին: Ավելին՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից արձանագրված է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք են դրսևորում ոչ միայն մյուս ազատագրված անձինք, այլ նաև վարչակազմը:

Պացիենտների նկատմամբ բռնության, խտրականության և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստեր են արձանագրված նաև հայաստանյան հոգեբուժական կազմակերպություններում:

**Վերոգրյալի համատեքստում կարևոր է շեշտել, որ ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության գործադրումը կամ դրա սպառնալիքը ենթադրում է մարդու իրավունքների խախտում, իսկ բռնության ռիսկերի կանխարգելումը և պաշտպանության մեխանիզմների ներդրումը պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունն է, ինչն առաջ է քաշում հիմնախնդրի շարունակական խորքային հետազոտման անհրաժեշտությունը և արդյունավետ հասցեագրման հրամայականը:**

Սույն հրապարակումն առաջին քայլն է նման հետազոտության, այն կարևոր է ընտրված իսկոյի տեսանելիության բարձրացման և շահագրգիռ կողմերի ու լայն հանրության ուշադրության առանցք բերելու առումով:

Հետազոտությունն իրականացվել է վերաբերելի տեղական և միջազգային գրականության, ոլորտային փորձագետների, որոշում կայացնողների և հետազոտության շրջանակում ընտրված հաստատությունների հետ որակական հարցազրույցների և պաշտոնական հարցումների միջոցով հավաքված տվյալների, միջազգային նորմերի և չափանիշների և դրանց հիման վրա որոշ առանցքային հարցերի ամնչությամբ ներպետական իրավական կարգավորումների համադրված վերլուծությամբ:

Սույն հետազոտության շրջանակում տեղ գտած վերլուծությունը և հետազոտական առաջարկների ներկայացումն իրականացրել են մարդու իրավունքների հարցերով փորձագետ, հետազոտող Անահիտ Սիմոնյանը, սոցիոլոգ Շուշան Ղահրիյանը և իրավաբան Նարինե Ալեքսանյանը:

Հետազոտության տարբեր փուլերում հիմնախնդրի ուսումնասիրության աշխատանքներին մասնակցել են նաև իրավաբաններ Հասմիկ Պետրոսյանը և Անահիտ Մկրտչյանը:

Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնը շնորհակալ է բոլոր անհատ փորձագետներին, հասարակական և պետական կառույցների ու հաստատությունների ներկայացուցիչներին, որոնք, մասնակցելով հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցներին, տրամադրելով անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ, կիսվելով հիմնախնդրի և դրա կարգավորման առնչությամբ իրենց փորձով, գիտելիքով, մոտեցումներով և դիրքորոշումներով, հնարավոր դարձրին հետազոտության իրականացումը:

**Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնը լիահույս է, որ հետազոտության արդյունքները պատկերացում կձևավորեն հիմնախնդրի մասին, հիմք կդառնան դրա շարունակական ուսումնասիրման և բարձրաձայնման համար, իսկ հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկները կնպաստեն ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և դրա ռիսկերի հասցեագրմանը: Հիմնախնդրի հասցեագրումը պետք է լինի քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումների իրագործման, այս ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության պետության պարտավորությունների իրականացման, արդյունավետ և համակարգային լուծումների ձևակերպման և գենդերագայուն կանխարգելիչ գործելակերպերի որդեգրման միջոցով:**



# Մեթոդաբանություն

Հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել Հայաստանում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային բռնության հիմնախնդիրը և ներկայացնել հիմնախնդրի հասցեագրման առաջարկներ քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտների համատեքստերում:

Հետազոտության իրականացման համար ընտրվել է որակական մեթոդաբանական մոտեցումը:

Նպատակի իրագործման համար դրվել են հետևյալ *խնդիրները*.

1. Ներկայացնել ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդրի առանձնահատկությունները, դրսևորումները՝ հիմնվելով միջազգային և տեղական ուսումնասիրությունների, զեկույցների, տեղական փորձագիտական համայնքի և առանցքային դերակատարների մոտեցումների վրա:
2. Ներկայացնել հետազոտական հիմնախնդրի հասցեագրման առաջարկներ՝ միջազգային գրականության, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարգավորումների և ներպետական օրենսդրության համեմատական ուսումնասիրության և հետազոտության շրջանակում հավաքված տվյալների համադրված վերլուծության հիման վրա:

Հետազոտության *խնդիրներից դուրս* է *ոլորտային օրենսդրության մանրակրկիտ իրավական վերլուծությունը*, ինչը առանձին հետազոտության առարկա է՝ հաշվի առնելով հիմնախնդրի ծավալուն բնույթը և ընտրված հաստատությունների ընդգրկուն շրջանակը:

Հետազոտությունն ունի մեկնարկային հետախուզական բնույթ:

Հետազոտության շրջանակում գենդերային հիմքով բռնությանն առնչվող հարցերն ուսումնասիրվել են ազատությունից զրկման այնպիսի վայրերում, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկները (այսուհետ՝ նաև ՔԿՀ) և հոգեբուժական կազմակերպությունները:

Հետազոտական խնդիրները վերհանելու նպատակով ընտրվել են փաստաթղթերի վերլուծության, փորձագիտական հարցազրույցի, ֆասիլիտացված քննարկումների և խորքային հարցազրույցի մեթոդները:

1. **Փաստաթղթերի վերլուծության** մեթոդով ուսումնասիրվել են հետազոտությամբ առաջադրված խնդիրների շրջանակին վերաբերելի ներպետական իրավական փաստաթղթեր, միջազգային իրավական փաստաթղթեր, ինչպես նաև հետազոտության ընթացքում պետական կառույցներից և հետազոտության շրջանակում ընտրված հաստատություններից հարցված փաստաթղթեր:
2. **Փորձագիտական հարցազրույցների** մեթոդով տվյալներ են հավաքվել հետևյալ խմբերի հետ՝
  - Հայաստանում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդրով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներ և անհատ փոր-

ծագետներ:

- Հետազոտության շրջանակում ընտրված հաստատություններում գտնվող անձանց (մասնավորապես՝ կանանց) իրավունքների պաշտպանության և շահերի առաջխաղացման հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներ և անհատ փորձագետներ:
- Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների (այսուհետ՝ նաև այլընտրանքային (ոչ պետական) խմբային տներ) ներկայացուցիչներ:

Հարցազրույցները հնարավորություն են տվել ծանոթանալու ինչպես փորձագետների կատարած աշխատանքի արդյունքներին, մոտեցումներին, նրանց կողմից դիտարկվող խնդիրներին, այնպես էլ ոլորտային բարեփոխումների և հիմնախնդրի հասցեագրման նրանց պատկերացումներին:

3. **Ֆասիլիտացված քննարկումներ** իրականացվել են քրեակատարողական հիմնարկներում և հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող խմբերի (այսուհետ՝ նաև դիտորդների խմբեր) անդամների հետ: Քննարկումները հնարավորություն են տվել անդրադառնալու ընտրված հաստատություններում գեղեցիկ բռնության հիմնախնդրին, ծանոթանալու մշտադիտարկման արդյունքներին, խմբերի ձեռք բերած փորձին:
4. **Խորքային հարցազրույցներ** իրականացվել են առանցքային դերակատարների երկու խմբերի՝ որոշում կայացնողների և հետազոտության շրջանակում ընտրված ազատությունից զրկման վայրերի ներկայացուցիչների հետ: Հարցազրույցների միջոցով դուրս են բերվել ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնության մասին առանցքային դերակատարների ընկալումները, մոտեցումներն ու փորձը, ինչպես նաև հիմնախնդրի հասցեագրման վերաբերյալ նրանց պատկերացումները:

Հետազոտության համար կիրառվել է որակական հետազոտության **նպատակաուղղված ընտրանքը**: Ընտրված միավորները ներկայացված են Հավելված 1-ում:

Հարցազրույցների և ֆասիլիտացված քննարկումների իրականացման համար կիրառվել են որակական հարցազրույցի հարցաշար-ուղեցույցներ: Հետազոտության համար անհրաժեշտ քանակական տվյալները (*տե՛ս* Հավելված 2) և հաստատությունների գործունեությանը վերաբերող տվյալները ստացվել են տեղեկության պաշտոնական հարցման միջոցով (*տե՛ս* Հետազոտության աղբյուրների ցանկ):

Հետազոտությունը *նորարարական* է հայաստանյան համատեքստում: Այն ոչ միայն անդրադառնում է քիչ ուսումնասիրված խնդրի, այլև ներկայացնում է Հայաստանում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գեղեցիկ բռնության կանխարգելման առաջարկներ քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտների համատեքստերում:

Ընտրված հաստատություններում բռնության/գեղեցիկ բռնության դրսևորումներն ուսումնասիրվել են հարաբերությունների հետևյալ հարթություններում՝ բռնության գործադրումը հաստատությունների անձնակազմի կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ և բռնության գործադրումը ազատությունից զրկված անձանց միջև հարաբե-

րությունների շրջանակում<sup>2</sup>:

Հետազոտության իրականացման *հիմնական բարդությունը* ընտրված հաստատություններում գեներային հիմքով բռնության առկայության և դրսևորման առանձնահատկությունների մասին տվյալների դուրսբերումն էր՝ պայմանավորված հիմնախնդրի՝ ուսումնասիրված չլինելու, բարձր լատենտայնության և պետական վիճակագրության բացակայության հանգամանքներով:

Հետազոտության շրջանակում *չեն իրականացվել հարցազրույցներ հաստատություններում գտնվող/գտնված կանանց հետ հետևյալ պատճառներով*: Մեկնարկային հետազոտության շրջանակում, իբրև հետազոտողներ, առաջնային ենք համարել հասկանալ հիմնախնդիրը և դրա դրսևորումները միջազգային և տեղական համատեքստերում, ինչպես նաև սկսել հիմնախնդրի շուրջ խոսակցությունը փորձագիտական համայնքի և առանցքային դերակատարների հետ: Կանանց պատմությունների հավաքումը և ուսումնասիրությունը, անշուշտ, այս խոսակցության անբաժան և կարևորագույն մասն են, և այս առումով տվյալ հետազոտությունը հիմք է ստեղծում հետագա ուսումնասիրությունների համար, այդ թվում՝ հաստատություններում գտնված/գտնվող կանանց կենսափորձի բացահայտման միջոցով: Գեներային հիմքով բռնությունը՝ իբրև հիմնահարց, բավական զգայուն է, իսկ բռնության ենթարկված անձանց պատմությունների հավաքումը պետք է իրականացվի համապատասխան մեթոդաբանությամբ և ռեսուրսների առկայությամբ, ինչը հնարավոր չէր լինի տվյալ հետազոտության շրջանակում:

---

2. Ուսումնասիրությունները վերհանում են նաև բռնության ռիսկերը հաստատությունում գտնվող անձանց կողմից հաստատությունների անձնակազմի նկատմամբ, ինչպես նաև հաստատություններում գտնվող անձանց նկատմամբ բռնության ռիսկերը նրանց այցելող և «արտաքին աշխարհից» նրանց հետ կապ պահպանող անձանց կողմից (ընտանիքի անդամներ, ամուսիններ, զուգընկերներ), սակայն հարաբերությունների այս հարթությունները դուրս են տվյալ հետազոտության շրջանակից:

# Բաժին 1

## Ազատությունից զրկման վայրերում գեղեցիկ հիմքով բռնության հիմնախնդրի ամփոփ նկարագիր

Հայաստանյան համատեքստում քիչ ուսումնասիրություններ են անդրադառնում ազատությունից զրկման վայրերում բռնության, առավել ևս գեղեցիկ հիմքով բռնության դրսևորումներին: Այս հիմնախնդիրն ինքնին դուրս է ոլորտային քաղաքականությունների ուշադրությունից և առաջնահերթությունների շրջանակից:

Ազատությունից զրկման վայրերում գեղեցիկ հիմքով բռնության հիմնախնդիրը բավարար չափով արձարծվել և հասցեագրվել է միջազգային ուսումնասիրություններում, Հայաստանի համար միջազգային իրավական պարտավորություններ ամրագրող՝ Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ նաև ՄԱԿ), մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային փաստաթղթերում, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայում:

Սույն բաժնում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գեղեցիկ հիմքով բռնության հիմնախնդրի ամփոփ նկարագրության նպատակով նախ կանդրադառնանք առանցքային՝ «գեղեցիկ հիմքով բռնություն» և «ազատությունից զրկման վայրեր» եզրույթներին և դրանց սահմանմանը միջազգային և ներպետական համատեքստերում: Այսուհետև միջազգային հետազոտությունների և վերաբերելի տեղական աղբյուրների դիտարկման միջոցով կքննարկենք հիմնախնդրի դրսևորումները, առանձնահատկությունները՝ ըստ այդմ նաև ուրվագծելով հարցերի և խնդիրների այն շրջանակը, որոնց մասնավոր, առանձնացված ուսումնասիրումը կարևոր է հիմնախնդրի հասցեագրման տեսանկյունից:

### 1.1. Ի՞նչ է «գեղեցիկ հիմքով բռնությունը», և ինչպե՞ս է այն սահմանվում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային աղբյուրներում և ներպետական օրենսդրությամբ:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային աղբյուրներում առկա չէ «գեղեցիկ հիմքով բռնություն» եզրույթի<sup>3</sup> մեկ միասնական սահմանում, սակայն ներկայացված են դրա առանցքային հասկացության բաղադրիչները և դրսևորումների շրջանակը:

ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ԿՆԽՎԿ)<sup>4</sup> հիման վրա գործող Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (այսուհետ՝ նաև Կանանց հարցերով կոմիտե) իր N 19

3. Այսուհետ «գեղեցիկ հիմքով բռնություն» և «գեղեցիկ հիմքով բռնություն» եզրույթներն օգտագործվելու են փոխլրացվելով:

4. Հայաստանի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993 թվականից (տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>), իսկ կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականից (տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31426>):

Ընդհանուր հանձնարարականում<sup>5</sup> շեշտում է կանանց նկատմամբ խտրականության, գենդերային հիմքով բռնության և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոտնահարումների միջև անմիջական կապը:

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը<sup>6</sup> սահմանում է «կանանց նկատմամբ բռնությունն» իբրև «գենդերային հիմքով բռնության ցանկացած դրսևորում, որը կանանց պատճառում է կամ կարող է պատճառել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք, ինչպես նաև նման արարքի, հարկադրանքի կամ ազատությունից կամայականորեն զրկման սպառնալիքը՝ լինի դա հասարակական թե մասնավոր կյանքում»:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ նաև Ստամբուլյան կոնվենցիա)<sup>7</sup>, լինելով ինդիվիդ վերաբերող առավել համապարփակ միջազգային իրավական փաստաթուղթ, «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը» սահմանում է իբրև «բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն», և նշում է, որ «կանանց նկատմամբ բռնությունը հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում»:

Վերոգրյալը սույն հրատարակության շրջանակում «գենդերային (հիմքով) բռնություն» և «կանանց նկատմամբ [գենդերային հիմքով] բռնություն» եզրույթների փոխլրացնող օգտագործման և «գենդերային (հիմքով) բռնություն» եզրույթի սահմանման հիմք է հանդիսանում:

Ստամբուլյան կոնվենցիան տրամադրում է կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դրսևորումների ընդգրկուն ցանկ, ըստ որի՝ գենդերային հիմքով բռնությունը կարող է դրսևորվել հետևյալ կերպ՝

- ֆիզիկական,
- հոգեբանական,
- սեռական բռնության (ներառյալ բռնաբարությունը) և սեռական ոտնձգության (*sexual harassment*),
- հետամտման (*stalking*) տեսքով:

Ստամբուլյան կոնվենցիայի համաձայն՝ գենդերային հիմքով բռնության ձևեր են նաև հարկադիր ամուսնությունը, կանանց սեռական օրգանները խեղելը, հղիության արհեստական

5. *Stú* UN Committee on the Elimination of Discrimination Against Women (CEDAW), 1992, CEDAW General Recommendation No. 19: Violence against women (անգլերեն), <https://www.refworld.org/docid/52d920c54.html>

6. *Stú* UN OHCHR, 1993, Declaration on the Elimination of Violence against Women (անգլերեն), <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ViolenceAgainstWomen.aspx>

7. Հայաստանը Ստամբուլյան կոնվենցիան ստորագրել է 2017 թվականին, սակայն մինչ օրս չի վավերացրել. տե՛ս <https://rm.coe.int/168046246d>

դադարեցում կամ ստերիլիզացում կատարելուն հարկադրելը, հանուն «պատվի» կատարվող հանցագործությունները և այլն:

Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից **սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունը (օրինակ՝ տրանսգենդեր անձանց/տրանսգենդեր կանանց նկատմամբ բռնությունը) ևս համարվում է գենդերային հիմքով բռնության տեսակ<sup>8</sup>** և դիտարկվում է սույն ուսումնասիրության շրջանակում:

**«Գենդերային հիմքով բռնություն» կամ «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն» եզրույթներն ուղղակիորեն նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) ներպետական իրավական ակտերում:**

Առաջին անգամ ներպետական մակարդակում «գենդերային բռնություն» հասկացության անդրադարձ է արվել ենթաօրենսդրական ակտերում: Մասնավորապես ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստում հավանության արժանացած «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 23 արձանագրային որոշման<sup>9</sup> 1-ին հավելվածի ներածության մեջ գենդերային բռնությունը բնութագրվում է որպես սեռով պայմանավորված ցանկացած գործողություն, որը հանգեցնում է ֆիզիկական, սեռական կամ հոգեկան ցավի կամ տառապանքի, այդ թվում նաև՝ նման գործողությունների սպառնալիքը, հարկադրանքը կամ ազատության կամայական սահմանափակումը՝ անկախ նրանից՝ այն տեղի է ունենում հրապարակայնորեն թե մասնավոր կյանքում՝ հղում կատարելով համապատասխան միջազգային փաստաթղթերում առկա ձևակերպումներին: Նշված որոշմամբ հաստատված՝ 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել էր նաև «գենդերային բռնություն» հասկացության ներառումը ՀՀ իրավական ակտերում: **Առ այսօր, սակայն, ներպետական օրենսդրության շրջանակում «գենդերային (հիմքով) բռնություն» եզրույթը սահմանված չէ, և դրա կիրառման համակարգային մոտեցում առկա չէ:**

Հարկ է նշել, որ վերոնշյալ բոլոր ակտերը արձանագրային որոշումներ են և դադարեցրել են իրենց գործողությունը ՀՀ Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշմամբ<sup>10</sup>: Գենդերային քաղաքականության վերաբերյալ գործող միակ իրավական ակտը ՀՀ Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1334-Լ որոշումն է, որով հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: Այս ակտում ևս ներառված չէ «գենդերային բռնություն» հասկացությունը և միջոցառումների ծրագիրը: **Վերոշարադրյալից բխում է, որ այս պահին գործող որևէ ակտում «գենդերային բռնություն» հասկացությունը սահմանված կամ արտացոլված չէ:**

Ուստի **առաջարկում ենք** ներպետական օրենսդրությամբ սահմանել «գենդերային

8. *Տե՛ս* UN Human Rights Council, 2018, Report of the Independent Expert on protection against violence and discrimination based on sexual orientation and gender identity (անգլերեն), [https://undocs.org/A/HRC/38/43?fbclid=IwAR2b\\_R-4esIWEyrtKpYcGGfz9WGOzCepMx5FG2i4tumBM7jJ23fL6VO74](https://undocs.org/A/HRC/38/43?fbclid=IwAR2b_R-4esIWEyrtKpYcGGfz9WGOzCepMx5FG2i4tumBM7jJ23fL6VO74) <https://www.coe.int/en/web/gender-matters/what-is-gender-based-violence>

9. *Տե՛ս* «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրին, ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, <https://www.irtek.am/views/act.aspx?tid=61530>

10. *Տե՛ս* «Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157069>

հիմքով բռնություն» եզրույթը միջազգային չափանիշներին, մասնավորապես Ստամբուլյան կոնվենցիային համապատասխան: Տվյալ սահմանումը կարող է ամրագրվել գենդերային քաղաքականության վերաբերյալ ռազմավարական փաստաթղթերում: Միևնույն ժամանակ պետք է ապահովվել «գենդերային հիմքով բռնություն» եզրույթի հետագա ինտեգրումը բոլոր վերաբերելի իրավական ակտերում<sup>11</sup>:

1.2. Որո՞նք են ազատությունից զրկման վայրերը միջազգային և ներպետական կարգավորումների համաձայն: Ազատությունից զրկման ո՞ր վայրերն են դիտարկվում տվյալ հետազոտության շրջանակում:

Միջազգային ուսումնասիրություններում<sup>12</sup>, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերում<sup>13</sup> «ազատությունից զրկման վայրեր» եզրույթի մեկ միասնական սահմանում անկա չէ:

**ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը** *ազատությունից զրկումը մեկնաբանում է «իբրև կալանքի կամ ազատազրկման յուրաքանչյուր ձև կամ անձի տեղակայում պետական կամ մասնավոր պահման վայրում, որն անձն իրավունք չունի ինքնակամ լքելու՝ դատական, վարչական կամ համապատասխան իրավասություն ունեցող որևէ մարմնի որոշմամբ»<sup>14</sup>:*

Ազատությունից զրկման վայրերի դասակարգումը պայմանավորված է յուրաքանչյուր երկրի համատեքստով, իսկ պետության վերահսկողության ներքո գործող հաստատությունները, որտեղ հնարավոր է ազատությունից զրկումը, դժվար է ընդհանրացնել մեկ սպառնիչ ցանկի ներքո: Նման հաստատություններ կարող են գործել քրեական արդարադատության, առողջապահական, սոցիալական աջակցության և խնամքի, միգրացիոն և այլ ոլորտներում<sup>15</sup>:

ՀՀ օրենսդրությամբ «ազատությունից զրկման վայր» եզրույթի սահմանումը և ազատությունից զրկման վայրերի ցանկը ամրագրված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով<sup>16</sup>, ըստ որի՝ ազատությունից զրկման վայրեր են համարվում

11. Ներպետական իրավակարգավորումներում «գենդերային հիմքով բռնություն» եզրույթի սահմանումից և ինտեգրումից զատ հետազոտության շրջանակում ուսումնասիրվող հիմնախնդրի հասցեագրման տեսանկյունից կարևոր են նաև ազատությունից զրկման վայրերում գենդերային հիմքով բռնության պատասխանատվության սահմանումը և հիմնախնդրի իրավական ճանաչումը: Նշված հարցերին մանրամասն անդրադարձ է արված Բաժին 2-ում:

12. *Stéu* DCAF, OSCE/ODIHR, UN Women, 2019, "Places of Deprivation of Liberty and Gender", in Gender and Security Toolkit (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/a/e/442531.pdf>, *տե՛ս* նաև OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/427448.pdf>

13. *Stéu* UN HRC, 2019, Rights of persons with disabilities (անգլերեն), <https://undocs.org/en/A/HRC/40/54>, Inter-American Commission on Human Rights (IACHR), 2008, Resolution 1/08, Principles and Best Practices on the Protection of Persons Deprived of Liberty in the Americas (անգլերեն), <https://www.refworld.org/docid/48732afa2.html>

14. *Stéu* OHCHR, 2006, Optional Protocol to the Convention against Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (անգլերեն), <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/opcat.aspx>

15. *Stéu* OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/427448.pdf>

16. *Stéu* «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=146435>

1. *ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերը,*
2. *քրեակատարողական հիմնարկները,*
3. *հոգեբուժական կազմակերպությունները,*
4. *կայազորային կարգապահական մեկուսարանները,*
5. *ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները,*
6. *ցանկացած այլ վայր, որտեղ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ, հրամանով կամ ցուցումով, նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ անձը զրկվել է կամ կարող է զրկված լինել ազատությունից, ինչպես նաև ցանկացած այնպիսի վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց դատարանի, վարչական կամ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ թույլտվության»<sup>17</sup>:*

Կարևոր է նաև չչփոթել «ազատությունից զրկման վայր» եզրույթը տեղական համատեքստում կիրառվող «ազատազրկման վայր» եզրույթի հետ: Վերջինս տարբեր աղբյուրներում, ինչպես նաև այս աշխատանքում «քրեակատարողական հիմնարկ» եզրույթին համարժեք է օգտագործվում<sup>18</sup>:

Հիմք ընդունելով միջազգային իրավական չափանիշները և ներպետական օրենսդրությամբ ներկայացված՝ ազատությունից զրկման վայրերի ցանկը՝ սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են **քրեակատարողական հիմնարկները** (այսուհետ՝ նաև ՔԿՀ) **և հոգեբուժական կազմակերպությունները**: Ուսումնասիրման օբյեկտների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առավելապես այս հաստատություններում առկա իրավիճակին և մարդու իրավունքների խնդիրներին են անդրադառնում տեղական աղբյուրները՝ տրամադրելով տվյալ համատեքստերում գենդերային հիմքով բռնության խնդրի քննարկման համար անհրաժեշտ տեսական հիմք:

Հետազոտության շրջանակում ընտրված ազատությունից զրկման վայրերի գործունեությունը կարգավորող առանցքային օրենսդրական ակտերն են ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով<sup>19</sup> սահմանվում է, որ **քրեակատարողական հիմնարկներ են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը** (հոդված 7): Ըստ այդմ՝ հետազոտությունն անդրադառնում է ինչպես դատապարտյալ, այնպես էլ կալանավորված կանանց գենդերային բռնությունից պաշտպանության հարցերին:

17. Պետք է նշել, որ ներկայացված ձևակերպումը համապատասխանում է ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ տրամադրվող սահմանմանը:

18. Ներպետական համատեքստում որպես կալանավորված և դատապարտված անձանց ազատազրկման վայր օգտագործվում է նաև «բանտ» եզրույթը:

19. Տե՛ս «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151448>



Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքով<sup>20</sup> տրվում է **հոգեբուժական կազմակերպության** սահմանումը. «Համապատասխան տեսակի բժշկական օգնություն և սպասարկում հրականացնելու լիցենզիա ունեցող հրավաքանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքային հիմնարկ, որը տրամադրում է հոգեբուժական օգնություն և սպասարկում հիվանդանոցային և (կամ) արտահիվանդանոցային ձևով» (հոդված 3):

1.3. Որո՞նք են ազատությունից զրկված կանանց նկատմամբ գեղեցիկի հիմքով բռնության դրսևորումները, ի՞նչ առանձնահատկություններ ունի տվյալ հիմնախնդիրը. միջազգային աղբյուրների և տեղական համատեքստի դիտարկում:

Ազատությունից զրկման վայրերում կանանց նկատմամբ գեղեցիկի հիմքով բռնությունը բավականաչափ ուսումնասիրված է միջազգային գրականությունում:

Պայմանավորված նրանով, որ ամբողջ աշխարհում կանայք ընդհանուր բանտարկյալների թվի շատ փոքր մասն են կազմում՝ մոտ 2-9%-ը<sup>21</sup>, **քրեակատարողական հաստատությունների** պահման պայմանների, կառավարման քաղաքականությունների և գործելակերպերի ձևավորումը ավանդաբար հենվել է այն ենթադրության վրա, որ դրանք նախատեսված են հետերոսեքսուալ տղամարդկանց հոմոգեն խմբի համար: Սա է պատճառը, որ անգամ կանանց պահման համար նախատեսված որոշակի կարգավորումներ ներդրվել են տղամարդակենտրոն համակարգի տրամաբանությամբ առանց գեղեցիկի ուղղվածության, կանանց և այլ խմբերի առանձնահատկությունների, կարիքների, տարբերվող խոցելիության և նրանց հանդեպ բռնության ռիսկերի գիտակցման<sup>22</sup>:

**Հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշում կայացնողների և հաստատությունների ղեկավարների շրջանում դեռևս առկա են ոլորտի գեղեցիկազգայունացման հանդեպ դիմադրություն և սակավ կարևորվող վերաբերմունք, ինչպես նաև այն թյուրընկալումը, որ բանտերի գեղեցիկազգայուն կառավարումը ոչ թե անհրաժեշտություն է, այլ ոչ արդարացիորեն ցուցաբերվող տարբերակում<sup>23</sup>:**

Այս առումով կարևոր է նշել, որ ոլորտային քաղաքականությունների գեղեցիկազգայունացումը հաշվի է առնում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց ազատազրկման առանձնահատկությունները: Ոլորտային քաղաքականություններում գեղեցիկի խտրականության և բռնության հարցերի թիրախավորումն ուղղված է նաև ազատազրկված տղամարդկանց շրջանում արմատացած և բռնության խթան հանդիսացող առնականության կարծրատիպների, մոտեցումների, դրվածքների և ենթամշակույթների հաղթահարմանը և բոլոր հաստատություններում անվտանգ և արժանապատիվ միջավայրի երաշխավորմանը:

20. Տե՛ս «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144100>

21. Տե՛ս World Prison Brief, 2017, World Female Imprisonment List, fourth edition (անլիներեն), [https://www.prisonstudies.org/sites/default/files/resources/downloads/world\\_female\\_prison\\_4th\\_edn\\_v4\\_web.pdf](https://www.prisonstudies.org/sites/default/files/resources/downloads/world_female_prison_4th_edn_v4_web.pdf)

22. Տե՛ս DCAF, OSCE/ODIHR, UN Women, 2019, “Places of Deprivation of Liberty and Gender”, in Gender and Security Toolkit (անլիներեն), <https://www.osce.org/files/f/documents/a/e/442531.pdf>

23. Տե՛ս Ashdown J., James M., 2010, Women in detention, International Review of the Red Cross, Vol 92(877) (անլիներեն), <https://international-review.icrc.org/sites/default/files/irrc-877-ashdown-james.pdf>

Հետազոտության հավաքած տվյալները փաստում են, որ հայաստանյան համատեքստում ևս քրեակատարողական հիմնարկներում գենդերային բռնության ռիսկերի առկայության, հաստատությունների գենդերազգայուն կառավարման հարցերի շուրջ որոշումներ կայացնողների շրջանում չկա միասնական մոտեցում: Թեպետ վերջիններիս կողմից ընդգծվում է խնդրի կարևորությունը, որոշում կայացնողները, ինչպես նաև հաստատությունների ղեկավար անձնակազմերի ներկայացուցիչները ազատությունից զրկման վայրերում գենդերային բռնության ռիսկերի հասցեագրումը չեն դիտարկում իբրև հրատապ, ոլորտային հիմնահարցերի շրջանակում առաջնահերթ խնդիր:

*«Ուղղակի խնդիրն էդչափ օրհասական չի ՔԿՀ-ների համար, որովհետև քանի տարվա կտրվածքով եթե նայենք, կանանց/աղջիկների նկատմամբ բռնության դեպքեր ես ինքս անձամբ չեմ հիշում»:* (ՀՀ ԱՆ ներկայացուցիչ)

Միևնույն ժամանակ որոշում կայացնողների շրջանում առկա է այն գիտակցումը, որ թեև քրեակատարողական հիմնարկներում գենդերային բռնության դեպքեր չեն արձանագրվել, կա խնդիրը ուսումնասիրելու և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն:

Միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնախնդրի թերի հասցեագրման հիմնական պատճառներից է նաև հաստատություններում գենդերային բռնության դեպքերի քողարկվածությունը:

Առկա հետազոտություններում, մասնավորապես քրեակատարողական հիմնարկներում առանձնացվում են բռնությունները չբարձրաձայնելու, լռության և հանդուրժողականության մի շարք պատճառներ՝ հոգեբանական խոչընդոտները, կարծրատիպները, խարանը և ամոթը, վրեժխնդրության և հաշվեհարդարի վախը, բռնության հետևանքով ինվազիվ բժշկական զննության և հարցաքննությունների ենթարկվելու վախը (հատկապես եթե ազատագրված անձն ունի տրավմաներ՝ պայմանավորված նախկինում գենդերային բռնության հանգամանքով), բռնության՝ որպես պատժի անխուսափելի մասի ընկալումը, բողոքների անկախ և արդյունավետ քննության մեխանիզմների բացակայությունը կամ վստահության պակասը այդ մեխանիզմների նկատմամբ, կալանավորված անձանց շրջանում իրենց իրավունքների մասին իրազեկվածության պակասը, մեղադրանքը ապացուցել չկարողանալը, արդարադատության համակարգի նկատմամբ վստահության պակասը և այլն<sup>24</sup>: Նշվում է, որ հաճախ նաև անձնակազմն է անտեսում խնդիրը՝ անձնակազմի այլ անդամների կամ դատապարտյալների հակազդեցությանը բախվելով<sup>25</sup>:

Բռնության դեպքերի քողարկման հավանականությունը բարձր է նաև հոգեբուժական հաստատություններում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, ինչպես, օրինակ՝ բռնության առնչությամբ պացիենտների բողոքների որակումը իբրև «ոչ հավաստի»: Հետազոտությունները փաստում են, որ երբեմն հենց հաստատությունների աշխատակազմերի և մասնագետների կողմից ոչ հավաստի համարվելու և պատշաճ արձագանքի չարժանանա-

24. *Տե՛ս* OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/427448.pdf>

25. *Տե՛ս* Նույն տեղում, տե՛ս նաև Surrel A., Johnson M., 2020, An Examination of Women's Experiences with Reporting Sexual Victimization Behind Prison Walls, *The Prison Journal*, Vol. 100(5), pp 559-580 (անգլերեն), <https://journals.sagepub.com/doi/10.1177/0032885520956328>

լու հետևանքով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հայտնաձև տվյալները չեն հասնում իրավապահ մարմիններին<sup>26</sup>:

Կանանց հանդեպ բռնությունների քողարկվածությունն, առհասարակ, բնորոշ է բազմաթիվ երկրներին, այդ թվում Հայաստանին<sup>27</sup>: Հատկապես երբ խոսքը փակ, ռեժիմային միջավայրերի մասին է, ինչպես քրեակատարողական հիմնարկները, որտեղ պահվող կանայք անմիջական կախվածության մեջ են վարչակազմից, իսկ նրանց՝ հաստատությունում լինելու փաստն արդեն իսկ հասարակության կողմից խարանի և խտրականության պատճառ է դառնում, բռնության դեպքերը չբարձրաձայնելու հավանականությունն ավելի մեծ է:

Այս առումով տվյալ հետազոտության մասնակիցները (**և՛ փորձագետները, և՛ դիտորդների խմբերի անդամները, և՛ ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչը**) նշում են, որ բռնության/գենդերային բռնության դեպքերի մասին խոսելուց խուսափում են հենց բռնության ենթարկված անձինք՝ ամոթի, վախի, հետագայում խնդիրներ չունենալու, պատժից և հաշվեհարդարից խուսափելու պատճառներով: Հաստատությունները ևս նման դեպքերը չեն բարձրաձայնում իրենց վարկանիշը և համբավը պաշտպանելու մտադրությամբ:

*«Ես միանշանակ կարծում եմ, որ խնդիր է, ուղղակի հենց սա է հարցերից մեկը, որ մենք չենք իմանում, թե ինչ մասշտաբների մասին է խոսքը: Սա մի քողարկված թեմա է, որի մասին ոչ ոք չի խոսում: Ու նաև այն, որ չեն խոսում, դա չի դադարում պորբլեմ լինելուց»:* (Փորձագետ)

*«Ինձ թվում ա, ելնելով նրանից, որ դեպքերը շատ քիչ են ու չեն բարձրաձայնվում, ուրեմն պահվում են թաքուն, այսինքն՝ իրենք չեն ուզում բարձրաձայնել, որովհետև առաջինը իրենց վարկանիշի խնդիրն ա, որպեսզի չիմանան, որ նման դեպքեր են լինում իրենց մոտ»:* (Փորձագետ)

Հարկ է արձանագրել, որ այս հետազոտության շրջանակում թե՛ ստացված տվյալները, թե՛ ուսումնասիրված զեկույցները փաստում են գենդերային բռնության և խտրականության առկայությունը ԼԳԲՏ անձանց, այդ թվում տրանսգենդեր կանանց հանդեպ քրեակատարողական հիմնարկներում: Մնացյալ դեպքերում հիմնականում քննարկվում են հաստատությունների պայմաններին և տարբեր իրավիճակներին առնչվող հարցեր, որոնք կարող են գենդերային բռնության ռիսկեր առաջացնել:

26. St' u Barnet B., 2020, Addressing Sexual Violence in Psychiatric Facilities, Psychiatric Services, Vol 71(9) (անգլերեն), <https://ps.psychiatryonline.org/doi/10.1176/appi.ps.202000038>

27. St' u Shahnazaryan G., Hovhannisyan S., 2019, Women human rights defenders in a new social and political reality of Armenia: Active in the margins, unprotected in the core (անգլերեն), <https://repository.gchumanrights.org/handle/20.500.11825/1026>, Hovhannisyan A., 2017, Sexual Violence Against Women in Armenia: Cultural Norms and the Legislative Challenges, Regional Conference "Combating Violence Against Women in Armenia and Georgia: Sharing Experience and Strategizing on Further Cooperation", Coalition to Stop Violence Against Women, edited by A. Simonyan (անգլերեն), <https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2018/03/combating-violence.pdf?x24321>, ՄԱԿ-ի քնակչության հիմնադրամ, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, 2016, [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY\\_ARM\\_July\\_2017\\_finalized\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf)

Ազատությունից զրկման վայրերում գեղեցիկ բռնության վերաբերյալ տեղեկությունների սակավությունը փորձագետները բացատրում են մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են ոլորտի գեղեցիկագայունության պակասը, հաստատություններում գեղեցիկ բռնությունը ճանաչելու և բացահայտելու կարողությունների պակասը, ինչպես նաև գեղեցիկ բռնության բարձրաձայնման դժվարությունները և ռիսկերը:

**«ՀՀ-ում օրենսդրական կարգավորումներն ընդհանուր են ամբողջ քրեակատարողական համակարգի համար, հետևաբար այդ կարգավորումներից դուրս են մնում կանանց սեռով, խոցելիությամբ պայմանավորված առանձնահատկությունները և ընթացակարգերը»:** (Փորձագետ)

**«Տարբեր իրավիճակներ կամ դեպքեր չեն ընկալվում կամ գիտակցվում որպես խնդիր, որը կարող է բռնության (թե՛ ֆիզիկական, թե՛ սեռական, թե՛ հոգեբանական) ռիսկ առաջացնել ազատագրված կանանց համար»:** (Փորձագետ)

Ինչ վերաբերում է բռնության դեպքերը բարձրաձայնելուն, ապա միջազգային ուսումնասիրություններն արձանագրում են, որ հաստատություններում գտնվող անձանց համար պետք է ապահովվեն ֆորմալ ընթացակարգեր, որոնք վերջիններիս հնարավորություն կտան ցանկացած խնդրի, իրենց հանդեպ վերաբերմունքի կամ պայմանների մասին բողոք ներկայացնելու **ինչպես այդ հաստատության ղեկավարությանը, այնպես էլ արտաքին՝ անկախ մարմինների:** Ընդ որում՝ միջազգային նորմերով կանոններ են սահմանված ինչպես **ընդհանուր բնույթի** դիմումների և բողոքների ներկայացման, այնպես էլ **բռնության** վերաբերյալ բողոքների ներկայացման, մասնավորապես **կանանց կողմից նման բողոքների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ**<sup>28</sup>:

Միջազգային գրականության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ բողոքների, **հատկապես վարչակազմի կողմից բռնության գործադրման վերաբերյալ բողոքների ներկայացումը** կարող է դժվար լինել ազատագրված անձանց տարբեր խմբերի համար՝ պայմանավորված նրանց խոցելիությամբ, իրենց հանդեպ խտրական վերաբերմունքով<sup>29</sup>:

Բողոքների ներկայացման համակարգի արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է ազատությունից զրկված անձանց՝ իրենց իրավունքների, ինչպես նաև բողոքների ներկայացման մեխանիզմների վերաբերյալ **իրազեկվածության աստիճանով:** Կարևոր է, որ բողոք ներկայացնելու մեխանիզմները հասկանալի և պարզ ներկայացվեն

28. *St'u* The Association of Prevention of Torture, 2019, Complaints procedures (անգլերեն), <https://www.ap.torture.ch/en/knowledge-hub/detention-focus-database/safeguards/complaints-procedures>: Ազատությունից զրկման վայրերում գործող բողոքարկման ընթացակարգերը և բողոքների ներկայացման մեխանիզմները, որանց արդյունավետությունը և հասանելիությունը կարևորվում են ինչպես միջազգային չափանիշներում, այնպես էլ տվյալ հետազոտության մասնակիցների կողմից: ՀՀ-ում գործող բողոքարկման ընթացակարգերն առանձին դիտարկման առարկա չեն հանդիսացել սույն հետազոտության շրջանակում, քանի որ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից դրանց համապարփակ գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել առանձին և համակողմանի ուսումնասիրություն, ինչը սույն հետազոտության շրջանակի և ծավալի առումով նպատակահարմար չէ:

29. *St'u* Surrel A., Johnson M., 2020, An Examination of Women's Experiences with Reporting Sexual Victimization Behind Prison Walls, *The Prison Journal*, Vol. 100(5), pp 559-580 (անգլերեն), <https://journals.sagepub.com/doi/10.1177/0032885520956328>, Kubiak S. R., Brenner, H. Bybee, et al. (2017), Sexual Misconduct in Prison: What Factors Affect whether Incarcerated Women will Report Abuse Committed by Prison Staff? *Law and Human Behavior*, 41, pp 361-374 (անգլերեն), <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/28650185/>

ինչպես ազատագրկվածներին, այնպես էլ հաստատության աշխատակիցներին<sup>30</sup>:

Տեղական համատեքստում<sup>31</sup> բողոքների ներկայացման և մասնավորապես բռնության ահազանգման արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտությունը շեշտադրում են հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցներին մասնակցած գրեթե բոլոր փորձագետները:

Փորձագետները նշում են, որ իրենց դիտարկումներով, ընդհանուր առմամբ, **ազատագրկված անձինք խուսափում են վարչակազմի մասին բողոքներ ներկայացնելուց**: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (նաև՝ ՔԿՀ դիտորդների խումբ) անդամների՝ ազատագրկված անձանց շրջանում մտավախություն կա, որ դիտորդների խմբի անդամներին ինչ-որ հարցի շուրջ բողոք ներկայացնելու հետևանքով իրենց հանդեպ բացասական վերաբերմունք կձևավորվի: Հետևաբար վարչակազմի դեմ սովորաբար բողոքներ չեն արձանագրվում: Ինչ վերաբերում է առավել խոցելի խմբերին՝ հաշմանդամություն ունեցող կանանց, տրանսգենդեր կանանց, ապա, ըստ փորձագետների և դիտորդների խմբի անդամների, հաստատություններում նրանք բողոքների ներկայացման մեխանիզմներից օգտվելու ավելի քիչ հնարավորություններ ունեն, քան այլ ազատագրկվածները:

*«Հաճախ նկատել եմ, որ ՔԿՀ-ներում գտնվող մարդիկ, անգամ երբ որ բարձրաձայնում են ինչ-որ խնդիր, թեկուզ, օրինակ, առողջության հետ կապված խնդիր, շատ հաճախ նշում են՝ ես վարչակազմից բողոքներ չունեմ, ես էստեղ բոլորից գոհ եմ՝ երևի ենթադրելով, որ հնարավոր ա՛յդ խնդրի բարձրաձայնումը անդրադառնա վարչակազմի կողմից իր նկատմամբ վերաբերմունքի վրա»:* (ՔԿՀ դիտորդների խմբի անդամ)

Գենդերային բռնության մասին ահազանգելու հետևանքով առաջացած ռիսկերի մասին է շեշտում նաև **ՀՀ արդարադատության նախարարության** (այսուհետ՝ նաև ՀՀ ԱՆ) **ներկայացուցիչը**: Նա նշում է, որ գենդերային բռնության դեպքում խնդիրը բարձրաձայնելը ռիսկեր կարող է պարունակել: Ինչպես փորձագետները, այնպես էլ որոշում կայացնողները նշում են, որ ՔԿՀ-ներում առանձնահատուկ մեխանիզմների ներդրումը բողոքների ներկայացման և ահազանգման գործընթացն առավել արդյունավետ կարող է դարձնել:

30. *Stü* The Association of Prevention of Torture, 2019, Complaints procedures (անգլերեն), <https://www.ap.t.ch/en/knowledge-hub/detention-focus-database/safeguards/complaints-procedures>

31. Հետազոտության շրջանակում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկության համաձայն՝ «Արվյան» ՔԿՀ-ում կալանավորված անձինք և դատապարտյալներն իրավունք ունեն ներկայացնելու իրենց բողոքները ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, ցանկացած պահի: ՔԿՀ-ի յուրաքանչյուր տեղամասում առկա են դիմումներ/բողոքներ ներկայացնելու արկղեր, ընդհանուր 5-ը: Բացի արկղերից՝ կալանավորվածներին պահելու վայրում առկա է 4 հեռախոս, կանանց տեղամասում 5 հեռախոս, որոնցից կարող են ամենօրյա ռեժիմով օգտվել: Հեռախոսների մոտ փակցված են նաև ՄԻՊ-ի և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության թե՛ զծերի հեռախոսահամարները: Աղբյուր՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 12.11.21 թվականի Ե 40/12-4987 գրություն՝ ի պատասխան ՄԻՉԿ-ի հարցման:

*«Հաշվի առնելով այն, որ փակ հաստատությունում են գտնվում [կանայք], որ նմանատիպ դեպքերի բարձրաձայնումն էլ լրացուցիչ ռիսկեր կարող է անձանց մոտ առաջացնել, կարող ենք իհարկե դիտարկել էս հարցը, որովհետև հիմնական ընդհանրական մեխանիզմներն են գործում քրեական հետապնդման մարմնին կամ ՔԿ ծառայողին հաղորդում են ներկայացնում կամ մեզ են դիմում-բողոքներ ներկայացնում: Բայց եթե լինեն այնպիսի կառուցակարգեր, որ շատ ավելի ներհատուկ կլինեն փակ հաստատություններին, որոնք ավելի արդյունավետ կերպով կկարողանան իրականացնել, շատ ավելի լավ կլինի»:* (ՀՀ ԱՆ ներկայացուցիչ)

Ազատագրված կանանց շրջանում բռնության/գենդերային բռնության վերաբերյալ բողոքների ներկայացման մեխանիզմներին անդրադառնալով՝ **փորձագետները և դիտորդական խմբի անդամները շեշտում են իրազեկման կարևորության մասին:**

Ազատությունից զրկված անձանց շրջանում իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացման աշխատանքների հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև **աշխատակազմի բոլոր մակարդակներում գենդերային հիմքով բռնության և խտրականության հարցերի վերաբերյալ վերապատրաստումներ իրականացնել:**

Վերապատրաստումներից զատ կարևոր է, որ հաստատությունների աշխատակազմերի համար սահմանված լինեն **վարքագծի կանոնակարգեր: Արդյունավետ ներքին կանոնակարգերը ազատությունից զրկման վայրերում արժանապատիվ և բռնություններից պաշտպանված միջավայրի ապահովման կարևորագույն գործիքներն են:**

Ուսումնասիրությունները, սակայն, վկայում են, որ հաճախ հաստատությունները, ուշադրությունը ավելի շատ կենտրոնացնելով տեխնիկական խնդիրների վրա և ձգտելով ապահովելու աշխատանքի արդյունավետությունը, անուշադրության են մատնում անձնակազմի աշխատանքի էթիկական և վարքային հարցերը<sup>32</sup>:

Անդրադառնալով ընտրված հաստատություններից **քրեակատարողական հիմնարկներում** գենդերային հիմքով բռնության դրսևորումներին՝ նախ և առաջ պետք է նշել, որ ՔԿ-ներում մի շարք խմբեր պահանջում են առանձնակի ուշադրություն՝ պայմանավորված հատուկ կարիքներով, որոնց անտեսումը բարձրացնում է խոցելի խմբերի նկատմամբ պատիժ կրող այլ անձանց, ինչպես նաև հաստատությունների անձնակազմի կողմից խտրականության, վատ վերաբերմունքի, չարաշահման՝ ներառյալ սեռական բռնության և գենդերային հիմքով բռնության այլ ձևերի գործադրման ռիսկերը<sup>33</sup>: Այդպիսի խմբերի շարքին են դասվում, ի թիվս այլոց, **կանայք, անչափահասներն ու երիտասարդները, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձինք**<sup>34</sup>:

32. *St'u Azemi F.*, 2019, Ethical and Social Justice Issues: The Case of Correctional Institutions, Vol 22(4) (անգլերեն), <https://www.abacademies.org/articles/ethical-and-social-justice-issues-the-case-of-correctional-institutions-8559.html>: Խնդիրը կարևորվել է հետազոտության մասնակիցների կողմից, սակայն էթիկական և վարքագծի կանոնների և դրանց խախտման համար պատասխանատվության վերաբերյալ ներպետական կարգավորումների համապարփակ գնահատումը միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից պահանջում է առանձին հետազոտություն, որի կատարումը դուրս է սույն հետազոտության շրջանակից:

33. *St'u UN*, 2021, UN System Common Position on Incarceration (անգլերեն), [https://www.unodc.org/res/justice-and-prison-reform/nelsonmandelarules-Gof/UN\\_System\\_Common\\_Position\\_on\\_Incarceration.pdf](https://www.unodc.org/res/justice-and-prison-reform/nelsonmandelarules-Gof/UN_System_Common_Position_on_Incarceration.pdf)

34. *St'u* և սույն տեղում:

Ազատությունից զրկված կանանց վերաբերյալ գենդերային հիմքով բռնության հիմնախնդիր ամբողջական անվանագրքի

**Բանտում կանայք կարող են ենթարկվել տարաբնույթ բռնությունների**, այդ թվում՝ բանտապահների կողմից բռնաբարության, սեռական ծառայություններ մատուցելու հարկադրանքի, սեռականացված հպումների: Կին բանտարկյալները հաճախ նաև ենթարկվում են նվաստացուցիչ և ինվազիվ մարմնական զննումների<sup>35</sup>:

Բանտարկյալ կանանց նկատմամբ բռնության դրսևորում է նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումը, երբ, օրինակ, բանտապահները չարաշահում են կանանց՝ իրենց տեսադաշտում պահելու հնարավորությունը՝ հետևելով նրանց հանդերձանքը հանելիս և հագնելիս, լողանալիս և սանհանգույցից օգտվելիս, բժշկական զննում անցնելիս<sup>36</sup>:

Քրեակատարողական հիմնարկներում **անչափահաս աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելումը** օրակարգային է հատկապես այն երկրներում, որտեղ բանտային քաղաքականություններում հաշվի չեն առնվում ազատագրված անչափահասների առանձնահատուկ կարիքները<sup>37</sup>: Պայմանավորված այն հանգամանքով, որ ազատագրված անչափահաս աղջիկները բանտային բնակչության բավական փոքր մասն են կազմում՝ շատ երկրներում անչափահաս աղջիկների բանտախցերը անչափահաս տղաների կամ մեծահասակների համար նախատեսված վայրում են<sup>38</sup>, ինչը անվտանգության և գեղեցիկության բռնության ենթարկվելու ռիսկ է առաջացնում<sup>39</sup>:

### **ԼԳԲՏ անձինք բանտային բնակչության շրջանում առավել խոցելի խումբ են:**

Ուսումնասիրությունները փաստում են, որ լեսբի, գեյ, տրանսգենդեր անձինք բանտերում ենթարկվում են ամենատարբեր չարաշահումների թե՛ վարչակազմերի և թե՛ այլ բանտարկյալների կողմից<sup>40</sup>: Ընդ որում՝ նրանց հանդեպ բռնությունն ու բռնաբարությունները հիմնականում լինում են վարչակազմի թողտվությամբ կամ վերջիններիս՝ բռնության կանխմանն ուղղված քայլեր չձեռնարկելու հետևանքով: Վարչակազմի իմացությամբ են նաև ԼԳԲՏ անձինք բանտերում հաճախ տեղաբաշխվում ամենավատ, ոչ բարվոք և անապահով խցերում՝ սեռական հանցագործությունների համար պատիժ կրող անձանց հետ, ինչն էլ ավելի է բարձրացնում լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս բանտարկյալների նկատմամբ սեռական բռնության ռիսկն ու հավանականությունը<sup>41</sup>:

Միևնույն ժամանակ խնդիրները, որոնց բախվում են **տրանսգենդեր կանայք**, ունեն իրենց առանձնահատկությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տրանսգենդեր կանայք

35. *Stú* OHCHR, 2014, Women and Detention (անգլերեն), [https://www.ohchr.org/Documents/Issues/Women/WRGS/OnePagers/Women\\_and\\_Detention.pdf](https://www.ohchr.org/Documents/Issues/Women/WRGS/OnePagers/Women_and_Detention.pdf), *տն՛ս* նաև UN General Assembly, 2013, Pathways to, Conditions and Consequences of Incarceration for Women (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/Issues/Women/A-68-340.pdf>

36. *Stú* Լույն տեղում:

37. *Stú* UNODC, Children, Victims and Gender in the Criminal Justice System (անգլերեն), <https://www.unodc.org/unodc/en/justice-and-prison-reform/childrensvictimswomensissues.html>

38. *Stú* Liefwaard T., et al., 2014, Report on Violence in Institutions for Juvenile Offenders (անգլերեն), <https://rm.coe.int/european-committee-on-crime-problems-cdpc-council-for-penological-co-o/16806fb1e8>

39. Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ անչափահաս աղջիկների նկատմամբ գեղեցիկության բռնության դեպքերի քանակը (մասնավորապես սեռական բռնության դեպքերի) մի քանի անգամ գերազանցում է տղաների նկատմամբ բռնության դեպքերի քանակը, ընդ որում՝ այդ բռնությունը գործարկվում է թե՛ այլ կալանավորների, թե՛ անձնակազմի կողմից: *Stú* U.S. Department of Justice, 2010, Report on Sexual Victimization in Juvenile Correctional Facilities (անգլերեն), [https://www.ojp.gov/sites/g/files/xyckuh241/files/media/document/panel\\_report\\_101014.pdf](https://www.ojp.gov/sites/g/files/xyckuh241/files/media/document/panel_report_101014.pdf), *տն՛ս* նաև Kanti L., Smith L., 2014, Women and Girls' Experiences Before, During, and After Incarceration: A Narrative of Gender-based Violence, and an Analysis of the Criminal Justice Laws and Policies that Perpetuate this Narrative, UCLA Women's Law Journal, Vol 20(2) (անգլերեն), <https://escholarship.org/content/qt4773j0sp/qt4773j0sp.pdf>

40. *Stú* Jenness V., Sexton L., Sumner J., 2019, Sexual victimization against transgender women in prison: Consent and coercion in context, *Criminology*, Vol 57(4) (անգլերեն), <https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/1745-9125.12221>, *Stú* նաև Alvarez G., Munoz A., 2021, From Victimization to Incarceration: Transgender Women in Costa Rica, *Women & Criminal Justice*, Vol 1(32) (անգլերեն), <https://www.tandfonline.com/doi/citedby/10.1080/08974454.2021.1965066?scroll=top&needAccess=true>

41. *Stú* UN General Assembly, 2013, Pathways to, Conditions and Consequences of Incarceration for Women (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/Issues/Women/A-68-340.pdf>, *տն՛ս* նաև OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/427448.pdf>

մի շարք պետություններում՝ ներառյալ Հայաստանում, պահվում են իրենց կենսաբանական՝ անձնագրում նշված սեռին «համապատասխանող» տղամարդկանց համար նախատեսված հաստատություններում, ինչն ավելի է մեծացնում բռնությունների, սեռական շահագործման ռիսկը: Բանտերում նաև համատարած է տրանսգենդեր կանանց նկատմամբ սեռական ծառայություն մատուցելու, այսպես կոչված մարմնավաճառության շղթայի մեջ ներգրավվելու պարտադրանքը<sup>42</sup>:

**Հոգեբուժական հաստատություններում** կանայք և աղջիկները ևս կարող են բախվել գենդերային բռնության մի շարք ձևերի, ինչպիսիք են սպառնալիքը, ոտնձգությունը, սեռական և ֆիզիկական բռնությունը, գործարքային սեռական հարաբերությունները:

2021 թվականին ավելի քանի 25 երկրում իրականացված ուսումնասիրությամբ «Հյումն Ռայթս Վոչ» (Human Rights Watch) միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը գեկուցել է<sup>43</sup>, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հոգեբուժական հաստատություններում կարող են ենթարկվել բազմաթիվ չարաշահումների, այդ թվում՝ ֆիզիկական և սեռական բռնության<sup>44</sup>:

**Միջազգային մի շարք ուսումնասիրություններ վկայում են ազատությունից զրկման պայմաններում հոգեկան առողջության խնդիր ունեցող կանանց՝ գենդերային հիմքով բռնության ենթարկվելու բարձր ռիսկայնության և խնդիրը պետական քաղաքականությունների ուշադրության կենտրոնում պահելու անհրաժեշտության մասին:** Հետազոտությունները ցույց են տալիս, որ կին պացիենտների պարագայում բռնարարները հիմնականում տղամարդ պացիենտներն են, ինչպես նաև տղամարդ աշխատակիցները և այլ տղամարդիկ, որոնց կանայք ճանաչում են, օրինակ՝ տեսակցության եկած զուգընկերները<sup>45</sup>: Առկա հետազոտություններն անդրադառնում են պացիենտների՝ միմյանց նկատմամբ գենդերային բռնության գործադրմանը հատկապես այն դեպքերում, երբ կին և տղամարդ պացիենտների հոսպիտալացման վայրերը համատեղ են<sup>46</sup>:

2019 թվականին հրապարակված «Կանխելով և հասցեագրելով սեռական և գենդերային հիմքով բռնությունը ազատությունից զրկման վայրերում. ԵԱՀԿ երկրներում գործող չափանիշների, մոտեցումների և օրինակների դիտարկում» հետազոտությունը փաստում է, որ ազատազրկման համատեքստում սեռական և գենդերային հիմքով բռնությունն Էական խնդիր է ԵԱՀԿ տարածաշրջանում (որի մաս է նաև Հայաստանի Հանրապետությունը)<sup>47</sup>:

**ՀՀ քրեակատարողական հիմնարկներում** ազատազրկված անձանց մասին տեղեկության հիմնական աղբյուրները ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում

42. *St'u* UN General Assembly, 2013, Pathways to, Conditions and Consequences of Incarceration for Women (անգլերեն), <https://www.ohchr.org/Documents/Issues/Women/A-68-340.pdf>

43. *St'u* HRW, January 20 2010, Torture and Cruel Treatment in Health Settings (անգլերեն), [https://www.hrw.org/news/2010/01/20/torture-and-cruel-treatment-health-settings?fbclid=IwAR3CED\\_XjW18siVB-P0lCa9YBNF2dB4bsHyl8sKID65OwHng3Div2s2oPTU#](https://www.hrw.org/news/2010/01/20/torture-and-cruel-treatment-health-settings?fbclid=IwAR3CED_XjW18siVB-P0lCa9YBNF2dB4bsHyl8sKID65OwHng3Div2s2oPTU#)

44. *St'u* HRW, 2014, One Billion Forgotten: Protecting the Human Rights of Persons with Disabilities (անգլերեն), [https://www.hrw.org/sites/default/files/related\\_material/2014%20disabilities\\_program\\_low.pdf](https://www.hrw.org/sites/default/files/related_material/2014%20disabilities_program_low.pdf)

45. *St'u* Watson J., Maylea C., Roberts R., Hill N., McCallum S., 2020, Preventing Gender-based Violence in Mental Health Inpatient Units, Research Report (անգլերեն), [https://20ian81kynqg38b3l3eh8bf-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2020/01/ANROWS-Watson-RR-VAW\\_MH\\_Units.pdf](https://20ian81kynqg38b3l3eh8bf-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2020/01/ANROWS-Watson-RR-VAW_MH_Units.pdf)

46. *St'u* Quinn C., Happel B., 2015, Exploring Sexual Risks in a Forensic Mental Health Hospital: Perspectives from Patients and Nurses, Issues in Mental Health Nursing, Vol. 36(9), pp 669-677 (անգլերեն), <https://pubmed.ncbi.nlm.nih.gov/26440869/>, *տե՛ս* նաև: O'Dwyer C., Tarzia L., Fernbacher S., Hegarty K., 2019, Health professionals' experiences of providing care for women survivors of sexual violence in psychiatric inpatient units. BMC Health Services Research, Vol. 19 (անգլերեն), <https://bmchealthservres.biomedcentral.com/articles/10.1186/s12913-019-4683-z>

47. *St'u* OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/4274448.pdf>



րում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և մի շարք հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ նաև ՀԿ) հրապարակած զեկույցներն են:

**Տեղական աղբյուրներն անդրադառնում են ազատության զրկման այնպիսի պայմանների և իրավիճակների, որոնք գենդերային հիմքով բռնության ռիսկեր են առաջացնում, ինչպես նաև ցույց է տրվում, որ կանանց տարբեր խմբերի, մասնավորապես տրանսգենդեր կանանց հանդեպ առկա է հստակ խտրական և վատ վերաբերմունք, նրանց համար ապահով միջավայրի բացակայություն և գենդերային հիմքով բռնության ենթարկվելու բարձր ռիսկայնություն:**

ՀՀ ՄԻՊ-ի 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցն անդրադառնում է ազատազրկված կանանց համար նախատեսված միակ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում **կանանց իրավունքների իրացմանը և նրանց պահման պայմաններին առնչվող մի շարք խնդիրների**, ինչպես, օրինակ՝ **կացարանում պահվող կանանց՝ անընդհատ անմիջական դիտարկման ներքո գտնվելը, հսկիչ կետում ծառայությունն իրականացնող աշխատակիցների կազմում տղամարդկանց լինելը<sup>48</sup>, որոնք կարող են մեծացնել բռնության առաջացման ռիսկը:**

Առկա զեկույցները և հետազոտությունները նաև անդրադառնում են **ԶԿՀ-ներում տրանսգենդեր կանանց նկատմամբ խտրականությանը և տարբերակված վերաբերմունքին**: 2019 թվականի ԶԿՀ դիտորդների խմբի տարեկան զեկույցում նշվում է, որ վերջիններս, որպես կանոն, պահվում են ոչ բարվոք և անմխիթար վիճակում գտնվող խցերում սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց հետ<sup>49</sup>: Իսկ 2020 թվականի տարեկան զեկույցում, մասնավորապես, արձանագրվում է, որ **«Դիտորդների խումբն իր գործունեության ընթացքում բազմիցս բարձրաձայնել է ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դրսևորումների մասին: ԶԿՀ-ներում գտնվող ԼԳԲՏ անձինք ենթարկվում են հոգեբանական ճնշումների, իսկ որոշ դեպքերում սեռական բռնությունների, ոտնձգությունների և շահագործման մյուս ազատազրկված անձանց կողմից: Թե՛ վարչակազմը, թե՛ այլ ազատազրկված անձինք նրանց նկատմամբ դրսևորում են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Խումբը նաև փաստել է, որ նույնասեռականների աշխատանքային շահագործումը ընդունված պրակտիկա է մի շարք ԶԿՀ-ներում»<sup>50</sup>:**

Նշված խնդիրների առկայությունը փաստում է նաև «Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ՀՀ-ում» հետազոտությունը, որն **առանձնակի ուշադրություն է դարձնում տրանսգենդեր կանանց խնդիրներին՝** նշելով, որ իրենց հատուկ կարիքներով պայմանա-

48. Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, 2018, <https://www.ombuds.am/images/files/a18fe372eb128c32e7b10c30c44030d6.pdf>

49. Տե՛ս Սկրտչյան Ա., Չայյան Ա., Հովհաննիսյան Չ. և այլք, ՀՀ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2019 թվականի գործունեության հաշվետվություն, 2020, [http://pmg.am/images/PMG\\_Report\\_2019.pdf](http://pmg.am/images/PMG_Report_2019.pdf)

50. Տե՛ս Չայյան Ա., Սահակյան Ա., Հարությունյան Չ. և այլք, ՀՀ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2020 թվականի գործունեության հաշվետվություն, 2021, [http://www.pmg.am/images/2020\\_SUOTԵԿԱՆ\\_ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ1.pdf?fbclid=IwAR1K6XMyqStTy0gLvTOWPTVg5T-ovOWE6C50vaeXatVogyoLEhduktKTNqc](http://www.pmg.am/images/2020_SUOTԵԿԱՆ_ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ1.pdf?fbclid=IwAR1K6XMyqStTy0gLvTOWPTVg5T-ovOWE6C50vaeXatVogyoLEhduktKTNqc)

վորված՝ այս խումբը հատկապես խոցելի է ինչպես խտրական վերաբերմունքի, այնպես էլ բռնության գործադրման տեսանկյունից<sup>51</sup>:

Տրանսգենդեր կանանց հանդեպ խտրական վերաբերմունքի հիմքում սույն հետազոտության մասնակիցները (և՛ **փորձագետները**, և՛ **ՔԿՀ դիտորդների խմբի անդամները**) տեսնում են տղամարդկանց ՔԿՀ-ներում **քրեական ենթամշակույթի առկայությունը**, ինչպես նաև արմատացած գենդերային կարծրատիպները, առնականության մասին պատկերացումները, հասարակության շրջանում գերակա հոմոֆոբ և տրանսֆոբ մոտեցումները, որոնք անխուսափելիորեն վերարտադրվում են նաև փակ միջավայրերում: Այս ամենով է պայմանավորված նաև ՔԿՀ-ներում տրանսգենդեր կանանց «կանացի» աշխատանքներ «անել տալը», օրինակ՝ «մաքրություն», որը, ըստ այդ մշակույթի կանոնների, անում են միայն «ցածր կարգավիճակ» ունեցող բանտարկյալները: Սակայն, ըստ դիտորդների խմբի անդամների, ՔԿՀ անձնակազմը հաճախ հերքում է նման խնդրի առկայությունը՝ նշելով, որ այդ անձինք իրենք են ընտրում այդ աշխատանքը կատարելը:

*«Դա գալիս ա նաև քրեական ենթամշակույթից, որտեղ ըստ տարբեր աղբյուրների էս անձինք համարվում են թե՛ ամենացածր դաս, թե՛ ցածր դասերից, թե՛ ընդհանրապես ինչ-որ ըստ աղբյուրների չեն մտնում քրեական մշակույթի աստիճանակարգության մեջ»:* (ՔԿՀ դիտորդների խմբի անդամ)

*«Բայց հարցը էն ա, որ էդ աշխատանքը անելը (մաքրություն) համարվում ա կեղտոտ պիտակավորված աշխատանք, ու դա արվում ա էդ խմբի կողմից: Այսինքն՝ էդ կատեգորիայից դուրս այլ մարդ էդ աշխատանքը չի անում»:* (Փորձագետ)

Ըստ փորձագետներից մեկի՝ ՔԿՀ-ներում գերիշխող ենթամշակույթով է պայմանավորված այն, որ տրանսգենդեր կանայք դիտվում են որպես սեռական ծառայություններ մատուցողներ:

Տրանսգենդեր կանանց մասին խոսելիս **որոշում կայացնողները** նույնպես անդրադառնում են քրեական ենթամշակույթին, ինչը ՔԿՀ-ներում կարող է լեգիտիմացնել տարբերվող գենդերային ինքնություն ունեցող ցանկացած անձի հանդեպ բռնությունը: Այս առումով քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեականացումը, ըստ վերջիններիս, հնարավորություն է տվել պայքարելու այդ երևույթի դեմ՝ նպաստելով բռնության կանխարգելմանը:

51. Տե՛ս Հովհաննիսյան Ն., Ազատագրված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ՀՀ-ում, 2021, <https://drive.google.com/file/d/1-T2mqv5ejajzRFu9VE7VVZZXCh8FWkjk/view>

*«Առաջին հերթին մենք քրեականացրինք քրեական ենթամշակույթին առնչվող արարքները, ընդ որում՝ պետք է նշեմ, որ դրական վիճակագրություն ունենք այս մասով... Ձեր ասած հիերարխիկ կառուցվածքը էդ ընդգծված քրեական ենթամշակույթին բնորոշ է, որովհետև իրենք են էդպես աստիճանակարգում անձանց՝ օրենքով գող, քրեական հեղինակություն և, բնական է, ստորին մակարդակում գտնվող անձինք, որոնք իրենց համար ընդունելի չեն...»:* (ՀՀ ԱՆ ներկայացուցիչ)

**ՀՀ-ում գործող հոգեբուժական կազմակերպություններում առկա** իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրներ են տարբեր տարիներին ՀՀ ՄԻՊ-ի հրապարակած զեկույցները և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի զեկույցը: 2021 թվականից գործում է նաև հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ նաև Հոգեբուժական կազմակերպություններում դիտորդների խումբ):

Ըստ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 2017 թվականին հրապարակած զեկույցի՝ սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և բուժման ծառայություններ տրամադրող հաստատություններում մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են մարդու իրավունքների խախտումների՝ ներառյալ դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստեր, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեբանական բռնություններ, անձի իրավունքների պաշտպանության հնարավորությունների բացակայություն և այլն: Չեկույցը նաև ընդգծում է, որ հոգեբուժական կազմակերպություններում նշված խնդիրների պատճառներից են անձնակազմի ոչ պատշաճ պատրաստվածությունը, ֆինանսական ոչ բավարար միջոցների հատկացումը և, ընդհանուր առմամբ, փակ և ինստիտուցիոնալ կառույցն ինքնին<sup>52</sup>:

«Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ ՄԻՊ-ի 2018 թվականի արտահերթ զեկույցում<sup>53</sup> **կանանց առանձնահատուկ կարիքներին, ինչպես նաև նրանց հանդեպ բռնության խնդրին առանձին անդրադարձ չի արվում**, սակայն նշվում է, որ ՀՀ-ում գործող հոգեբուժական կազմակերպություններում բռնության ռիսկ առաջացնող խնդիրներից մեկը դրանց գերբնակեցվածությունն է: Հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկումների արդյունքներով խնդիրներ են արձանագրվել նաև տրամադրվող բժշկական սպասարկման, անձնակազմի մասնագիտական հմտությունների, շենքային պայմանների, արտաքին աշխարհի հետ կապի ապահովման, կենցաղային պայմանների, տեղա-

52. Տե՛ս Թեմուրյան Ս., Սաքունց Ա., Տեղեկանք Սպիտակի խնամքի տուն. Ինստիտուցիոնալ համակարգից անցում համայնքաժողովի ծառայության, 2017, <http://archive.hcav.am/wp-content/uploads/2017/04/%D5%8D%D5%BA%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF-%D5%AD%D5%B6%D5%A1%D5%B4%D6%84%D5%AB-%D5%BF%D5%B8%D6%82%D5%B6-1.pdf?fbclid=IwAR3I3-siygXiUz4BriAL7XNVF1GJLdlzatkrZ5AYV8PrGfzghHu9elGmPaw>

53. Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, 2018, <https://www.ombuds.am/images/files/7fc26e97e3c21aaaeac56743c7b4aef7.pdf>

շարժման խնդիրներ ունեցող անձանց խնամքի և այլ հարցերում<sup>54</sup>: ՀՀ ՄԻՊ-ի 2021 թվականի տարեկան զեկույցում նշվում է նաև պացիենտների հանդեպ տարբերակված մոտեցման և վատ վերաբերմունքի դեպքերի մասին, երբ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար պացիենտներին տեղափոխել են մեկուսացման համար սենյակ<sup>55</sup>: ՄԻՊ-ը արձանագրել է նաև հոգեբուժական կազմակերպություններում պացիենտների զսպման միջոցների կիրառման կարգի խախտումներ՝ ռետինե լարանների, ամուր կտորներից պատրաստված գործիքների օգտագործում<sup>56</sup>:

ՄԻՊ-ի՝ 2022 թվականի «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» զեկույցի համաձայն՝ **հոգեբուժական կազմակերպություններում արձանագրվել են նաև վնասվածքները չգրանցելու և իրավապահ մարմիններին չհայտնելու դեպքեր: Մասնավորապես, ըստ զեկույցի, նման խնդիրները մանրամասն չեն արձանագրվում և հաղորդվում են ըստ հաստատության հայեցողության, ինչը խոչընդոտում է այդպիսի դեպքերի կանխարգելումն ու պատշաճ քննությունը**<sup>57</sup>:

Այս համատեքստում զեկույցում շեշտվում է **ապահիստիտուցիոնալացված ծառայությունների անհրաժեշտությունը**, որոնք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հնարավորություն կտան ստանալու համապատասխան օգնություն՝ առանց հասարակությունից մեկուսանալու<sup>58</sup>:

Անդրադառնալով հոգեկան առողջության կենտրոններին՝ հետազոտության մասնակիցները (**որոշում կայացնողները և հոգեբուժական կազմակերպությունների ներկայացուցիչները**) նշում են, որ թեպետ **հոգեբուժական կազմակերպություններում առկա են մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներ, սակայն դրանք գենդերային ասպեկտով մինչ այժմ չեն դիտարկվել**:

Ըստ **հոգեբուժական կազմակերպությունների ներկայացուցիչների՝** բռնության դեպքեր լինում են ինչպես պացիենտների միջև, այնպես էլ պացիենտների կողմից անձնակազմի հանդեպ:

Ինչ վերաբերում է անձնակազմի կողմից պացիենտների հանդեպ բռնությանը, ապա կենտրոնների ներկայացուցիչները նման դեպքերի առկայությունը բացառում են:

54. Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց, 2021, <https://www.ombuds.am/images/files/11f00f3e87d3490e4e8c56f207e4bc85.pdf>

55. Տե՛ս նույն տեղում:

56. Տե՛ս նույն տեղում:

57. Տե՛ս ՀՀ ՄԻՊ, Արտահերթ հրապարակային զեկույց հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, 2022, <https://www.ombuds.am/images/files/cdc79ed63e188008962836823aa696ab.pdf>

58. Տե՛ս նույն տեղում:

*«Նման դեպքեր ընդհանրապես չեն էլ եղել, վերջին 20 տարվա մեջ համենայն դեպս, և չի կարող լինել, որովհետև վերահսկողություն է իրականացվում, և կամերաներն էլ կան, շուրջօրյա մենք հետևում ենք, թե ինչ ա կատարվում բաժանմունքներում, և պերսոնալն էլ խստիվ հետևում ա բոլոր հրամաններին, որոնք որ ներքին իրավական ակտերում են»:* (Հոգեբուժական կազմակերպության ներկայացուցիչ)

Հոգեբուժական կազմակերպություններում անձանց հանդեպ բռնության դեպքերի մասին, սակայն, փաստում են այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների ներկայացուցիչները, քանի որ բռնություն գործադրվել է իրենց կենտրոնների շահառուների հանդեպ, երբ նրանք գտնվել են հոգեբուժական կազմակերպությունում: Այս առումով խմբային տների ներկայացուցիչները նշում են հաստատություններում վախի մթնոլորտի, պացիենտների միջև իշխող հարաբերությունների և բռնությունների սադրանքի մասին, որոնք նաև խրախուսել է հաստատությունների անձնակազմը:

*«Երբ եկան, շատ վախեցած էին: Առաջին շաբաթվա ընթացքում մեր շահառուներից մեկն իր բաժակը զցեց ջարդեց և այնպիսի մի աղմուկ բարձրացրեց, այնպես վատ էր զգում, իրեն թվում էր, որ մենք հիմա բաժակը ջարդելու համար իրեն պատժելու ենք կամ չզգիտեմ ինչ ենք անելու»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

*«Չեմ ուզում որևէ հաստատության մասին վատ խոսել, բայց եղել են բռնության դեպքեր: Որ պատմում էին, սկզբի շրջանում ես շատ վատ էի զգում, թե ոնց են իրենց ծեծել, նույնիսկ նշաններ կային իրենց վրա: Հիմնականում իրար դեմ տրամադրելով, մեկը մեկի միջոցով էին ծեծել. այսինքն՝ անմիջականորեն հաստատությունների անձնակազմից չէին բռնությունը գործադրել, այլ մեկին լարել էին մյուսի դեմ և այդպես էին ծեծել: Նման շատ դեպքեր իրենք պատմում էին»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

*«Ունեցել ենք նաև դեպքեր, երբ մեր շահառուները եկել էին և իրար ծեծում էին: Կար իրենց մեջ լիդեր, ով մի հայացքով հասկացնում էր՝ «այս մի՛ ասա, այն մի՛ արա, հեսա ես կգամ, քեզ կխփեմ»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Հարկ է նաև ավելացնել, որ, ըստ որոշ փորձագետների և այլընտրանքային (ոչ պետական) խմբային տներից մեկի ներկայացուցչի, հոգեբուժական հաստատություններում պացիենտների հանդեպ տարիներ առաջ ավելի շատ բռնություն էր գործադրվում, քան հիմա:

Ներկայումս բռնության դեպքերը չեն բացառվում, սակայն դրանք ավելի քիչ են հանդիպում:

Ընդհանուր առմամբ, հոգեբուժական կազմակերպություններում առկա խնդիրների, խտրականության, բռնության հարցերի քննարկման համատեքստում ինչպես միջազգային, այնպես էլ հայաստանյան համատեքստում **կարևորվում է հոգեկան առողջության ոլորտի ապահովագրության հնարավորությունները: Ինստիտուցիոնալացման շարունակականությունը ապահովող քաղաքականություններից հրաժարումը դրված է նաև հոգեկան առողջության ոլորտի համատեքստում սույն հետազոտության հիմնախնդրի քննարկման հիմքում:**

# Ամփոփում և արձանագրումներ (Բաժին 1)

Հայաստանում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդիրը պահանջում է խորքային անդրադարձ և կարևորում ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական դերակատարների կողմից:

Հետազոտության շրջանակում հավաքված տվյալները փաստում են, որ որոշում կայացնողների և ուսումնասիրված հաստատությունների ներկայացուցիչների շրջանում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության ռիսկերի հասցեագրումը առաջնահերթ չի դիտարկվում, ինչը բռնության դեպքերի քողարկման և հիմնախնդիրն առնչվող մի շարք հարցերի շարունակական անտեսման վտանգ է առաջացնում: Բռնության առնչվող դեպքերի քողարկման և հիմնախնդիրն առնչվող հարցերի անտեսման հետևանքով առկա չեն նաև ուսումնասիրված հաստատություններում գենդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

«Գենդերային հիմքով բռնություն» կամ «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն» եզրույթներն ուղղակիորեն նախատեսված չեն ներպետական իրավական ակտերում: **Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանել «գենդերային հիմքով բռնություն» եզրույթը միջազգային չափանիշներին, մասնավորապես Ստամբուլյան կոնվենցիային համապատասխան:** Մինևույն ժամանակ պետք է ապահովել «գենդերային հիմքով բռնություն» եզրույթի հետագա ինտեգրումը բոլոր վերաբերելի իրավական ակտերում:

**Ուսումնասիրված հաստատություններում ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդիրը մշտապես պետք է լինի պետական դերակատարների ուշադրության կենտրոնում և որպես առաջնահերթություն ընդգրկվի ոլորտային քաղաքականություններում:**

Ի տարբերություն միջազգային գրականության՝ հայաստանյան համատեքստում չկան հետազոտություններ, որոնց նպատակն անմիջականորեն ազատությունից զրկման վայրերում բռնության և գենդերային բռնության հիմնահարցերը վերհանելը և ուսումնասիրելն է: Տեղական հետազոտություններից և զեկույցներից մի քանիսն անդրադառնում են քրեակատարողական հիմնարկներում և հոգեբուժական կազմակերպություններում գոյություն ունեցող խնդիրներին, արձանագրում են նաև բռնության դեպքերի ամկայությունը կամ անդրադառնում այնպիսի իրավիճակների, որտեղ առկա են բռնության ռիսկեր, սակայն ուղղակիորեն չեն թիրախավորում այդ հաստատություններում գենդերային բռնությունը և միտված չեն տվյալ հիմնահարցի առանձնացված ուսումնասիրմանը:

**Կարևոր է, որ թե՛ ուսումնասիրված հաստատություններում արտաքին մշտադիտարկում իրականացնող կառույցները, թե՛ ոլորտային հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները, փորձագետները և հետազոտողները իրենց գործունեության շրջանակներում շարունակաբար անդրադառնան ազատությունից զրկված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդիրն՝ բարձրացնելով դրա տեսանելիությունն ու հասցեագրման անհրաժեշտությունը:**

Հայաստանյան ԶԿՀ-ներում գենդերային հիմքով բռնության հանդեպ հատկապես խոցե-

լի են ԼԳԲՏ անձինք, այդ թվում՝ տրանսգենդեր կանայք: Ինչպես տվյալ հետազոտության շրջանակում հավաքված տվյալները, այդպես էլ ՔԿՀ դիտորդների խմբի տարբեր տարիների արձանագրումները փաստում են քրեակատարողական հիմնարկներում գտնվող ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանի, խտրականության, բռնության և նվաստացնող վերաբերմունքի, սեռական և այլ շահագործման առկայության մասին: ԼԳԲՏ անձանց նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք են դրսևորում ոչ միայն ազատազրկված մյուս անձինք, այլև վարչակազմը:

**Հարկ է շեշտել, որ քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց, այդ թվում՝ տրանսգենդեր կանանց պահման պայմաններին առնչվող խնդիրների, նրանց նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, խտրականության, սեռական բռնությունների, շահագործման և ոտնձգությունների արձանագրումը ՔԿՀ դիտորդների խմբի կողմից նշանակում է, որ պատասխանատու պետական մարմինները, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, տեղեկացված են խնդրի մասին:**

Ազատազրկված կանանց համար նախատեսված միակ քրեակատարողական հիմնարկում «Աբովյան» ՔԿՀ-ում, ՀՀ ՄԻՊ-ը արձանագրել է բռնության ռիսկեր առաջացնող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կացարանում պահվող կանանց՝ տղամարդ անձնակազմի կողմից անընդհատ անմիջական դիտարկման ներքո գտնվելը, հսկիչ կետում ծառայությունն իրականացնող աշխատակիցների կազմում տղամարդկանց լինելը:

**Պատասխանատու պետական մարմինները պետք է հետևողական քայլեր ձեռնարկեն ազատազրկված կանանց, այդ թվում՝ կանանց առավել խոցելի խմբերի և մասնավորապես տրանսգենդեր կանանց նկատմամբ խտրականության, բռնության և շահագործման ռիսկերի գնահատման և հասցեագրման ուղղությամբ, այդ թվում՝ հասարակությունում և քրեակատարողական հիմնարկներում նրանց նկատմամբ խտրականության և բացասական վերաբերմունքի, ՔԿՀ-ներում գերիշխող առնականացված մթնոլորտի, խոր արմատացած գենդերային կարծրատիպների, տրանսֆոբիայի, հոմոֆոբիայի և քրեակատարողական հիմնարկներում առկա ենթամշակույթով և դրվածքներով «արտոնվող»՝ խոցելի խմբերի նկատմամբ բռնության թողտվության և անպատժելիության մթնոլորտի վերացման միջոցով:**

Ուսումնասիրված ազատությունից զրկման վայրերում գործող բողոքարկման ընթացակարգերն ու բողոքների ներկայացման մեխանիզմները, դրանց արդյունավետությունը և հասանելիությունը կարևորվում են ինչպես միջազգային աղբյուրներում, այնպես էլ տվյալ հետազոտության մասնակիցների կողմից: ՀՀ-ում գործող բողոքարկման ընթացակարգերն առանձին դիտարկման առարկա չեն հանդիսացել սույն հետազոտության շրջանակում, քանի որ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից դրանց համապարփակ գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել առանձին և համակողմանի ուսումնասիրություն, ինչը սույն հետազոտության շրջանակի և ծավալի առումով նպատակահարմար չէ: **Համապատասխան ուսումնասիրության և վերհանված խնդիրների հիման վրա անհրաժեշտ կլինի մշակել ընտրված հաստատություններում ազատությունից զրկված անձանց (հատկապես բռնության և/կամ խտրականության ենթարկվելու տեսանկյունից խոցելի խմբերի ներկայացուցիչների կողմից) բողոքների, մասնավորապես գենդերային հիմքով բռնության դեպքերով բողոքների ներկայացման համակարգի բարելավմանն ուղղված իրավակարգավորումներ և իրականացնել**

Ամփոփում և արձանագրումներ (Բաժին 1)



**այդ համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և գործողություններ:**

Ազատությունից զրկման պայմաններում բռնության/գեներային բռնության դեպքերի բացահայտման համատեքստում առանցքային են **ինչպես այնտեղ գտնվող կանանց՝ իրենց իրավունքների և բողոքների ներկայացման մեխանիզմների մասին իրազեկումը, այնպես էլ որոշում կայացնողների և ուսումնասիրված հաստատությունների ղեկավարների կողմից գեներազգայուն մոտեցումների որդեգրումը, քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտներում կանանց հետ աշխատող անձանց շրջանում գեներազգայուն վերապատրաստումների իրականացումը:**

Որոշում կայացնողների կողմից առանձնակի ուշադրություն պետք է դարձվի նաև քրեակատարողական և հոգեկան առողջության ոլորտներում կանանց հետ աշխատող անձանց էթիկական և վարքագծային հարցերին: Էթիկական և վարքագծի կանոնների և դրանց խախտման համար պատասխանատվության վերաբերյալ ներպետական կարգավորումների համապարփակ գնահատումը միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից ևս պահանջում է առանձին հետազոտություն, որի կատարումը դուրս է սույն հետազոտության շրջանակից: **Նշված հարցերի վերաբերյալ խորքային ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ կլինի մշակել միջազգային չափանիշներին համահունչ իրավակարգավորումներ և դրանց արդյունավետ իրականացման գործիքներ:**

Հայաստանյան հոգեբուժական կազմակերպություններում ևս առկա են պացիենտների նկատմամբ բռնության, խտրականության, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և իրավունքների խախտումների դեպքեր: Սա փաստում են ինչպես տեղական զեկույցները, այնպես էլ սույն հետազոտության մասնակիցները: **Հոգեբուժական կազմակերպություններում առկա խնդիրների, խտրականության, բռնության կանխարգելման հարցերի դիտարկման առումով ինչպես միջազգային, այնպես էլ հայաստանյան համատեքստերում, այդ թվում՝ սույն հետազոտության շրջանակում, առաջադրվում են հոգեկան առողջության ոլորտի ապահովման հիմնական հրամայականը և տեսլականը:**

## Բաժին 2

# Ազատությունից զրկման պայմաններում գենդերային հիմքով բռնության համար պատասխանատվության սահմանում և հիմնախնդրի իրավական ճանաչում

Ազատությունից զրկված անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության, այդ թվում՝ նրանց նկատմամբ բռնության կանխարգելման առումով պետություններն ունեն պարտավորություններ, որոնք սահմանված են ՄԱԿ-ի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրով, ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիաներով<sup>59</sup>: Թվարկված փաստաթղթերում ամրագրված առանցքային սկզբունքներն ու իրավունքները նաև մասնավորեցվել և հստակեցվել են «փափուկ իրավունքի» կամ առավել կանոնակարգային փաստաթղթերի շրջանակներում, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրերի հիման վրա գործող կոմիտեների և հատուկ ընթացակարգերի տրամադրած մեկնաբանություններում:

Միջազգային փաստաթղթերի ամփոփ ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հետազոտության շրջանակում ընտրված հիմնախնդրի հասցեագրման առումով առաջնային են ազատությունից զրկման պայմաններում գենդերային հիմքով բռնության համար պատասխանատվության սահմանումը և դրա՝ իբրև հիմնախնդրի իրավական ճանաչումը:

Ըստ այդմ տվյալ բաժնում նախ կուսումնասիրենք գենդերային բռնության համար պատասխանատվության սահմանում պահանջող միջազգային իրավական նորմերը և կքննարկենք ազատությունից զրկման պայմաններում գենդերային հիմքով բռնության տարաբնույթ դրսևորումների համար ներպետական իրավական սանկցիավորման հարցերը:

Բաժինն այնուհետև կանդրադառնա ներպետական իրավակարգավորումներում հիմնախնդրի ճանաչմանը՝ դիտարկելով ընտրված հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերում և վերաբերելի ներպետական քաղաքականություններում և ռազմավարություններում բռնության և/կամ գենդերային հիմքով բռնության կանխարգելման դրույթների առկայության հարցերը:

59. ՄԱԿ-ի մարդու իրավունքների գործիքներից գատ, պետությունների համար համապատասխան պարտավորություններ են սահմանված նաև մարդու իրավունքների տարածաշրջանային փաստաթղթերով, մասնավորապես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին», «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիաներով:

2.1. Արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ ամրագրում ստացել են ազատությունից զրկման պայմաններում գենդերային հիմքով բռնության համար պատասխանատվության սահմանման՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում տեղ գտած պահանջները:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր N 35 Ընդհանուր հանձնարարականում<sup>60</sup> շեշտում է, որ միջազգային իրավական պրակտիկայի զարգացման արդյունքում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության բացառումը ձեռք է բերել սովորության միջազգային իրավունքի սկզբունքի կարգավիճակ՝ ըստ այդմ պարտավորություններ առաջացնելով բոլոր պետությունների համար:

Կանանց հարցերով կոմիտեն այնուհետև հստակեցնում է, որ կանանց՝ «գենդերային բռնությունից զերծ ապրելու իրավունքը անքակտելի է մարդու այլ իրավունքներից, այդ թվում կյանքի, առողջության, անձի անվտանգության... խոշտանգումներից, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքներից»:

**Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականն առանցքային է գենդերային հիմքով բռնության համար պետության պատասխանատվության շրջանակի հստակեցման առումով:**

Այս կապակցությամբ Կանանց հարցերով կոմիտեն շեշտում է, որ «...պետությունները պատասխանատվություն են կրում ինչպես բոլոր պետական մարմինների գործողությունների և բացթողումների, այնպես էլ բոլոր ոչ պետական՝ երրորդ կողմերի գործողությունների և բացթողումների համար», և որ «պետությունները պարտավոր են ընդունել գենդերային բռնության բոլոր դրսևորումները արգելող օրենսդրություն... որը պետք է լինի տարիքային և գենդերային առումով զգայուն և տրամադրի արդյունավետ իրավական պաշտպանություն, ներառյալ սանկցիավորումը և փոխհատուցումը»:

Կանանց հարցերով կոմիտեն պետություններին կոչ է անում հատկապես երաշխավորելու, որ ֆիզիկական, սեռական և հոգեբանական անձեռնմխելիությունը խախտող գենդերային հիմքով բռնության բոլոր տեսակները քրեականացված են, ինչպես նաև արձանագրում է, որ [ազատությունից զրկված] կանանց նկատմամբ գենդերային բռնությունը կարող է որակվել իբրև խոշտանգում կամ այլ դաժան կամ անմարդկային վերաբերմունք<sup>61</sup>:

խոշտանգումների կանխարգելման համատեքստը, առհասարակ, առանցքային է ազատությունից զրկման պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ներդրման առումով, և պետությունների համար առաջնային ուշադրության առարկա պետք է լինի ազատությունից զրկման պայմաններում **խոշտանգումների, դաժան և անմարդկային վերաբերմունքի** կանխարգելման արդյունավետ գործիքակազմերի ներդրումը:

60. Տե՛ս UN Committee on the Elimination of Discrimination Against Women (CEDAW), 2017, CEDAW General Recommendation No. 35 on gender-based violence against women, updating general recommendation No. 19 (անգլերեն), <https://undocs.org/CEDAW/C/GC/35>

61. Տե՛ս նույն տեղում:

Խոշտանգումների արգելքն ամրագրված է միջազգային<sup>62</sup> և տարածաշրջանային<sup>63</sup> բազմաթիվ փաստաթղթերում<sup>64</sup>: Մասնավորապես «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան<sup>65</sup> (այսուհետ՝ նաև Խոշտանգումների դեմ կոնվենցիա) սահմանում է, որ խոշտանգում է համարվում «*ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք*»՝ հետապնդելով հետևյալ **նպատակներից** մեկը կամ դրանք համատեղ՝ **խոստովանություն կորզելը, պատիժը, ահաբեկումը/հարկադրանքը, կամ «ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով խտրականությունը»**:

Հիմք ընդունելով անձին խոշտանգումների ենթարկելու՝ խտրականությամբ պայմանավորված բաղադրիչը՝ գենդերային հիմքով բռնությունը (հատկապես բռնաբարությունը և սեռական բռնությունը), համաձայն մարդու իրավունքների պայմանագրային մարմինների պրակտիկայի, ևս կարող է դիտարկվել իբրև խոշտանգում:

Կանանց հարցերով կոմիտեն այս կապակցությամբ շեշտում է, որ «...մարդու իրավունքների պայմանագրային մարմիններն ու հատուկ ընթացակարգերը պետք է ցուցաբերեն գենդերազգայուն մոտեցումներ՝ որոշելիս, թե արդյոք գենդերային հիմքով բռնության արդյունքում կնոջը պատճառված ցավն ու տառապանքը հանդիսանում են խոշտանգում և այլ նվաստացնող վերաբերմունք...»<sup>66</sup>:

Ինչպես արդեն նախորդիվ ներկայացվեց, ազատությունից զրկման պայմաններում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության տարածված դրսևորումներից են բռնաբարությունը և սեռական բռնությունը, այդ թվում՝ բռնաբարության սպառնալիքները, սեռականացված հպումը, «կուսության ստուգումը», մերկացումը, մարմնի ինվազիվ գնությունները, սեռական բնույթի վիրավորանքները և նվաստացումը:

Բռնաբարության և սեռական բռնության և խոշտանգումների միջև կապին է անդրադառնում Խոշտանգումների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2016 թվականի զեկույցը, որտեղ նաև նաև առանձնակի շեշտվում է **ազատությունից զրկման պայմաններում կանանց, անչափահաս աղջիկների, լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց՝ խոշտանգումների ենթարկվելու բարձր ռիսկերի առկայությունը և ըստ այդմ՝ ազատությունից զրկման վայրերում խոցելի խմբերի պաշտպանության խնդրի առաջնահերթությունը**:

Այսպիսով՝ գենդերային հիմքով բռնության համար իրավական պատասխանատվության սահմանման՝ միջազգային նորմերով առաջադրվող առանցքային պահանջներից է բխում

62. Խոշտանգումների արգելքը սահմանված է ՄԱԿ-ի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով (հոդված 7), «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով (հոդված 2), «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայով (հոդված 7), «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով (հոդված 15) և այլն:

63. *Տե՛ս*, օրինակ, «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիան, «Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին» աֆրիկյան խարտիան, «Մարդու իրավունքների մասին» արաբական խարտիան, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան:

64. Տվյալ արգելքը նաև համապարտադիր կիրառման ենթակա նորմ է (*jus cogens*), այսինքն՝ խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից զերծ լինելու իրավունքը պետք է կիրառվի առանց որևէ բացառության կամ սահմանափակման: *Տե՛ս* Wet E., 2004, The Prohibition of Torture as an International Norm of *jus cogens* and its Implications for National and Customary Law (անլվերեն), <http://www.ejil.org/pdfs/15/1/349.pdf>

65. Հայաստանի համար կոնվենցիան ուժի մեջ է 1993 թվականից (*տե՛ս* <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60506>), իսկ Կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականից (*տե՛ս* <https://www.arlis.am/documentview.aspx?docID=31421>):

66. *Տե՛ս* UN Committee on the Elimination of Discrimination Against Women (CEDAW), 2017, CEDAW General Recommendation No. 35 on gender-based violence against women, updating general recommendation No. 19 (անլվերեն), <https://undocs.org/CEDAW/C/GC/35>

ինչպես դրա դրսևորման ձևերի (հատկապես ֆիզիկական, սեռական և հոգեբանական անձեռնմխելիությունը խախտող գենդերային հիմքով բռնության բոլոր տեսակների) քրեականացումը, այնպես էլ իբրև խոշտանգում կամ այլ դաժան կամ անմարդկային վերաբերմունք որակելու համար իրավական հիմքերի ապահովումը և համապատասխան իրավակիրառ պրակտիկայի զարգացումը<sup>67</sup>:

Վերոգրյալի ներքո, անդրադառնալով հայաստանյան համատեքստին, անհրաժեշտ է նախ **իրավական վերլուծության ենթարկել ՀՀ-ում գենդերային բռնության դրսևորման ձևերի համար իրավական պատասխանատվություն սահմանող նորմերը և գնահատել այդ ձևերի իրավական սանկցիավորման լիարժեքությունն ու ամբողջականությունը**<sup>68</sup>:

Այնուհետև անհրաժեշտ է պարզել, թե **ՀՀ քրեական օրենսգրքում առկա են արդյոք իրավական հիմքեր գենդերային բռնությունը որպես խոշտանգում դիտարկելու և համապատասխանաբար իրավական սանկցիա կիրառելու համար**:

Իրավական պատասխանատվություն սահմանող ՀՀ իրավանորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային բռնության դրսևորման ձևերի իրավական սանկցիավորումն ամրագրված է **միայն քրեական պատասխանատվության շրջանակում**: Իրավական սանկցիավորումը տեղ է գտել ՀՀ քրեական օրենսգրքի<sup>69</sup> համապատասխան հոդվածներում, որոնք պատասխանատվություն են նախատեսում կյանքի (155, 156, 159, 162, 163, 164-րդ հոդվածներ) և առողջության (166, 167, 168, 170, 171-րդ հոդվածներ) (օրինակ՝ սպանությունը, առողջությանը ծանր վնաս պատճառելը, առողջությանը թեթև վնաս պատճառելը և այլն), սեռական կյանքի ու սեռական անձեռնմխելիության (198-202-րդ հոդվածներ) (օրինակ՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը և այլն), ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (188, 189, 192, 194, 195, 196-րդ հոդվածներ) (օրինակ՝ հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը և այլն) համար<sup>70</sup>:

Վարչաիրավական պատասխանատվության միջոցների տեսանկյունից **գենդերային բռնության որևէ դրսևորում որևէ կերպ հասցեագրված չէ**<sup>71</sup>:

Մինևույն ժամանակ, գենդերային բռնության դրսևորման ձևերի քրեաիրավական սանկցիավորման տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգրքի և Ստամբուլյան կոնվենցիայի (որին անդրադարձ է արվել Բաժին 1-ում) համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

67. Հատուկ զեկուցողը նաև շեշտել է, որ հատկապես նախնական կալանքի ընթացքում կանայք խոշտանգումների և վատ վերաբերմունքի ռիսկի տակ են, քանի որ սեռական բռնությունը կարող է օգտագործվել որպես հարկադրանքի և խոստովանություններ ստանալու միջոց: Տե՛ս UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, 5 January 2016, A/HRC/31/57 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/56c435714.html>

68. Կոիտարկվեն միայն այն կարգավորումները, որոնք կիրառելի են սույն հետազոտության շրջանակում ընտրված հաստատություններում գենդերային բռնության հնարավոր դրսևորումների դեպքում՝ հաշվի առնելով այդպիսի դրսևորումների երկու մակարդակ: 1) հաստատությունների վարչակազմի և այդտեղ պահվող անձանց միջև հարաբերություններում, 2) հաստատությունում պահվող անձանց միջև հարաբերություններում: Հարկ է նաև նշել, որ իրավական սանկցիավորման վերլուծության շրջանակում առանձին անդրադարձ չի արվում անչափահասների նկատմամբ գենդերային բռնության դրսևորումների հասցեագրմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս առանձին ծավալուն ոլորտ է և առանձին հետազոտության առարկա պետք է լինի: Բացի այդ՝ իրավական սանկցիավորման խնդրի քննարկումը չի անդրադառնում նաև քրեական պատասխանատվության միջոցների համաչափության վերլուծությանը, որը ևս առանձին հետազոտության առարկա է:

69. Հիմք է ընդունվել 2021 թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը, որն ուժի մեջ է մտնելու 2022 թ. հուլիսի 1-ից, տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>

70. Հարկ ենք համարում նշել, որ միջազգային չափանիշներին համապատասխան՝ գենդերային բռնության դրսևորման բոլոր ձևերի համար պատասխանատվության սահմանման վերաբերյալ վերլուծությունը դուրս է սույն հետազոտության շրջանակից:

71. Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155155>

1. **ՀՀ քրեական օրենսգրքը ընդհանուր առմամբ գենդերային առումով չեզոք է:** Այն չի ճանաչում բռնության որոշ տեսակների գենդերային բնույթը և չի հասցեագրում գենդերային բռնությունը որպես գենդերային խտրականության դրսևորում: **ՀՀ քրեական օրենսգրքում գենդերային հիմքով հանցանքի կատարումը որպես հանցանքի համար քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք սահմանված չէ:** ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (սպանություն՝ հոդված 155, առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ հոդված 166, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը՝ հոդված 167, մարդուն առևանգելը՝ հոդված 191, ազատությունից ապօրինի զրկելը՝ հոդված 192, հոգեկան ներգործությունը՝ հոդված 194, ֆիզիկական ներգործությունը՝ հոդված 195, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ հոդված 196), որպես արարքի համար քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, սահմանում են, ի թիվս այլևի, *հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը*: Սակայն վերոթվարկյալ հոդվածներում գենդերը կամ սեռը որպես ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթի հիմք սահմանված չէ, թեև կանանց նկատմամբ բռնությունը հաճախ հիմնվում է գենդերային հիմքով ատելության վրա և գենդերային խտրականության դրսևորման ձև է: Որպես սեռով պայմանավորված ծանրացուցիչ հանգամանք՝ հանդես է գալիս միայն հղիությունը (հանցանքը հղի կնոջ նկատմամբ կատարելը):
2. **Ստամբուլյան կոնվենցիայով սահմանված գենդերային բռնության ոչ բոլոր ձևերն են քրեականացված:** Մասնավորապես **տնտեսական բռնությունը, կանանց սեռական օրգանների խեղումը, հետամտումը (stalking), սեռական ոտնձգությունը (sexual harassment) սահմանված չեն որպես քրեորեն պատժելի արարքներ:** **Սեռական ոտնձգության** իրավական արգելքը սահմանված է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով<sup>72</sup>, սակայն դրա **խախտման համար վարչաիրավական պատասխանատվություն և սահմանված չէ:**
3. **Հասկացության առումով** առկա է անհամապատասխանություն ՀՀ քրեական օրենսգրքով և Ստամբուլյան կոնվենցիայով «բռնություն» հասկացության սահմանումների միջև: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն, բռնություն է «այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը», մինչդեռ Ստամբուլյան կոնվենցիան սահմանում է բռնության ոչ միայն ֆիզիկական, այլև սեռական, տնտեսական և հոգեբանական դրսևորումները:
4. ՀՀ նոր քրեական օրենսգրքով առաջին անգամ քրեականացվել է **խտրականությունը (203-րդ հոդված):** Այն սահմանվել է որպես *տարբերակված վերաբերմունքի դրսևորում, որը ոտնահարում է անձի պատիվն ու արժանապատվությունը կամ*

72. Տե՛ս «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, հոդված 6, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138982>

իրավունքներն ու ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով: Սույն հոդվածի իրավակիրառ պրակտիկան ՀՀ քրեական օրենսգրքի՝ ուժի մեջ մտնելուց հետո կարող է առանձին հետազոտության առարկա դառնալ՝ հաշվի առնելով սեռով պայմանավորված խտրականության հիմքով արարքների որակման հնարավորությունը: **Բացի այդ՝ առանձին դիտարկման առարկա կարող է դառնալ «անձնական բնույթի այլ հանգամանք» ձևակերպումը հաշմանդամության, ինչպես նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորման տեսանկյունից:**

Այսպիսով՝ ներպետական իրավակարգավորումներով հետազոտության շրջանակում ընտրված հաստատությունների համատեքստում գենդերային հիմքով բռնության դրսևորումներն իրավական սանկցիավորման են ենթարկվել միայն ՀՀ քրեական օրենսգրքով: Ընդ որում՝ իրավական սանկցիավորման են ենթարկված գենդերային հիմքով բռնության ոչ բոլոր ձևերը: Բացի այդ՝ կան դրսևորման ձևեր, ինչպես, օրինակ՝ սեռական ոտնձգությունը, որոնք արգելված են որպես վարքագիծ, սակայն սանկցիավորման ենթարկված չեն:

Ինչ վերաբերում է խոշտանգումների կանխարգելման համատեքստի դիտարկմանը, առաջին հերթին կարևորվում է խոշտանգումների դեմ կոնվենցիայով սահմանված «խոշտանգում» հասկացության լիարժեք ինկորպորացիան ներպետական օրենսդրության մեջ: Մասնավորապես, խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն, «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն խոշտանգման համար, որը սահմանվում է որպես «պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

Նոր քրեական օրենսգրքով խոչտանգման համար քրեական պատասխանատվություն է սահմանված 450-րդ հոդվածով, որի համաձայն՝ խոչտանգումը սահմանված է որպես «պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրոշմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

**Ինչպես երևում է սահմանումներից, երկու դեպքում էլ «ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով» ձևակերպումը տեղ է գտել արարքի դիսպոզիցիայում: Հետևաբար գենդերային խտրականության հիմքով խոչտանգման դեպքում արարքը քրեորեն պատժելի համարելու իրավական հիմքերն առկա են ինչպես գործող, այնպես էլ նոր քրեական օրենսգրքում:**

Անհրաժեշտ իրավական հիմքերի առկայության պարագայում կարևորվում է համապատասխան իրավակիրառ պրակտիկայի դիտարկման հարցը: Մասնավորապես կարևորվում է այն, թե արդյոք «ցանկացած բնույթի խտրականություն» հասկացությունը պրակտիկայում, ի թիվս այլնի, մեկնաբանվել է որպես գենդերային հիմքով խտրականություն, արդյոք եղել են հանցագործությունների որակման դեպքեր և համապատասխանաբար՝ դատական ակտեր:

Քանի որ գործող քրեական օրենսգրքում 309.1-ին հոդվածն ամրագրվել է 2015 թվականի հունիսի 9-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69-Ն օրենքով<sup>73</sup>, հետևաբար անհրաժեշտ է դիտարկել ամրագրումից ի վեր ձևավորված պրակտիկան:

Հանցագործությունների որակման առումով պրակտիկան պարզելու նպատակով հարցում է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե, որով, ի թիվս այլնի, տեղեկություն է հայցվել 2016, 2017, 2018, 2019, 2020 և 2021 թվականների ընթացքում տեղի ունեցած սեռական բռնության դեպքերի քանակի մասին, որոնք քննչական կոմիտեն որակել է ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածով որպես խոչտանգում «ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»՝ հստակեցնելով նաև յուրաքանչյուր դեպքում խտրականության հիմքը: **Ստացված պատասխանի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում նման հաշվառումներ չեն իրականացվում:**

Համաձայն Datalex դատական ակտերի որոնողական համակարգի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 15-ին ԵԴ/0558/01/18 գործով<sup>74</sup> ընդունել է առաջին ևախադեպային որոշումը, որտեղ ՀՀ Վճռաբեկ դատարանը միջազգային փաստաթղթերում և Եվրոպական դատարանի ևախադեպային իրավունքում տեղ գտած դիրքորոշումներին համապատասխան վելուծության է ենթարկել խոչտանգման հանցակազմի հատկանիշները: Այս ևախադեպային որոշման հիման վրա քրեակատարողական հիմնարկում պահվող անձի

73. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=98839>

74. Տե՛ս Դատական գործ N: ԵԴ/0558/01/18, «Datalex» դատական ակտերի որոնողական համակարգ, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=45880421203875238](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203875238)



Նկատմամբ քրեակատարողական ծառայողների կողմից գործադրված բռնությունը որակվել է որպես խոշտանգում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն, և նշանակվել է համապատասխան պատիժ: Դատական վերոնշյալ նախադեպային որոշումը կարևոր է քրեակատարողական հիմնարկներում գործադրված բռնության դեպքերը որպես խոշտանգում որակելու իրավակիրառ պրակտիկայի ձևավորման տեսանկյունից:

Վերոշարադրյալի հիման վրա **առաջարկում ենք.**

- Քրեականացնել գենդերային հիմքով բռնության բոլոր ձևերը, որոնց կատարման համար, միջազգային իրավական նորմերի, մասնավորապես Ստամբուլյան կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից ձևավորված պրակտիկայից բխող պահանջների համաձայն, պետք է սահմանվի քրեական պատասխանատվություն:
- Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման հիման վրա համապատասխան սանկցիաներ սահմանել գենդերային բռնության դրսևորման այն ձևերի համար, որոնց դեպքում քրեական պատասխանատվության սահմանումը միջազգային նորմերի համաձայն պարտադիր չէ:
- Փոփոխության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետը և բռնության սեռական, տնտեսական և հոգեբանական դրսևորումները ևս ներառել «բռնություն» հասկացության մեջ:
- ՀՀ քրեական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և սահմանել գենդերային հիմքով հանցանքի կատարումը որպես հանցանքի համար քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Նախաքննության և հետաքննության մարմիններում իրականացնել վերապատրաստման կարիքների գնահատում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածով հանցագործությունների որակման առանձնահատկությունների առումով և կազմակերպել համապատասխան վերապատրաստումներ՝ գենդերային խտրականության հիմքով խոշտանգման դեպքերը նույնականացնելու և դրանք ՀՀ ՔՕ 309.1-ին հոդվածով որակելու կարողությունների զարգացման նպատակով:

## 2.2. Արդյո՞ք ներպետական իրավակարգավորումներով ճանաչում է ստացել կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության հիմնախնդիրը:

Ազատությունից զրկված կանանց բռնությունից պաշտպանության խնդրի ճանաչումն ու դրան ուղղված իրավակարգավորումների ապահովումը ենթադրում են հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերում և վերաբերելի ներպետական քաղաքականություններում և ռազմավարություններում գենդերային հիմքով բռնության կանխարգելման դրույթների առկայություն և հաստատությունների կառավարման գենդերազգայուն մոտեցումների ներդրում:

**Ի տարբերություն հաստատությունների կառավարման չեզոք՝ ոչ գենդերազգայուն մոտեցման (gender-neutral approach)՝ գենդերազգայուն մոտեցումն (gender responsive approach) արձանագրում է, որ.**

- *Նույնական վերաբերմունքը չի նշանակում հավասար վերաբերմունք*. գենդերային բաղադրիչի անտեսումը և ազատությունից զրկված անձանց նկատմամբ նույնական վերաբերմունքը՝ անկախ նրանց սեռից, սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, չի հանգեցնում ազատությունից զրկման պայմաններում գտնվող անձանց տարբեր խմբերի հանդեպ հավասար վերաբերմունքի:
- *Գենդերազգայունացումը գենդերային հավասարության ապահովման համընթաց պահանջ է*. գենդերազգայուն մոտեցումը ճանաչում է ազատությունից զրկման պայմաններում անձանց սոցիալական դերակատարումներով, հնարավորություններով, փոխազդեցություններով պայմանավորված տարբերությունները և դրանց հասցեագրման անհրաժեշտությունը ոլորտային բոլոր ծրագրերում և քաղաքականություններում<sup>75</sup>:
- Ազատությունից զրկման վայրերին վերաբերող քաղաքականություններն ու գործելակերպերը պետք է ձևակերպվեն ոչ թե հաստատված չեզոք/տղամարդակետորն քաղաքականությունների «հարմարեցման», այլ դրանց հիմնովին վերանայման միջոցով՝ ազատազրկման պայմաններում գտնվող յուրաքանչյուր խմբի կարիքները հաշվի առնելով և նրանց հետ խորհրդակցելով<sup>76</sup>:

Ազատությունից զրկման վայրերի գենդերազգայուն կառավարումը նպաստում է հաստատություններում կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելմանը, **քանի որ այն ենթադրում է իբրև քրեակատարողական հիմնարկներում (և այլ հաստատություններում) ապահով միջավայրի ձևավորման քաղաքականության անբաժանելի մաս դիտարկել նաև գենդերայնացված անվտանգությունը (gendered safety)**: Գենդերայնացված անվտանգությունն, ըստ այդմ, ներառում է ֆիզիկական (այդ թվում սեռական), հոգեբանական, սոցիալական (փոխհարաբերությունների մակարդակում) և բարոյական (վարչակազմի և ղեկավար օղակների վարվելաձևերի և որդեգրված գործելակերպերի մակարդակում) անվտանգության ձևերը, իսկ դրա ապահովումը պահանջում է, ի թիվս այլնի, վարչակազմի վարքագծի, մոտեցումների, նրանց շրջանում առկա՝ ազատությունից զրկված կանանց (հատկապես տրանսգենդեր կանանց պարագայում) նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն, կարծրատիպային մոտեցումների հաղթահարում, ինչը, հատկապես, բանտերում գենդերային հիմքով սեռական բռնության բարձր ցուցանիշներ արձանագրող բազմաթիվ հետազոտություններով արձանագրված է իբրև էական ուշադրություն պահանջող խնդիր<sup>77</sup>:

Վերոգրյալի համատեքստում ներպետական մակարդակում առաջնային դիտարկման են ենթակա քրեակատարողական հիմնարկների և հոգեբուժական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերը և դրանցում գենդերային հիմքով բռնության հարցերի հասցեագրվածության աստիճանը:

Այս նպատակով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի<sup>78</sup>, «Քրեակատարողական ծառայութ-

75. *Տե՛ս* DCAF, OSCE/ODIHR, UN Women, 2019, “Places of Deprivation of Liberty and Gender”, in Gender and Security Toolkit (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/a/e/442531.pdf>

76. *Տե՛ս* նույն տեղում:

77. *Տե՛ս* նույն տեղում:

78. *Տե՛ս* ՀՀ քրեակատարողական օրենսգրքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136431>

յան մասին» ՀՀ օրենքի<sup>79</sup>, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի<sup>80</sup> և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի<sup>81</sup> ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **իրավական ամրագրում է ստացել բռնության ընդհանուր արգելքը, ոչ թե գենդերային հիմքով բռնության կիրառման արգելքը:**

Բռնության ընդհանուր արգելքի առումով իրավական ամրագրումն իրականացվել է հետևյալ կերպ.

1. **Ազատությունից զրկման վայրերի գործունեության, դրա կարգավորման այնպիսի իրավական սկզբունքների ամրագրման միջոցով, ինչպիսիք են մարդասիրությունը, օրինականությունը, օրենքի առջև հավասարությունը, անձի արժանապատվությունը հարգելու խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի սկզբունքները:** Նշված սկզբունքները տեղ են գտել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 6-րդ հոդվածում և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասում:
2. **Ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց նկատմամբ բռնության կիրառման/խոշտանգման ուղղակի արգելքի ամրագրման միջոցով.** օրինակ՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է գործադրել ֆիզիկական բռնություն, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ»: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար»:
3. **Ազատությունից զրկման վայրում պահվող անձի՝ բռնությունից զերծ լինելու, արժանապատվությունը չնվաստացնող վերաբերմունք ստանալու իրավունքի և տվյալ հաստատության՝ բռնության վերաբերյալ իրավապահ մարմիններին անհապաղ տեղեկացնելու պարտավորության ամրագրման միջոցով:** Մասնավորապես, «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. «Հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալու իր նկատմամբ բարեկիրթ, մարդասիրական և արժանապատվությունը չնվաստացնող վերաբերմունք», և նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է... հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման կամ ենթադրյալ բռնությունների վերաբերյալ գանգատների դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին»:

79. Տե՛ս «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=151448>

80. Տե՛ս «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=43743>

81. Տե՛ս «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=144100>

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում օրենքով առանձին կարգավորման են ենթարկված **քրեակատարողական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելու վերաբերյալ իրավահարաբերությունները**<sup>82</sup>: Նույն կերպ, իրավակարգավորման են ենթարկված **հոգեբուժական կազմակերպություններում ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման կարգն ու պայմանները**<sup>83</sup>: Այսպիսով՝ թեպետ ոլորտային օրենքներում ազատությունից զրկված վայրերում բռնությունը, արժանապատվության նվաստացումը և խոշտանգումը դիտարկվել են որպես հիմնախնդիր, ինչը դրական է գնահատվում, առկա կարգավորումները, սակայն, չեն պարունակում գենդերային առումով հատուկ՝ կանանց նկատմամբ բռնության դրսևորումների և գենդերային հիմքով բռնության կանխարգելման շեշտադրումներ և ամրագրումներ<sup>84</sup>:

Անդրադառնալով հայեցակարգային և ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերին և դրանցում հիմնախնդիր արտացոլվածության աստիճանին՝ անհրաժեշտ է նախ ուսումնասիրել հայեցակարգային և ռազմավարական այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստում հավանության արժանացած «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 23 արձանագրային որոշումը<sup>85</sup>, «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1334-Լ որոշումը:

Տվյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **ՀՀ իրավակարգավորումների շրջանակում ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնությունը, որպես հիմնախնդիր և առաջնահերթություն, հատուկ իրավական ամրագրում չի ստացել, և հետևաբար Կառավարությունը մինչ այժմ չի մշակել և չի իրականացրել գործողություններ և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեին ազատությունից զրկված վայրերում գենդերային բռնության կանխարգելմանն ու իրավական հասցեագրմանը**:

Պետության գենդերային քաղաքականությունն ուղենշող առանցքային փաստաթղթերից գատ, դիտարկվել են նաև վերաբերելի հայեցակարգային փաստաթղթերը և ռազմավարությունները<sup>86</sup>, որոնց ամփոփ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում ևս առկա չեն գենդերային շեշտադրումներ և ազատությունից զրկված պայմաններում կանանց գենդերային հիմքով բռնությունից պաշտպանությանը վերաբերող ձևակերպումներ:

Այսպիսով՝ **ՀՀ ներպետական իրավակարգավորումների շրջանակում ազատությունից**

82. Տե՛ս «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 14-րդ գլուխ:  
 83. Տե՛ս «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, 7-10-րդ հոդվածներ:  
 84. Իրականացվող վերլուծության նպատակով դիտարկվել է նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (2013 թ.), որը թեպետ իբրև նպատակ է սահմանում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը և կանանց ու տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, սակայն չի պարունակում գենդերային հիմքով բռնության վերաբերյալ որևէ ուղղակի ձևակերպում կամ շեշտադրում:  
 85. Տե՛ս «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրին, ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, <https://www.irtek.am/views/act.aspx?tid=61530>  
 86. Այս նպատակով դիտարկվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշումը, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 1601-Լ որոշումը:

զրկված կանանց նկատմամբ բռնությունը՝ որպես հիմնախնդիր և առաջնահերթություն, հատուկ իրավական ամրագրում չի ստացել: Այն արտացոլված չէ ո՛չ պետության գեղեցիկ քաղաքականությունն ուղեկցող առանցքային հայեցակարգային փաստաթղթերում, ո՛չ ոլորտային ռազմավարություններում և ո՛չ էլ հետազոտության շրջանակում ընտրված ազատությունից զրկման վայրերի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում:

Ըստ այդմ հայաստանյան համատեքստում հիմնախնդրի համալիր իրավական ճանաչման նպատակով **առաջարկում ենք՝**

- Ապահովել ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի իրավական ինտեգրումը ոլորտային օրենքներում:
- Ամրագրել ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնությունը որպես հիմնախնդիր և առաջնահերթություն ինչպես գեղեցիկ քաղաքականության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ռազմավարություններում:
- Մշակել և իրականացնել ազատությունից զրկման պայմաններում կանանց նկատմամբ գեղեցիկ քաղաքական հիմքով բռնության կանխարգելմանն ուղղված թիրախային գործողություններ (օրինակ՝ փոփոխություններ իրավական կարգավորումներում, բողոքների ներկայացման գործուն մեխանիզմների ներդրում, համապատասխան անձնակազմի գեղեցիկ քաղաքականացում և վերապատրաստում, ուղեցույցների մշակում և այլն):

### 2.3. Արդյո՞ք բռնության դեպքերի վիճակագրության վարման վերաբերյալ ներպետական իրավակարգավորումները գեղեցիկ քաղաքական են:

Սույն հարցադրմանը պատասխանելու համար ուսումնասիրվել է «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշումը<sup>87</sup>: Սույն որոշման մեջ վիճակագրության ներկայացման համար սահմանված է, ի թիվս այլնի, մարդու դեմ ուղղված հանցագործությունների քանակը, որտեղ առանձնացված են առանձին հոդվածներով կատարված հանցագործությունների քանակները, **սակայն այդ հանցագործությունները կատարողի և տուժողի սեռի, սեռական կողմնորոշման և գեղեցիկ քաղաքականության հանդեպ ունեցած ցուցանիշ սահմանված չէ: Սահմանված չեն նաև կատարված հանցագործությունների՝ ըստ ազատությունից զրկման վայրերի հաշվառման ցուցանիշներ:**

**Նշված ցուցանիշների բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել՝**

- **բռնությամբ կատարվող հանցագործությունների ընդհանուր թվաքանակում կին տուժողների, այդ թվում՝ տարբերվող գեղեցիկ քաղաքականության և սեռական կողմնորոշում ունեցող կանանց,**

87. Տե՛ս «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=45009>

- բռնությամբ կատարվող հանցագործությունների ընդհանուր թվաքանակում իգական և արական սեռի կատարողների թվային հարաբերակցությունը,
- գենդերային հիմքով կատարված բռնությունների տեսակարար կշիռը՝ ընդհանուր բռնարարքների քանակի համեմատությամբ,
- ազատությունից զրկման վայրերում կատարված գենդերային հիմքով բռնության դեպքերի տեսակարար կշիռը՝ գենդերային հիմքով կատարված բռնության դեպքերի ընդհանուր քանակի համեմատությամբ:

Հարկ է նշել, որ իրավակիրառ պրակտիկան ձևավորվել է ըստ սահմանված ցուցանիշների, և բռնության դեպքերի վերաբերյալ գենդերազգայուն վիճակագրություն, ըստ էության, **չի վարվում, և համապատասխան տեղեկություն չի տրամադրվում**: Այդ մասին են վկայում սույն հետազոտության շրջանակում ՀՀ ոստիկանությանը և ՀՀ քննչական կոմիտեին ներկայացված հարցադրումների վերաբերյալ պատասխանները<sup>88</sup>:

Այսպիսով, հիմնվելով վերոնշյալի վրա, **առաջարկում ենք** վերանայել ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշումը և ապահովել բռնության դեպքերի վերաբերյալ վերոնշյալ գենդերազգայուն ցուցանիշների ներդրումը վիճակագրության վարման կարգում:

88. Աղբյուր՝ ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության 27.07.2021 թվականի N 5/4-2-754 և ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության 05.01.2022 թվականի գրություններ՝ ի պատասխան ՄԻՀԿ-ի հարցման:

# Առաջարկներ (Բաժին 2)

## Սույն բաժնում տեղ գտած վերլուծության արդյունքում առաջարկում ենք.

1. Քրեականացնել գեղդերային հիմքով բռնության բոլոր ձևերը, որոնց կատարման համար, միջազգային իրավական նորմերի, մասնավորապես Ստամբուլյան կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից ձևավորված պրակտիկայից բխող պահանջների համաձայն, պետք է սահմանվի քրեական պատասխանատվություն:
2. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման հիման վրա համապատասխան սանկցիաներ սահմանել գեղդերային բռնության դրսևորման այն ձևերի համար, որոնց դեպքում քրեական պատասխանատվության սահմանումը միջազգային նորմերի համաձայն պարտադիր չէ:
3. Փոփոխության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետը և բռնության սեռական, տնտեսական և հոգեբանական դրսևորումները ևս ներառել «բռնություն» հասկացության մեջ:
4. ՀՀ քրեական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և սահմանել գեղդերային հիմքով հանցանքի կատարումը որպես հանցանքի համար քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
5. Նախաքննության և հետաքննության մարմիններում իրականացնել վերապատրաստման կարիքների գնահատում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-ին հոդվածով հանցագործությունների որակման առանձնահատկությունների առումով և կազմակերպել համապատասխան վերապատրաստումներ՝ գեղդերային խտրականության հիմքով խոշտանգման դեպքերը նույնականացնելու և դրանք ՀՀ ՔՕ 309.1-ին հոդվածով որակելու կարողությունների զարգացման նպատակով:
6. Ապահովել ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի իրավական ինտեգրումը ոլորտային օրենքներում:
7. Ամրագրել ազատությունից զրկված կանանց նկատմամբ բռնությունը որպես հիմնախնդիր և առաջնահերթություն ինչպես գեղդերային հավասարության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ռազմավարություններում:
8. Մշակել և իրականացնել ազատությունից զրկման պայմաններում կանանց նկատմամբ գեղդերային հիմքով բռնության կանխարգելմանն ուղղված թիրախային գործողություններ (օրինակ՝ փոփոխություններ իրավական կարգավորումներում, բողոքների ներկայացման գործուն մեխանիզմների ներդրում, համապատասխան անձնակազմի գեղդերազգայունացում և վերապատրաստում, ուղեցույցների մշակում և այլն):
9. Վերանայել ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշումը և ապահովել բռնության դեպքերի վերաբերյալ գեղդերազգայուն ցուցանիշների ներդրումը վիճակագրության վարման կարգում:

## Բաժին 3

# Հիմնախնդրի հասցեագրում քրեակատարողական ոլորտի համատեքստում

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում բանտարկյալների հետ վարվեցողության և նրանց իրավունքների պաշտպանության ուղեկիշային փաստաթղթերի ձևակերպումը սկիզբ է առնում 1957 թվականից՝ **ՄԱԿ-ի բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների**<sup>89</sup> ընդունմամբ:

1957 թվականի ՄԱԿ-ի՝ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների վերանայման արդյունքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան **2015 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունեց Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ վերանայված կանոնները («Նելսոն Մանդելայի կանոններ»)**<sup>90</sup>: «Նելսոն Մանդելայի կանոնները» (այսուհետ՝ նաև ՆՄԿ) ոլորտային ուղեկիշային փաստաթուղթ է:

Բանտային կանոնների՝ գեղեցիկագույնացման առումով առանցքային զարգացում է 2010 թվականին **Բանտարկյալ կանանց հետ վարվեցողության և այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնների («Բանգկոկի կանոններ»)**<sup>91</sup> ընդունումը: «Բանգկոկի կանոնները» (այսուհետ՝ նաև ԲԿ) կոչված է կանանց բանտարկության նվազեցման և նրանց հանդեպ այլընտրանքային պատժամիջոցների կիրառմանը՝ հաշվի առնելով կանանց և նրանց երեխաների վրա բանտարկության վնասակար հետևանքները: «Բանգկոկի կանոնները» նաև պարունակում է բանտային պայմաններում կանանց պահման և կանանց հետ վարվեցողության կանոնների, նրանց հանդեպ բռնության ռիսկերի նվազեցման և բանտարկության պայմաններում նրանց իրավունքների պաշտպանության նորմեր և պահանջներ: «Բանգկոկի կանոններով»՝ իբրև ընդհանուր կիրառման կանոն արձանագրվում է, որ **խտրականության բացառման սկզբունքի պահպանումը պետություններից պահանջում է հասցեագրել այն մարտահրավերները, որոնց բախվում են բանտարկյալ կանայք, և հաշվի առնել նրանց կարիքների գեղեցիկագույն բաղադրիչը:**

Հարկ է նշել, որ թեպետ վերոնշյալ գործիքները<sup>92</sup> «փափուկ իրավունքի» աղբյուրներ են, դրանց կիրարկումն ու դրանցում արձանագրված սկզբունքների և նորմերի հարգումը **պարտադիր են** պետությունների համար, քանի որ փաստաթղթերից յուրաքանչյուրն ինքնին հղում է կատարում պարտադիր իրավական ուժ ունեցող մարդու իրավունքների վերա-

89. *St/UNODC*, United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, 30 August 1955 (անգլերեն), <https://www.hrw.org/legacy/advocacy/prisons/un-smrs.htm>

90. *St/UN* UN General Assembly, United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Mandela Rules), 29 September 2015 (անգլերեն), [https://www.un.org/ga/search/view\\_doc.asp?symbol=A/C.3/70/L.3](https://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/C.3/70/L.3)

91. *St/UN* UNODC, United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders with their Commentary (the Bangkok Rules), 2010 (անգլերեն), [https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Bangkok\\_Rules\\_ENG\\_22032015.pdf](https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Bangkok_Rules_ENG_22032015.pdf)

92. Նշվածներից զատ՝ ՄԱԿ-ի համակարգում ազատագրված անձանց իրավունքներին անդրադարձող փաստաթղթերի շարքն են դասվում նաև ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («Պեկինյան կանոններ», 1985 թ.), Որևէ ձևով ձերբակալվող կամ ազատագրվող անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն (1988 թ.), Որևէ ձևով ձերբակալվող կամ ազատագրվող անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի ժողովածուն (1990 թ.): Այս փաստաթղթերի ուսումնասիրումը դուրս է տվյալ հետազոտության շրջանակից:



բերյալ միջազգային պայմանագրերին, իսկ դրանց հարգումն ու տեղայնացումը բխում են ազատագրկման վայրերում կանանց իրավունքների, այդ թվում նրանց՝ գեղեցիկ հիմքով բռնությունից և խտրականությունից պաշտպանության պետությունների պարտավորությունից:

Բանտային կանոնների սահմանման կարևոր աղբյուր են նաև Եվրոպայի խորհրդի ընդունած մի շարք հանձնարարականներ և բանաձևեր<sup>93</sup>:

Մասնավորապես **Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2-rev հանձնարարականը**<sup>94</sup>, լինելով տարածաշրջանային կարգավորման կարևորագույն աղբյուրը, Են անդամ պետություններից պահանջում է, ի թիվս այլնի, հատուկ ջանքերի գործադրում բանտում կանանց ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական ոտնձգությունից պաշտպանության ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ԼԳՏՏ անձանց, նրանց նկատմամբ ազատագրկման ընթացքում արժանապատիվ վերաբերմունքի պահանջը սահմանվում է **«Սեռական կողմնորոշման և գեղեցիկ ինքնության հարցերին մարդու իրավունքների միջազգային իրավունքի կիրառման Յոգյակարտայի սկզբունքներով»** (այսուհետ՝ նաև «Յոգյակարտայի սկզբունքներ»):

Այսպիսով՝ քրեակատարողական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերը ծավալուն են, և դրանց խորքային ուսումնասիրումը կարևոր է ազատությունից զրկված անձանց համար պաշտպանված և արժանապատիվ միջավայրի ապահովման համար: Վերոգրյալ փաստաթղթերում արտացոլված չափանիշները և դրույթները նաև փոխլրացնող են, դրանք բոլորն իբրև առանցքային հիմնարար ուղեցույց են ճանաչում «Նեյսոն Մանդելայի կանոնները», իսկ կանանց ներհատուկ կարիքների և խնդիրների հասցեագրման առումով՝ «Բանգկոկի կանոնները»:

Ըստ այդմ տվյալ բաժնում և հաջորդիվ ներկայացվող վերլուծությամբ կանդրադառնանք նշված փաստաթղթերում տեղ գտած և հիմնախնդրի հասցեագրման առումով առավել առանցքային կարգավորումներին՝ հիմնականում կենտրոնանալով «Նեյսոն Մանդելայի կանոններով» և «Բանգկոկի կանոններով» սահմանվող պահանջների և դրանց՝ հայաստանյան համատեքստում տեղայնացման, համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման և գործելակերպերի որդեգրման հարցերի վրա:

Հաջորդիվ կանդրադառնանք ԹԿՀ-ներում, մասնավորապես հիմնարկ ընդունման փուլում ռիսկերի գեղեցիկագայուն գնահատման, բանտարկության ընթացքում գեղեցիկ բռնության կանխարգելման առումով առանցքային նշանակություն ունեցող՝ պահման պայմանների և վարվեցողության, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների՝ գեղեցիկագայուն վերապատրաստումների իրականացման պահանջներին:

93. *Տե՛ս*, օրինակ, Են նախարարների կոմիտեի թիվ Rec(2010)5 հանձնարարականը, Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2-rev հանձնարարականը, Են խորհրդարանական ասամբլեայի թիվ 2223 (2018) բանաձևը:

94. *Տե՛ս* CoE, 2020, Recommendation Rec(2006)2-rev of the Committee of Ministers to member States on the European Prison Rules (անգլերեն), <https://rm.coe.int/09000016809ee581>

3.1. Արդյո՞ք ՀՀ ԶԿՀ-ներում, մասնավորապես հիմնարկ ընդունման փուլում իրականացվում է ռիսկերի գենդերազգայուն գնահատում, որը հնարավորություն կտա վերհանելու կնոջ նկատմամբ նախկինում կատարված բռնության փաստը:

Բանտում կարիքների և ռիսկերի գնահատման իրականացումը պետք է միտված լինի տարբեր խմբերի կանանց առանձնահատկությունները, խնդիրներն ու կարիքները հասկանալուն:

Գենդերազգայուն ռիսկերի գնահատումը և բանտարկյալների դասակարգումը պետք է հնարավորություն տան էական տեղեկություն ստանալու կանանց անցյալի կարիքների և առանձնահատկությունների մասին: Նման տեղեկատվության հիմքով այնուհետև պետք է իրականացվեն կանանց տեղաբաշխումը և նրանց ազատազրկման ընթացքին վերաբերող բոլոր հարցերի պլանավորումը: Գենդերազգայուն ռիսկերի գնահատումը ենթադրում է կին բանտարկյալների վերաբերյալ այնպիսի կարևոր տեղեկությունների հավաքումը, ինչպիսիք են՝

- նախկինում բռնության ենթարկվելու փաստը,
- հոգեւոցիալական առողջության խնդիրների առկայությունը,
- կախվածությունը թմրանյութերից,
- ծնողական և այլոց խնամքի այլ տեսակի պարտականությունների առկայությունը<sup>95</sup> (ԲԿ, Կանոն 41):

Ռիսկերի գենդերազգայուն գնահատման արդյունքները, մասնավորապես նախկինում բռնության՝ ներառյալ ընտանեկան բռնության և սեռական չարաչափման ենթարկված լինելու հանգամանքները պետք է հաշվի առնվեն բանտարկյալ կանանց պահման ամբողջ ընթացքի պլանավորման շրջանակում, այդ թվում՝ պահման ռեժիմի որոշման, տրամադրվող վերականգնման և վերաօգիալականացման անհատական ծրագրերի մշակման տեսանկյունից (ԲԿ, Կանոն 40-ի և 41-ի մեկնաբանություն):

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներ ընդունվող կանանց շրջանում ռիսկերի գենդերազգայուն գնահատումը կարևորել են նաև հետազոտությանը մասնակցած փորձագետները և առանցքային դերակատարները:

Մասնավորապես, ըստ փորձագետների, գենդերազգայուն գնահատման իրականացումը հնարավորություն կտա վերհանելու ազատազրկված կնոջ հանդեպ նախկինում բռնության գործադրման դեպքերը, դրանով պայմանավորված հնարավոր խնդիրների առաջացումը և նրա հետ իրականացվելիք հետագա աշխատանքների բնույթը:

Ըստ այդմ՝ սույն հարցադրման շրջանակում իրականացվող վերլուծությունն առավելապես կվերաբերի հայաստանյան համատեքստում գենդերազգայուն ռիսկերի գնահատման միջոցով ազատազրկված կանանց նկատմամբ նախկինում գործադրված բռնության փաստի բացահայտման և այդ ուղղությամբ միջազգային չափանիշներով սահմանված հետա-

95. Թմրանյութերի օգտագործման և ծնողական և այլ խնամքի պարտավորություն ունենալու բաղադրիչների առկայությամբ վերլուծությունը դուրս է տվյալ հետազոտության շրջանակից:

գա գործողությունների և քայլերի ձեռնարկման հարցերին:

Միջազգային չափանիշները սահմանում են, որ կնոջ նկատմամբ մինչ հիմնարկ ընդունվելը բռնության փաստի, ինչպես նաև նրա հոգեւոցիալական վիճակի և այս առումով հնարավոր խնդիրների վերհանման տեսանկյունից առանցքային է **համալիր բժշկական գննության իրականացումը**:

Բանտ ընդունվելիս համալիր բժշկական գննության պահանջի սահմանումը նպատակ ունի բացահայտելու կանանց առողջական կարիքները, այդ թվում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատումը, **ինչպես նաև նախկինում սեռական բռնության կամ բռնության այլ ձևերին ենթարկվելու փաստի արձանագրումը** (ԲԿ, Կանոն 6; ՆՄԿ, Կանոն 30):

Բժշկական գննությունը նաև առանցքային նշանակություն ունի **մինչ բանտ ընդունվելը խոշտանգման ենթարկվելու մասին վկայող մարմնական վնասվածքները արձանագրելու և այս ուղղությամբ պատշաճ հետաքննություն մեկնարկելու առումով**:

Հաշվի առնելով մշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև տղամարդկանց հետ շփման նախկին բացասական փորձը (ֆիզիկական, սեռական բռնության ենթարկվելու համատեքստում)՝ կանայք հնարավոր է չցանկանան, որ բուժզննում իրականացնի տղամարդ մասնագետը: Նման փորձառությունը նրանց համար կարող է վերատրավմատիզացնող լինել: Ըստ այդմ միջազգային չափանիշներով սահմանվում է, որ **կնոջը պետք է տրվի հնարավորություն, որ նման դեպքերում բուժզննում իրականացնի կին մասնագետ: Ընդ որում՝ կինը պարտավոր չէ հիմնավորել կին բժշկի կողմից գննումն անցնելու իր նախապատվությունը**: Միևնույն ժամանակ տվյալ կանոնը ճանաչում է որոշ երկրներում առհասարակ որակավորված բժշկական անձնակազմի սակավության խնդիրը, հատկապես երբ խոսքը հրատապ իրավիճակների մասին է: **Այն դեպքում, երբ կնոջ նախապատվության համաձայն հնարավոր չի լինում ապահովել կին բժշկի ներգրավումը, բուժզննմանը պետք է առնվազն ներկա լինի բանտի կին աշխատակիցներից որևէ մեկը, ով նաև պետք է աջակցի կնոջը բռնության մտավախությունների փարատման և լիարժեք անձեռնմխելիության երաշխավորման հարցում** (ԲԿ, Կանոն 10):

Միջազգային չափանիշներով պահանջվում է **բուժզննումների ընթացքում գաղտնիության ապահովումը**:

Տվյալ պահանջը ենթադրում է նաև **անհատական բուժզննման իրականացումը: Գաղտնիության իրավունքի խախտում է նաև բուժզննման կամ բժշկական խորհրդատվության/բուժման ընթացքում որևէ տղամարդ աշխատակցի ներկայությունը** (ԲԿ, Կանոն 11):

**Եթե բուժզննման արդյունքում հայտնաբերվել է** կալանավորումից առաջ կամ կալանավորման ընթացքում կնոջ նկատմամբ սեռական կամ այլ տեսակի բռնության փաստ, ապա կին բանտարկյալը պետք է տեղեկացվի իրավապահ մարմիններին դիմելու իրավունքի մասին, ինչպես նաև բողոքը ներկայացնելու հարցում նրան պետք է տրամադրվի անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն: Այս առումով առանցքային է բավարար թվաքանակով և որակավորում ունեցող աջակցող մասնագետների (իրավաբան, հոգեբան, սոցիալական աշխատող) առկայությունը քրեակատարողական հիմնարկներում (ԲԿ, Կանոն 7):

Հոգեբանական աջակցությունը կարող է տրամադրվել արտաքին ծառայությունների կողմից, ինչպիսիք են ՀԿ-ները՝ համագործակցելով բանտի ղեկավարության հետ, հատկապես երբ բանտի ղեկավարությունը չունի համարժեք կամ համապատասխան ծառայություններ տրամադրելու կարողություններ:

Առանցքային է նաև կնոջը իրավաբանական աջակցության տրամադրումը: Նման աջակցությունը կարող է տրամադրվել իրավաբանների կամ որակավորված մասնագետների կողմից, առկա լինելով առաջին ատյանի դեպքում, եթե փաստաբան առկա չէ:

**Անդրադառնալով հայաստանյան համատեքստին՝ հարկ է ուսումնասիրել, թե ՀՀ քրեակատարողական հիմնարկներում անձի՝ հաստատություն ընդունվելու և բուժ-զննումների իրականացման վերաբերյալ կարգավորումներում որքանով են տեղ գտել ռիսկերի գենդերազգայուն գնահատման՝ վերոգրյալ միջազգային չափանիշները:**

ՀՀ քրեակատարողական հիմնարկներում անձի՝ հաստատություն ընդունման կարգի վերաբերյալ կարգավորումները սահմանված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքով, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և ՀՀ Կառավարության «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թ. օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ:

ՀՀ քրեակատարողական հիմնարկներում անձի՝ հաստատություն ընդունվելու կարգի վերաբերյալ կարգավորումներում **ամրագրված են կալանավորված անձի և դատապարտյալի նախնական բժշկական զննության վերաբերյալ դրույթներ:** Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն, ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալն անցնում է բժշկական զննություն:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 9-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելիս նախնական բժշկական զննությունը սահմանված կարգով անցնում են կարանտինային բաժանմունքում:

ՀՀ Կառավարության «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման 10-րդ կետի համաձայն. «Կարանտինային ստորաբաժանումում իրականացվող բժշկական զննությունը կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի գնահատումն է՝ դրա վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով, որն օգտագործվում է՝

1. կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայրում, իսկ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պատշաճ և համարժեք բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու համար,
2. կալանավորված անձի կամ դատապարտյալի մոտ հնարավոր մարմնական վնասվածք հայտնաբերելու, այդ թվում՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի արդյունքում ստացված, ինչպես նաև նրա առողջական վիճակի վերաբերյալ գան-

գատ արձանագրելու նպատակով,

3. վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու համար»:

Նույն որոշման 11-րդ կետի համաձայն՝ բժշկական զննությունը ներառում է «կալանավորված անձի կամ դատապարտյալի՝

1. **Նախնական բժշկական զննությունը**, որն ընդգրկում է՝

ա. արտաքին զննությունը,

բ. հոգեբուժական վկայարկումը,

գ. առողջական վիճակի վերաբերյալ գանգատների առկայության պարզումը՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի վերաբերյալ հարց ու պատասխանի միջոցով,

դ. խորհրդատվությունը.

2. **Ֆյուրոգրաֆիկ հետազոտությունը՝** կալանավորված անձին՝ կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելուց հետո բժշկի կողմից ցուցման առկայության դեպքում 72 ժամվա ընթացքում:

### **Բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝**

1. կալանավորված անձի կամ դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտում.
2. կալանավորվածներին պահելու վայր, քրեակատարողական հիմնարկ ընդունվածների բժշկական զննության մատյանում.
3. խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի մեջ»:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարն իր 2021 թվականի ապրիլի 21-ի N 163-Լ հրամանով հաստատել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և դրա կազմման ուղեցույցը<sup>96</sup>:

Սույն հրամանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **բժշկական զննությունն իրականացնելիս, ի թիվս այլևի, արձանագրվում է ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության ենթարկված լինելու հանգամանքը, դրա հետևանքով առաջացած ֆիզիկական ախտանիշները<sup>97</sup>, ինչպես նաև հոգեախտաբանական դրսևորումները<sup>98</sup>:**

Հարկ է նշել, որ կալանավորված անձի և դատապարտյալի հոգեկան առողջության զննության իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ արդարադատության նախարար-

96. Տե՛ս «խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմելու ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ԱՆ 2021 թվականի ապրիլի 21-ի N 163-Լ հրամանը, [https://www.moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_190722367591\\_163-hraman-xoshtangum.pdf](https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_190722367591_163-hraman-xoshtangum.pdf)

97. Սուր և քրոնիկ ախտանիշները և (կամ) անկարողությունը, բռնության ձևը/մեթոդը, վայրը, գունավորումը, եզրերը, մակերևույթը, ինտենսիվությունը, տևողությունը, պարբերականությունը, սրացումները և զարգացումները, ապաքինումը և վերականգնումը:

98. Տե՛ս քննարկվող ձևաթղթի կետ V-ը:

ըը 2021 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունել է N 439-Լ հրամանը<sup>99</sup>, որով հաստատվել են քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման գործիքներ՝ ներառյալ քրեակատարողական հիմնարկներում կանանց հոգեկան առողջության գննության գործիքը:

Վերոնշյալ հրամանի համաձայն՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման բժիշկը քրեակատարողական հիմնարկ ընդունված (ինչպես առաջին անգամ քրեակատարողական հիմնարկ ընդունված, այնպես էլ այլ քրեակատարողական հիմնարկից տեղափոխված) **կալանավորված անձին և դատապարտյալին անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ենթարկում է հոգեկան առողջության գննության՝ ըստ սեռային տարանջատման:** Նույն հրամանի 2-րդ հավելվածով սահմանված է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կանանց հոգեկան առողջության գննության գործիքի ձևաթուղթը, որտեղ ընդգրկված են նաև ընտանեկան՝ ներառյալ սեռական բռնության ենթարկվելու հանգամանքի բացահայտմանն ուղղված հարցեր («Արդյո՞ք Ձեր զուգընկերը/զուգընկերները ֆիզիկապես վնասել կամ սպառնացել են Ձեզ: Արդյո՞ք Ձեր զուգընկերոջ կամ այլ անձանց կողմից ենթարկվել եք սեռական ոտնձգության»):

Եթե հոգեկան առողջության ռիսկի գործիքի կիրառման արդյունքում հոգեբույժը հանգել է հոգեբան ներգրավելու անհրաժեշտության մասին եզրակացության, ապա «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ տվյալ քրեակատարողական հիմնարկում տեղակայված ստորաբաժանման ղեկավարը դիմում է հիմնարկի պետին՝ հոգեբան ներգրավելու առաջարկությամբ:

Որպես ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 439-Լ հրամանով հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման գործիքների՝ ներառյալ քրեակատարողական հիմնարկներում կանանց հոգեկան առողջության գննության գործիքի փորձարկման ժամանակաշրջան սահմանվել է եռամսյա ժամկետ (2021 թ. սեպտեմբերի 10-ից 2021 թ. դեկտեմբերի 13-ը): Հետևաբար պրակտիկայի գնահատումը կարող է տեղի ունենալ միայն փորձարկման արդյունքների ուսումնասիրման հիման վրա: Բացի այդ՝ կարևոր է այս գործիքի շարունակականության ապահովումը:

**Հարկ է նշել, որ միջազգային չափանիշներին համապատասխան իրավակարգավորումների սահմանմանն ուղղված Կառավարության ջանքերը դրական են գնահատվում, սակայն շատ կարևոր են ներդրվող գործիքներին և ընթացակարգերին համապատասխան պրակտիկայի ձևավորումն ու արդյունավետ կիրառումը:**

Կալանավորված և ձերբակալված անձանց, ինչպես նաև դատապարտյալների՝ առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում<sup>100</sup>, ՀՀ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման գործիքների փորձարկման և ձևաթղթերի հաստատման մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 439-Լ հրամանը, <https://moj.am/legal/view/article/1437/>

99. Տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման գործիքների փորձարկման և ձևաթղթերի հաստատման մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 439-Լ հրամանը, <https://moj.am/legal/view/article/1437/>

100. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ազատությունից զրկված, ձերբակալված և կալանավորված, ինչպես նաև ազատագրված վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում օրենսդրությամբ սահմանված կարգով, տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=104958>:

րողական օրենսգրքում<sup>101</sup>, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրերի մասին» ՀՀ օրենքում<sup>102</sup>:

Ձերբակալված և կալանավորված անձանց, դատապարտյալի բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ին ընդունած N 825-Ն որոշմամբ:

Նշված կարգի համաձայն՝ կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ այն բժշկական օգնության և սպասարկման տեսակների շրջանակներում, որոնք իրականացնելու համար ՊՈԱԿ-ն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզիա: Բժշկական օգնության և սպասարկման այն տեսակները, որոնց համար ՊՈԱԿ-ը չի ստացել համապատասխան լիցենզիա, տրամադրվում են օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկների կողմից<sup>103</sup>:

Կալանավորված անձանց և դատապարտյալներին արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում ապահովվում է առնվազն ընդհանուր թերապևտիկ, հոգեբուժական, ընդհանուր և վիրաբուժական, ստոմատոլոգիական, իսկ կանանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում՝ նաև գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրականացումը:

**Առողջապահական ծառայությունների տրամադրման գենդերազգայուն մոտեցումը լիարժեքորեն ամրագրված չէ համապատասխան ներպետական կարգավորումներում:**

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ին ընդունած N 825-Ն որոշման համաձայն՝ աշխատանքային ժամերին բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ավագ և միջին բժշկական անձնակազմի կողմից:

ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի N 163-Լ հրամանի 2-րդ հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ **հնարավորության դեպքում** կալանավորված անձի կամ դատապարտյալի պահանջով բժշկական զննությունն իրականացնում է նույն սեռի մասնագետը:

**Սույն հրամանը չի նախատեսում նույն սեռի մասնագետի կողմից բժշկական զննության իրականացման անհնարիության դեպքում բժշկական զննությանը պահման վայ-**

101. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բժշկական օգնություն ստանալու իրավունք:

102. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձն ունի առողջության պահպանման՝ ներառյալ անհետաձգելի բժշկական օգնության իրավունք, տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=43743>:

103. Կալանավորված անձանց և դատապարտյալներին արտահիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում են քրեակատարողական հիմնարկների տարածքում գործող ՊՈԱԿ-ի բժշկական ստորաբաժանումների կողմից (ներառյալ՝ հրավիրված բժիշկ-մասնագետների), իսկ բժշկական օգնության և սպասարկման համապատասխան լիցենզիայի բացակայության դեպքում սույն կարգին համապատասխան՝ քաղաքացիական բժշկական հաստատությունների կողմից:

## րի նույն սեռի աշխատակցի ներգրավման վերաբերյալ կարգավորումներ:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տրամադրած տեղեկության համաձայն՝ ՊՈԱԿ-ի «Աբովյան» ստորաբաժանման անձնակազմի 9 աշխատակիցներից 8-ը կանայք են (5 բուժքույր, 1 գինեկոլոգ, 1 ատամնաբույժ, 1 հոգեբույժ), 1-ը՝ տղամարդ, որը զբաղեցնում է ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը<sup>104</sup>:

**Ինչ վերաբերում է բուժօգնության գաղտնիության սկզբունքին**, ապա այն ամրագրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում, որի 21-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս<sup>105</sup>:

Բուժօգնության գաղտնիության սկզբունքն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ին ընդունած N 825-Ն որոշման հավելվածի 13-րդ կետում, որի համաձայն՝ բժշկական զննությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի, քրեակատարողական հիմնարկի բուժաշխատող չհանդիսացող ծառայողների կամ կալանավորված անձի կամ դատապարտյալի փոխադրումն իրականացնող ծառայողների լսելիության, և եթե բժշկական զննությունն իրականացնող բժիշկը հակառակը չի պահանջում, ապա նաև տեսանելիության սահմաններից դուրս: Կալանավորված անձանց կամ դատապարտյալների բժշկական զննությունն իրականացվում է անհատական սկզբունքով՝ առանձին:

**Այսպիսով, թեև բուժօգնության գաղտնիության սկզբունքն (principle of confidentiality) ամրագրող նորմերն առանձին կարգավորումներ չեն ներառում կանանց բուժօգնության մասով, այնուամենայնիվ, առկա է համապատասխան իրավական հիմք այս սկզբունքի պրակտիկ իրացումն ապահովելու համար: Մինևույն ժամանակ ներպետական կարգավորումներով գաղտնիության ապահովման սկզբունքից կատարված է բացառություն, համաձայն որի՝ բժշկական զննությունը կարող է կատարվել վարչակազմի ծառայողի տեսողության սահմաններում, եթե դա պահանջի բժիշկը: Սույն ձևակերպումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, քանի որ հստակ սահմանված չէ, թե բժիշկը երբ կարող է դա պահանջել, ինչը իրավակիրառ պրակտիկայում կարող է տեղիք տալ այս դրույթի հայեցողական մեկնաբանման և կիրառման:**

**Ինչ վերաբերում է բուժօգնման արդյունքում հայտնաբերված բռնության փաստի առնչությամբ հետագա քայլեր ձեռնարկելուն**, ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի թիվ N 163-Լ հրամանի 1-ին հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ **ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորման յուրաքանչյուր դեպքում բուժաշխատողը պարտավոր է բժշկական զննության արձանագրությունն ուղարկել իրավասու քննչական մարմին՝ այդ մասին իրազեկելով ՀՀ գլխավոր դատախազությանը:** Նույն հրամանի 2-րդ հավելվածի բժշկական զննության արձանագրությունը կազմվում և իրավասու քննչական մարմին է ներկայացվում՝ անկախ կա-

104. Աղբյուր՝ ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի 25.01.2022 թվականի Ե-176 գրություն՝ ի պատասխան ՄԻՉԿ-ի հարցման:

105. Տե՛ս «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրերի մասին» ՀՀ օրենքը, հոդված 21:



## լանավորված անձի կամ դատապարտյալի իրազեկված համաձայնության առկայությունից<sup>106</sup>:

Կալանավորված անձանց և դատապարտյալների իրավաբանական օգնությունն ստանալու իրավունքն ամրագրված է համապատասխանաբար «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածով:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի<sup>107</sup> 149-րդ կետի համաձայն՝ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դատապարտյալին իր դիմումի հիման վրա փաստաբանների կամ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեսակցություն է տրամադրվում առանց դրա քանակի սահմանափակման, աշխատանքային օրերին, դատապարտյալին կարճատև տեսակցություն տրամադրելու համար օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում աշխատում են 2 հոգեբան, 1 իրավաբան և 1 սոցիալական աշխատող<sup>108</sup>:

Հոգեբանական աջակցության տրամադրման առումով ՀՀ արդարադատության նախարարի 08.09.2021 թվականին ընդունած N 439-Լ հրամանը հասցեագրում է նաև բռնության ենթարկված լինելու դեպքում **հոգեբանական աջակցության տրամադրման խնդիրը՝** սահմանելով համապատասխան կարգավորումներ հոգեբան ներգրավելու վերաբերյալ:

**Սակայն հարկ է նշել, որ հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցների մասնակիցները (թե՛ փորձագետները և թե՛ որոշում կայացնողները) արձանագրում են քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների, իրավաբանների, ինչպես նաև սոցիալական աշխատողների անբավարար քանակի և վերջիններիս՝ գենդերազգայունության, բռնության և խտրականության դեպքերում կանանց հետ պատշաճ աշխատանք տանելու ոչ բավարար կարողություններին առնչվող խնդիրներ: Խնդիրների լուծման և սոցիալ-հոգեբանական և իրավական աջակցության տրամադրման համակարգի վերանայման կարիքի մասին են նշում որոշում կայացնողները:**

*«Էս բլոկը պետք ա հիմնովին վերանայվի, որովհետև շատ հիմնարկներում մենք ընդամենը մեկ հոգեբան կամ իրավաբան ունենք, ու այստեղ խոսել ու միանշանակ պնդել, որ հիմնարկներում պատշաճ իրավական ուղղորդումներ են իրականացվում, ճիշտ խորհրդատվություն է տրվում, բնականաբար չենք կարող, որովհետև, օրինակ, 800-հոգանոց հիմնարկին եթե կա հատկացված ընդամենը հինգ հոգանոց բաժին, տրամաբանական է, որ էս աշխատակիցները չեն հասցնի Էդ ամեն ինչը»:* (ՀՀ ԱՆ ներկայացուցիչ)

106. Հարկ է նշել, որ ներպետական օրենսդրության շրջանակում տեղ գտած՝ «անկախ կալանավորված անձի կամ դատապարտյալի իրազեկված համաձայնության առկայության» պահանջը համահունչ չէ միջազգային պահանջներին, սակայն բխում է բռնության կիրառման վերաբերյալ հանցատեսակներով հանրային մեղադրանքի ընդհանուր կոնցեպտից, որը՝ որպես համակարգային մոտեցում, սահմանված է մեր ներպետական օրենսդրությամբ: Սույն կոնցեպտից կատարվող բացառությունների մասով անհրաժեշտ է կատարել միջազգային փորձի ուսումնասիրություն և դրա հիման վրա մշակել միջազգային չափանիշների իմպլեմենտացմանն ուղղված համապատասխան կարգավորումներ և մեխանիզմներ:

107. ՀՀ Կառավարության 2006 թ. օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=70166>

108. Աղբյուր՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 25.08.2021 թվականի № /12.2/26028-2021 գրություն՝ ի պատասխան ՄԻՀԿ-ի հարցման: Այլ ԹԿՀ-ների վերաբերյալ նույնանման տեղեկությունը տե՛ս Հավելված 2-ում:

Ինչպես փորձագետները, այնպես էլ որոշում կայացնողները անդրադառնում են հատկապես հոգեբանների և իրավաբանների հմտությունների հարցերին, նրանց կողմից ազատագրված անձանց հանդեպ դրսևորվող խտրական և Էթիկական տեսանկյունից խնդրային վերաբերմունքին, ինչը հատկապես տեսանելի է կանանց տարբեր խմբերի (օրինակ՝ տրանսգենդեր կանանց) հետ աշխատանքի պարագայում:

*«ՔԿՀ-ի բոլոր աշխատակիցների մասով ես իմ աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպում եմ Էթիկական մասով խնդիրների: Սկսած «դու» դիմելաձևից՝ ականատես ես լինում ավելի շատ մտերմիկ զրույցի, քան մասնագիտական, նաև շատ ուրիշ իրավիճակներ կարող ենք ունենալ: Այս մասով ես կարծում եմ, որ մեր ամենամեծ խնդիրը հիմա աշխատակցի և դատապարտյալի շփման Էթիկական կողմի ճիշտ պահումն է»: (ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ)*

Փորձագետները և որոշում կայացնողները իբրև խնդիր են դիտարկում նաև այն, որ աշխատանքի անցնելիս տվյալ մասնագետները **որևէ մասնագիտական, այդ թվում՝ ոլորտին ներհատուկ մասնագիտական քննության կամ ստուգարքի չեն ենթարկվում**, ինչն էլ հնարավորություն չի տալիս պատկերացում կազմելու վերջիններիս գիտելիքների, հմտությունների, այդ թվում բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի հատուկ հմտությունների առկայության վերաբերյալ:

*«Ես առաջարկել եմ, որ հետագայում հատկապես հոգեբանների և սոցիալական ծառայողների համար առանձին ընթացակարգեր սահմանվեն, որտեղ որ իրենց մասնագիտական ունակությունների վերաբերյալ քննություններ կլինեն, ու իրական արդյունքներ մենք կունենանք»:* (ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ)

Այսպիսով՝ ՀՀ ՔԿՀ-ներում, մասնավորապես ընդունման փուլում միջազգային չափանիշներին համապատասխան ռիսկերի գենդերազգայուն գնահատման շրջանակում կնոջ նկատմամբ նախկինում կատարված բռնության փաստի վերհանման պահանջներին առնչվող վերոնշյալ վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ.

- Քրեակատարողական հիմնարկ ընդունվող կանանց շրջանում ռիսկերի գնահատման ներպետական գործիքակազմերը վերանայման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման փուլում են, **ինչը դրական է գնահատվում**: Առկա իրավակարգավորումներով **տրամադրված են բավարար հիմքեր** դրանց գենդերազգայունության ապահովման համար, մասնավորապես **համալիր բուժզննության միջոցով կնոջ նկատմամբ նախկինում կատարված բռնության փաստի վերհանման հնարավորության տեսանկյունից**:

- Իրականացվող բուժզննությունը հնարավորություն է տալիս վերհանելու **ինչպես նախկինում խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի (ներառյալ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության) ենթարկվելու հանգամանքը** (ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի թիվ N 163-Լ որոշում), **այնպես էլ ընտանեկան՝ ներառյալ սեռական բռնության ենթարկվելու հանգամանքը** (ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 439-Լ հրաման):
- ՀՀ արդարադատության նախարարի 08.09.2021 թվականի N 439-Լ հրամանը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության, ռիսկի գնահատման գործիքների փորձարկման և ձևաթղթերի հաստատման մասին փորձարկային փաստաթուղթ է, գործել է երեք ամիս ժամկետով և դադարեցրել է իր գործողությունը 2021 թվականի դեկտեմբերի 13-ին: **Տվյալ գործիքի արդյունավետությունը, սակայն, հնարավոր կլինի գնահատել դրա փորձարկման արդյունքում ձեռք բերված տվյալների վերլուծության հիման վրա:**
- Իրականացվող համալիր բժշկական գննության ընթացակարգերում **գենդերազգայուն մոտեցումը ոչ լիարժեք է տեղ գտել ներպետական կարգավորումներում:** Մասնավորապես նույն սեռի մասնագետի կողմից բժշկական գննության իրականացման անհնարիության դեպքում բժշկական գննությանը պահման վայրի նույն սեռի աշխատակցի ներգրավման վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: Բացի այդ՝ ներպետական կարգավորումներով բժշկական գաղտնիության ապահովման սկզբունքից կատարված է բացառություն, համաձայն որի՝ բժշկական գննությունը կարող է կատարվել վարչակազմի աշխատակցի տեսողության սահմաններում, եթե դա պահանջի բժիշկը: Սույն ձևակերպումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, քանի որ հստակ սահմանված չէ, թե բժիշկը երբ կարող է դա պահանջել, ինչը իրավակիրառ պրակտիկայում կարող է տեղիք տալ այս դրույթի հայեցողական մեկնաբանման և կիրառման:
- Բռնության փաստի վերհանման արդյունքում հետագա քայլերի ձեռնարկման տեսանկյունից, կալանավորված անձանց և դատապարտյալների կարիքներին համապատասխան, սահմանված են իրավաբանական և սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն ստանալու իրավական հիմքերը, սակայն հետազոտության հավաքած տվյալները փաստում են, որ ազատազրկման վայրերում դեռևս տվյալ մասնագետների քանակն անբավարար է: Հետազոտության մասնակիցները (թե՛ փորձագետները, թե՛ որոշում կայացնողները) շեշտում են նաև մասնագետների էթիկական և մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը: **Քրեակատարողական հիմնարկներում աշխատող իրավաբանների, հոգեբանների և սոցիալական աշխատողների մասնագիտական կարողությունների, գիտելիքների և հմտությունների զարգացումը, նրանց կողմից խտրական դրսևորումների բացառումը և գենդերազգայունության ապահովումը անհրաժեշտ նախապայման են արդյունավետ և գենդերազգայուն աջակցության տրամադրման երաշխավորման համար:**

Ըստ այդմ **առաջարկում ենք.**

- Ապահովել ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ N 439-Լ հրամանի (քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման նոր գործիքների) շարունակականությունը՝ իրականացնելով փորձարկման արդյունքում ստացված տվյալների գեներազգայուն (ներդրվող գործիքները որքանով են երաշխավորում կնոջ նկատմամբ խոշտանգման, վատ վերաբերմունքի և գեներային հիմքով բռնության տարբեր դրսևորումների ենթարկվելու փաստի վերհանման հնարավորությունը) վերլուծություն: Վերոնշյալը հնարավորություն կտա ստացված տվյալների հիմքով իրականացնելու գործիքների և ընթացակարգերի բարելավում դրանք համապատասխանեցնելով հաստատություն ընդունվող կանանց շրջանում ռիսկերի գեներազգայուն գնահատման միջազգային չափանիշներին:
- Համալիր բուժգննության գեներազգայունության ապահովման միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնել հետևյալ օրենսդրական փոփոխությունները. ա) ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի N 163-Լ հրամանի 2-րդ հավելվածի 14-րդ կետում կատարել փոփոխություն և սահմանել նույն սեռի մասնագետի կողմից բժշկական գննության իրականացման անհնարիականության դեպքում բժշկական գննությանը պահման վայրի նույն սեռի աշխատակցի ներգրավման վերաբերյալ կարգավորումներ: բ) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրերի մասին» ՀՀ օրենքում, որի 21-րդ հոդվածում և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ին ընդունած N 825-Ն որոշման հավելվածի 13-րդ կետում կատարել փոփոխություն և հանել «եթե բժշկական գննությունն իրականացնող բժիշկը հակառակը չի պահանջում» բառակապակցությունը:
- Մինչ քրեակատարողական հիմնարկ ընդունվելը բռնության ենթարկված կալանավորված և դատապարտյալ կանանց կարիքներին համապատասխան տրամադրվող իրավական և սոցիալ-հոգեբանական աջակցության և խորհրդատվության արդյունավետության և գեներազգայունության ապահովման նպատակով իրականացնել հետևյալ գործառնական քայլերը. ա) Ապահովել քրեակատարողական հիմնարկներում բավարար քանակով և մասնագիտական բարձր որակավորում ունեցող իրավաբանների, հոգեբանների և սոցիալական աշխատողների առկայությունը: բ) Ապահովել նշված մասնագետների գեներազգայունությունը, նրանց կողմից ազատագրված կանանց հետ աշխատանքի և վարվեցողության Էթիկական նորմերի պահպանումը, որը ներառում է որևէ հիմքով խտրական կամ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորումների բացառումը: գ) Ապահովել նշված մասնագետների՝ գեներային հիմքով բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու համար բավարար և անհրաժեշտ հմտությունների և գիտելիքների առկայությունը:

3.2. Արդյո՞ք օրենսդրորեն ամրագրված են և գործնականում պահպանվում են ՀՀ ՔԿՀ-ներում ազատագրված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության կանխարգելման առումով առանցքային նշանակություն ունեցող պահման պայմանների և վարվեցողության միջազգային չափանիշները:

Նկատի ունենալով քրեակատարողական հիմնարկներում կանանց առավել խոցելիությունը բռնության և հատկապես սեռական բռնության ենթարկվելու տեսանկյունից՝ անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային իրավունքում առկա՝ **պահման պայմաններին և վարվեցողության կանոններին վերաբերող այն չափանիշները, որոնց պահպանումն առանցքային է ազատագրված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության կանխարգելման առումով:**

Միջազգային փաստաթղթերի ամփոփ ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նման չափանիշներն առավելապես վերաբերում են տեղաբաշխմանը և պահման պայմաններին, մարմնական զննությունների իրականացմանը, վերահսկմանը և արտաքին աշխարհի հետ կապին:

### Տեղաբաշխում և պահման պայմաններ

Բոլոր բանտարկյալների նկատմամբ հարգալից և արժանապատիվ վերաբերմունքը «Նեյտոն Մանդելայի կանոններով» սահմանված հիմնարար սկզբունք է, որը ներառում է նաև բանտարկյալների նկատմամբ խոշտանգումների, դաժան և անմարդկային այլ վերաբերմունքի բացարձակ արգելքը, ինչպես նաև բանտարկյալների անվտանգության և ապահովության մշտական ապահովումը (ՆՄԿ, Կանոն 1):

**Բանտարկյալների անվտանգության ապահովմանն ուղղված առանցքային պահանջն է տեղաբաշխման կանոնների պահպանումը:** Այսպես, տարբեր խմբերի բանտարկյալները պետք է պահվեն տարբեր հաստատություններում կամ միևնույն հաստատության առանձին հատվածներում հաշվի առնելով սեռը, տարիքը, դատվածության պատմությունը, պահման կարգավիճակը և նրանց համար անհրաժեշտ պահման պայմանների առանձնահատկությունները, այդ թվում.

- Կին բանտարկյալները պետք է պահվեն տղամարդկանցից առանձին հաստատությունում կամ անհնարինության դեպքում միևնույն հաստատության լիարժեք կերպով առանձնացված հատվածում (ՆՄԿ, Կանոն 11):
- Անչափահաս բանտարկյալները պետք է պահվեն չափահասներից առանձին (ՆՄԿ, Կանոն 11):
- Տրանսգենդեր կանայք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու իրենց գենդերային ինքնությանը համապատասխանող պահման պայմանների վերաբերյալ որոշման կայացմանը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց կենսաբանական սեռով պայմանավորված բաշխումը կարող է հանգեցնել նրանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության բարձր ռիսկի, իսկ նրանց գենդերային ինքնության նկատմամբ վերաբերմունքն ու կարծրատիպները՝ բռնությունների ինչպես հաստատության աշխատակիցների, այնպես էլ այլ պահվող անձանց կողմից) («Յոգակարտայի սկզբունքներ», Սկզբունք 9):

Հաշվի առնելով ազատությունից զրկման պայմաններում ԼԳԲՏ անձանց խոցելիությունը՝ պետությունները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն վերջիններիս տեղաբաշխման և պահման պայմանների ապահովմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Մասնավորապես պետք է ձեռնարկեն հատուկ միջոցներ նրանց նկատմամբ ֆիզիկական բռնության, բռնաբարության և սեռական բռնության այլ ձևերի դեմ (անկախ նրանից՝ բռնությունը գործադրվում է այլ բանտարկյալների, թե աշխատակիցների կողմից) (Եվրոպայի խորհրդի Նախարարների Rec(2010)5 հանձնարարական):

ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված տարբեր խմբերի անձանց տեղաբաշխման սկզբունքներն ու չափանիշները սահմանված են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածով: Այս կարգավորումները, ի թիվս այլնի, ըստ սեռի և ըստ չափահասության հատկանիշի միատեսակ կանոններ են սահմանում անձանց միմյանցից անջատ պահելու առումով: Մասնավորապես, դրանց համաձայն, կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում և դատապարտյալներն ուղղիչ հիմնարկում պահվում են անջատ:

- տղամարդիկ՝ կանանցից,
- անչափահասները՝ չափահասներից:

### **Այս առումով ներպետական օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին:**

Ինչ վերաբերում է **տրանսգենդեր կանանց տեղաբաշխմանը**, ըստ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի, քրեակատարողական հիմնարկում անձանց տեղաբաշխելիս հաշվի են առնվում անձանց համատեղելիությունը, առողջական վիճակը և անվտանգության ապահովումը<sup>109</sup>: Սակայն հատուկ կարգավորումներ սահմանված չեն տեղաբաշխման և բանտախցերի ընտրության հարցում ԼԳԲՏ անձանց կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ:

### **Ըստ այդմ՝ իրենց գենդերային ինքնությանը համապատասխանող պահման պայմանների վերաբերյալ որոշման կայացմանը ԼԳԲՏ անձանց, այդ թվում՝ տրանսգենդեր կանանց մասնակցության հնարավորությունը իրավական ամրագրում չի ստացել:**

Ինչ վերաբերում է տեղաբաշխման վերաբերյալ հետազոտության մասնակիցների վերհանած խնդիրներին, ապա դրանք **հետազոտության մասնակիցներից ոլորտային փորձագետների կողմից մեծամասնորեն ևս դիտարկվել են հենց տրանսգենդեր կանանց տեղաբաշխման և պահման պայմանների համատեքստում**<sup>110</sup>:

109. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 15-րդ կետի համաձայն. «15. Կալանավորված անձանց կամ դատապարտյալների՝ կարանտինային բաժանմունքում գտնվելու ընթացքում նրանք տեղաբաշխվում են ըստ խցերի կամ կացարանների, որտեղ կալանավորված անձինք կամ դատապարտյալները փոխադրվում են կարանտինային բաժանմունքում աշխատանքները սահմանված կարգով ավարտվելուց հետո: Կալանավորված անձինք ըստ խցերի տեղաբաշխվում և կալանավորվածներին պահելու վայրերում անջատ են պահվում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, իսկ դատապարտյալներն ըստ խցերի կամ կացարանների տեղաբաշխվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ հաշվի առնելով նաև անձանց համատեղելիությունը, առողջական վիճակը և անվտանգության ապահովումը»:

110. Հայաստանյան ԶԿՀ-ներում տրանսգենդեր կանանց խնդիրների, այդ թվում՝ նրանց նկատմամբ բռնության ռիսկերի վերաբերյալ մանրամասն քննարկումը ներկայացված է Բաժին 1-ում:

Ըստ փորձագիտական և դիտորդական խմբի անդամների կարծիքի՝ **տեղաբաշխելիս վերջիններիս առանձնահատկությունները հաշվի չառնելն առաջացնում է նրանց նկատմամբ բռնության էական ռիսկեր**: Ավելին, քրեակատարողական հիմնարկներում արմատացած կարծրատիպային մոտեցումներով և ենթամշակույթով պայմանավորված, տրանսգենդեր կանայք (ինչպես նաև գեյ տղամարդիկ) մեկուսացվում են հետերոսեքսուալ տղամարդկանցից և հաճախ պատիժը կրում են սեռական բռնության համար դատապարտված անձանց հետ նույն խցերում, ինչը **բռնության ենթարկվելու էական վտանգ է ստեղծում տրանսգենդեր կանանց համար**: Ընդ որում՝ շեշտվում է, որ ՔԿՀ-ների ղեկավար անձնակազմը տեղյակ է տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրական և նվաստացնող վերաբերմունքից, շահագործման դեպքերից: Սակայն, ըստ փորձագետների և ՔԿՀ դիտորդների խմբի անդամների, թե՛ որոշում կայացնողները, թե՛ հաստատությունների ղեկավարությունը հերքում են տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրական և նվաստացնող վերաբերմունքը՝ նշելով, որ նրանք կամավոր են ընտրում իրենց համար նախատեսված դերը ՔԿՀ-ներում:

*«Էս վերջերս տրանսգենդերներից մեկի հետ խոսում էի... շատ խոցելի էր: Օրինակ՝ ասում էր, որ 1 տարի, մի քանի ամիս մնացել է խցային պայմաններում, և ասաց, որ մի աչքը բաց է քնել այդ ամբողջ ժամանակ: Ասում ա, որ գիտեին, որ տրանս ա: Սա նաև խնդրահարույց ա, հենց իրանց միջանձնային հարաբերությունների առումով, որովհետև իրանց մեջ էլ ընդունելի չի, որ բոլորին խառնում են և լցնում մի խուց, որովհետև սեռական բռնության համար դատապարտված անձը և տրանսգենդերը նույն խցում են մտում: Փաստացի տրանսգենդերն էլ է հայտնվում սեռական բռնության թիրախում»:* (Փորձագետ)

*«Հաճախ պարզապես փորձում են ասել [խմբ.՝ հաստատության ղեկավարությունը], որ նմանատիպ խնդիր գոյություն չունի, փորձում են շեշտել, որ հիմնականում էդ անձինք ինքնակամ են վերցնում Էն գործերը, որոնք որ համարվում են սև աշխատանք ՔԿՀ-ներում»:* (ՔԿՀ դիտորդների խմբի անդամ)

Խնդրի կապակցությամբ **որոշում կայացնողներն** իրենց հերթին պնդում են, որ ՔԿՀ-ում տրանսգենդեր կանանց հետ զրուցում են և փորձում հասկանալ նրանց համար պահման առավել անվտանգ պայմանները:

*«Իհարկե մենք նրա սեռը որոշելիս առաջնորդվում ենք անձնագրային տվյալներով, բայց այնուամենայնիվ, մեր հանդիպումների ընթացքում փորձել են հասկանալ, թե ինքը իրեն որտեղ ավելի կոմֆորտ կզգա տեսականորեն, ինքը ասեց, որ ինքը իրեն տղամարդ ա համարում, ու այլ անձանց հետ կապված, թե անվտանգության պրոցեսն ինչպես կազմակերպել, որ ինքը հնարավորինս քիչ շփում ունենա անձանց հետ, ովքեր կարող են իր համար խնդրային լինել»:* (ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչ)

**Փորձագետներից** մեկի ներկայացրած տեղեկության և ՔԿՀ դիտորդների խմբի զեկույցի համաձայն<sup>111</sup> տրանսպենդեր կանանց նկատմամբ ՔԿՀ-ներում **առկա են սեռական շահագործում և սեռական ոտնձգություններ**, ինչը կրկին պայմանավորված է հաստատություններում գոյություն ունեցող ենթամշակույթով:

*«Ֆիզիկական չեն ծեծում [խմբ.՝ տրանսպենդեր անձանց, քանի որ, ըստ քրեական ենթամշակույթի, նրանց դիպչելն արգելվում է], որովհետև ընդունված չի ծեծել, բայց հարցը էն ա, որ էդ մարդը չունի երկրնտրանքի հնարավորություն [նկատի ունի՝ սեռական ծառայություն չմատուցելու], ինքը «համաձայնում ա»»:* (Փորձագետ)

*«Դեպք ա եղել նաև, որ տրանս կինը, ով ինչ-որ փոփոխությունների գործընթացում էր, չի կարողացել մնալ ՔԿՀ-ում ու ստեղծել ա էնպիսի հանգամանքներ, որպեսզի տեղափոխվի ուրիշ քրեակատարողական հիմնարկ, որովհետև էդ ՔԿՀ-ում ասում էր, որ սեռական ոտնձգությունների ա ենթարկվում»:* (ՔԿՀ դիտորդների խմբի անդամ)

Բացի այդ՝ տրանսպենդեր կանայք ազատազրկումն անցկացնում են քրեակատարողական հիմնարկի ամենաանբարվոք խցերում, կատարում են պարտադրված աշխատանք, ինչը փորձագետները ևս դիտում են իբրև վերջիններիս հանդեպ գենդերային հիմքով խտրականության և բռնության դրսևորում:

*«Բանտերում տրանսպենդեր անձանց նկատմամբ խտրականությունը ահավոր մեծ ա, մասնավորապես, ես գիտեմ մի քանի բռնության տեսակներ, որոնք կիրառում են, մասնավորապես հաստատություններում սպասքն են առանձնացնում, ստիպում են, որպեսզի էնտեղ մաքրություն արվի, անկախ մարդու կամքից, խցերում, ստիպում են, որպեսզի դրսից գումարներ բերեն»:* (Փորձագետ)

### **Մարմնական զննությունների իրականացում**

Միջազգային չափանիշները պահանջում են **մարմնական զննությունների ընթացքում ազատազրկված կանանց արժանապատվությունը երաշխավորող արդյունավետ կարգավորումների ապահովում**, ինչը ենթադրում է, ի թիվս այլնի.

- Մարմնական զննումները պետք է իրականացվեն առանձին՝ առանց այլ անձանց ներկայության և միայն կին անձնակազմի կողմից, որոնք անցել են համապատասխան վերապատրաստում սահմանված ընթացակարգերով զննման պատշաճ մեթոդների վերաբերյալ (ԲԿ, Կանոն 19):

111. Տե՛ս Չայյան Ա., Սահակյան Ա. և այլք. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2020 թվականի գործունեության հաշվետվություն, 2021, Էջ 79, [http://www.pmg.am/images/2020\\_SԱՐԵԿԱՆ\\_ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.1.pdf?fbclid=IwAR1K6XMyqStTy0gLvTQWPTVg5T-ovOWE6C50vaeXatVogyoLEhduktKTnQc](http://www.pmg.am/images/2020_SԱՐԵԿԱՆ_ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.1.pdf?fbclid=IwAR1K6XMyqStTy0gLvTQWPTVg5T-ovOWE6C50vaeXatVogyoLEhduktKTnQc)



- Մերկացնելու եղանակով զննությունները և մարմնական ինվազիվ զննությունները պետք է փոխարինվեն այլընտրանքային մեթոդներով, ինչպես, օրինակ՝ սկանավորումը, ինչի արդյունքում նաև հնարավոր կլինի խուսափել ինվազիվ զննումների արդյունքում հասցվող հոգեբանական տրավմատիկ ազդեցությունից և հնարավոր մարմնական վնասներից (ԲԿ, Կանոն 20):

Վերոգրյալի առնչությամբ հարկ է նշել, որ Միջազգային բժշկական ասոցիացիան (World Medical Association) իր՝ Մարմնական զննությունների վերաբերյալ դիրքորոշման շրջանակում (Statement on Body Searches) **կոչ է անում կառավարություններին ճանաչելու ինվազիվ զննումների իրականացումը իբրև անձի անձեռնմխելիության և արժանապատվության հանդեպ լուրջ ոտնձգություն, և որ դրանք պարունակում են հոգեբանական և ֆիզիկական վնասներ պատճառելու բարձր ռիսկ:**

Ներպետական օրենսդրությունում անձնական խուզարկության վերաբերյալ ընդհանուր կարգավորումներն ամրագրված են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, իսկ մանրամասն կարգավորումները՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգում:

Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմն իրականացնում է կալանավորված անձանց և դատապարտյալների անձնական խուզարկություններ:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձինք ենթարկվում են անձնական խուզարկության նույն սեռին պատկանող անձանց կողմից: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 88-րդ կետի համաձայն՝ արգելվում է անձնական խուզարկություն կատարելը հակառակ սեռի ներկայացուցչի կողմից: **Սույն կարգավորումները, ըստ էության, միջազգային չափանիշներին համապատասխան ամրագրել են քրեակատարողական հիմնարկներում պահվող կանանց անձնական խուզարկությունը միայն կին անձնակազմի կողմից կատարելու կանոնը:**

Հարկ է նշել, որ նույն կետի համաձայն՝ **անձնական խուզարկությունը կատարվում է առնվազն երկու քրեակատարողական ծառայողի մասնակցությամբ:** Սա նշանակում է, որ գործող կարգավորումները **չեն համապատասխանում անձնական խուզարկության՝ առանց այլ անձանց ներկայության իրականացման միջազգային կանոնին:** Սույն նորմը նաև բավարար չափով հստակ չէ հակառակ սեռի ներկայացուցչի կողմից անձնական խուզարկության չենթարկվելու արգելքի համատեքստում, քանի որ մասնակցությունը կարող է մեկնաբանվել ինչպես այդ գործողության կատարում, այնպես էլ պարզապես ներկայություն: Հետևաբար **գործող կարգավորումները չեն բացառում կին քրեակատարողական ծառայողի կողմից անձնական խուզարկությունը, որը կարող է կատարվել տղամարդ քրեակատարողական ծառայողի ներկայությամբ**<sup>112</sup>:

Ինչ վերաբերում է անձնական խուզարկության եղանակներին (մերկացնելու, ինվազիվ և

112. Հարկ է նշել, որ մեկուսացված սենյակում և առանց հակառակ սեռի ներկայության անձնական խուզարկության ենթարկվելու վերաբերյալ իրավական կարգավորումները սահմանված են կալանավորվածներին պահելու վայր և ուղղիչ հիմնարկ մուտք ու ելք ունեցող այլ անձանց համար (ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 90-րդ կետ):

այլն) և մեթոդներին, ապա դրանց վերաբերյալ իրավակարգավորումները բավարար չափով մանրամասնեցված չեն և սահմանում են միայն **անձնական խուզարկությունը անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելով կատարելու սկզբունքը և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ կանոնը**<sup>113</sup>: Անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու սկզբունքը բավականին լայն է և օրենսդրի կողմից սահմանվել է որպես անձնական խուզարկության իրականացման հիմքում դրված սկզբունք, օրենսդրորեն անհրաժեշտ է սահմանել հստակ կարգավորումներ անձնական խուզարկության իրականացման թույլատրելի և ոչ թույլատրելի եղանակների վերաբերյալ:

## Վերահսկում

Կին բանտարկյալներին պետք է ղեկավարեն և վերահսկեն միայն աշխատակազմի կին անդամները (ինչը չի խանգարում, որ արական սեռի մասնագետները կամ աշխատակազմի ներկայացուցիչները, մասնավորապես բժիշկները և ուսուցիչները, իրենց մասնագիտական պարտավորությունները կատարեն բանտերի՝ կանանց պահման մասում կամ կանանց համար նախատեսված բանտերում): Բանտի՝ կանանցով բնակեցված հատվածը պետք է ղեկավարվի կնոջ կողմից, նրա մոտ պետք է պահպանվեն տվյալ հատվածի բոլոր բանալիները, ընդ որում՝ ոչ մի տղամարդ աշխատակից չպետք է մուտք գործի կանանց համար նախատեսված բանտի հատված առանց կին աշխատակցի ուղեկցության (ՆՄԿ, Կանոն 81):

Տվյալ կանոնի պահպանման կարևորությունը նաև այն է, որ հաշվի առնելով, որ ազատագրված կանանց շրջանում ավելի հաճախ է արձանագրվում գենդերային հիմքով բռնության տարբեր դրսևորումների, այդ թվում՝ սեռական բռնության ենթարկվելու նախկին փորձի առկայությունը՝ արական սեռի անձնակազմի կողմից վերահսկման իրականացումը պարունակում է վերատրավմատիզացման, ինչպես նաև հնարավոր կրկնազոհացման ռիսկով: Բացի այդ՝ արական սեռի անձնակազմի անմիջական վերահսկումը, նրանց տեսադաշտում գտնվելն ինքնին ավելի բացասաբար են անդրադառնում ազատագրված կանանց հոգեբանական վիճակի, անձնական տարածքի և ապահովության զգացման վրա, քան ազատագրված տղամարդկանց պարագայում:

ՀՀ օրենսդրությամբ քրեակատարողական ծառայությունում ծառայության անցնելու կարգը կարգավորված է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխով: **Ամրագրված նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա չեն հատուկ կարգավորումներ, որոնք կապահովեն իրավական հիմք՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավար կազմի և աշխատակազմի, մասնավորապես ուղեկցման և անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող հաստիքները միայն կին աշխատակիցներով համալրելու համար:**

Համաձայն ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացրած տվյալների՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ընդհանուր առմամբ աշխատում է 36 կին, որոնցից 19-ն ունի անվտանգության ապահովման գործառույթ<sup>114</sup>:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավարումը ներկայումս իրականացվում

113. Տե՛ս ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 88-րդ կետ:

114. Աղբյուր՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 25.08.2021 թվականի № /12.2/26028-2021 գրություն՝ ի պատասխան ՄԻՀԿ-ի հարցման: Այլ ՔԿՀ-ների վերաբերյալ նույնանման տեղեկությունը տե՛ս Հավելված 2-ում:

Ե տղամարդու կողմից, ինչը խնդրահարույց է միջազգային չափանիշների տեսանկյունից:

«Աբովյան» ԶԿՀ-ի անձնակազմի սեռային բաշխվածության հարցերի դիտարկումը մեծապես կարևորվել է հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցների մասնակիցների կողմից՝ պահվող կանանց նկատմամբ բռնության ռիսկերի կանխարգելման համատեքստում:

Ինչպես փորձագետների և դիտորդների խմբի անդամները, այնպես էլ որոշում կայացնողները կարևորում են «Աբովյան» ԶԿՀ-ում կին անձնակազմի քանակի ավելացման հարցը:

Անվտանգության ապահովում իրականացնող տղամարդ անձնակազմի խնդիրը բարձրաձայնում են թե՛ փորձագետները, թե՛ ԶԿՀ դիտորդների խմբի անդամները, թե՛ ՄԻՊ ներկայացուցիչը: Խնդիր է համարվում այն, որ ազատագրված կանայք, անընդհատ գտնվելով անվտանգության ապահովում իրականացնող տղամարդ աշխատակազմի տեսադաշտում, հայտնվում են հոգեբանորեն ճնշող, անձնական տարածքից զրկված մթնոլորտում: Փորձագետները «Աբովյան» ԶԿՀ այցելությունների ընթացքում դիտարկել են նաև ազատագրված կանանց նկատմամբ որոշակի բացասական վերաբերմունք տղամարդ անձնակազմի այլ ներկայացուցիչների կողմից:

*«Մեր դիտարկումից հետո վերցրեցին և ընդամենը մզացրեցին այդ ապակին, առաջին անգամ վարագույր տեղադրեցին, բայց ընդհանուր առմամբ ինքը միևնույն է տեսանելի է, այսինքն՝ տղամարդ հսկիչը կարող էր կանանց դիտարկման հաճելի միջավայր իր համար ստեղծել»:* (ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ)

*«Հսկիչների պահն էր խնդրահարույց, որովհետև երկրորդ հարկում հիմնական էր գործառույթը տղամարդիկ էին անում, ու էր գլազոկ կոչվածից իրենք էին նայում, դուռը բացում-փակում, եթե աղմուկ ա լինում, դա բնականաբար դիսկոմֆորտ ա, որովհետև կին ես, խցում մենակ ես ու էր հանգստությունը չունես, անընդհատ մտքիդ պետք ա լինի, որ հնարավոր ա նայես, բացես: Դու էդ իրավիճակի տերը չես էդ պայմաններում»:* (Փորձագետ)

*«Շատ դեպքերում, հենց այդ ավելի խիստ վերաբերմունքը կանանց նկատմամբ, բացասական ավելի խիստ վերաբերմունքը զգում ես նաև աշխատողների կողմից: Տղամարդ աշխատակիցների կողմից կա որոշակի վերաբերմունք, որը կանանց դուր չի գալիս»:* (Փորձագետ)

Փորձագետներից մեկի ներկայացրած տեղեկության համաձայն՝ խնդրային է բժշկական ՊՈԱԿ-ի՝ «Աբովյան» ԶԿՀ-ի մասնաճյուղի պետի տղամարդ լինելը: Վերջինիս հետ անհատական զրույցների ընթացքում կանայք նշել են, որ իրենց ապահով կամ հարմարավետ չեն զգում նրա հետ շփման ժամանակ՝ իր տղամարդ լինելու հանգամանքով պայմանավորված:

## Արտաքին աշխարհի հետ կապ

Հաշվի առնելով ազատագրված կանանց շրջանում ընտանեկան բռնության ենթարկվելու անհամաչափ փորձը՝ նրանց պետք է պատշաճ խորհրդատվություն տրամադրվի առ այն, թե ում ներառյալ ընտանիքի որ անդամներին է թույլատրվում այցելել իրենց (ԲԿ, Կանոն 44):

Ներպետական օրենսդրությունում կալանավորված անձին, ինչպես նաև դատապարտյալին տեսակցություն տրամադրելու կարգը սահմանված է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Սույն կանոնակարգի 138-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին տեսակցություն տրամադրելու անհրաժեշտ պայման է կալանավորված անձի կամ դատապարտյալի գրավոր համաձայնությունը: Գրավոր համաձայնության բացակայության դեպքում ընտանիքի անդամները չեն կարող տեսակցել կալանավորված կամ դատապարտյալ կնոջ հետ: **Այս ընդհանուր կարգավորումը, ըստ էության, կարևոր երաշխիք է ոչ ցանկալի անձանց հետ տեսակցության բացառման համար:** Ընդ որում կալանավորված անձի կամ դատապարտյալի գրավոր համաձայնությունը հիմք է հետագայում նույն անձանց հետ տեսակցություններ տրամադրելու համար, քանի դեռ կալանավորված անձը կամ դատապարտյալը հակառակ բովանդակությամբ դիմում չի ներկայացրել:

**Հետազոտության մասնակիցների ներկայացրած տվյալները, սակայն, վկայում են ազատագրված կանանց՝ արտաքին աշխարհի, մասնավորապես ընտանիքի և երեխաների հետ կապի պահպանմանն առնչվող մի շարք խնդիրների առկայության և այս առումով գործող պրակտիկաների վերանայման անհրաժեշտության մասին:**

Ըստ փորձագետների՝ ազատագրված կանանց դեպքում հաճախ ընտանիքները կտրում են կապը վերջիններիս հետ՝ ի տարբերություն ազատագրված տղամարդկանց, որոնց պարագայում ընտանիքի անդամները, կանայք հիմնականում շարունակում են ինտենսիվ կապ պահպանել: Այս փաստը փորձագետները կապում են հասարակության շրջանում ազատագրված կանանց նկատմամբ անհամեմատելիորեն ավելի բացասական, մարգինալացնող և խտրական վերաբերմունքի և մոտեցումների առկայությամբ: Բացի այդ՝ փորձագետները նշում են, որ կանայք սովորաբար չեն օգտվում ընտանիքի հետ երկարատև տեսակցության հնարավորությունից տեսակցության համար նախատեսված ոչ բարվոք սենյակների և պայմանների պատճառով, քանզի ավելի զգայուն են նման պայմաններում երեխաներին և ընտանիքի անդամներին տեսակցելու հարցում, քան տղամարդիկ:

*«Մայրը ինչպես կարող է լինել հանցագործ, սա էն պիտակն է, որ մենք կպցնում ենք՝ վայ դու մայր ես, էս ինչ արեցիր: Երկրորդը՝ էդ կանանց հետ կապված, թե ինչպես կարող է կինը իր սեռով պայմանավորված կատարել էսպիսի գործողություններ, ուրեմն անդառնալի է կորուստը, և թողնում ենք հասարակությունից, լուսանցքից այն կողմ»:* (Փորձագետ)

*«Տարբերությունն այն է նաև, որ կանայք հիմնականում մինչև վերջ մնում են իրենց ամուսինների կողքին, բայց կանանց դեպքում այդ կապը կտրվում է ընտանիքի հետ: Հնարավոր է՝ ամուսինները էլ չգան իրենց մոտ տեսակցության, կամ ամուսինները չթողնեն, որ երեխաները իրենց մոր հետ շփվեն՝ «հանցագործ կին չունեն, կամ իմ երեխայի մայրը չպիտի հանցագործ լինի» մոտեցմամբ»:* (Փորձագետ)

*«Կանայք հիմնականում երկարատև տեսակցություններ շատ չեն ուզում ունենալ: Կանայք չեն ուզում իրենց երեխաներին բերել, մի քանի օր բանտում պահել, դա հոգեբանորեն շատ ծանր են տալիս»:* (Փորձագետ)

Այսպիսով՝ ազատագրված կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության ռիսկերի կանխարգելման առումով առավել առանցքային՝ տեղաբաշխման, մարմնական զննությունների իրականացման, կանանց վերահսկման և արտաքին աշխարհի հետ կապի պահման միջազգային նորմերի պահպանման առնչությամբ ներպետական համատեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- **Ազատագրվման վայրերում տեղաբաշխման առումով առավել խոցելի են տրանսգենդեր կանայք:** Վերջիններիս տեղաբաշխումը տղամարդկանց համար նախատեսված ՔԿՀ-ներում պարունակում է նրանց նկատմամբ գենդերային հիմքով խտրականության և բռնության, այդ թվում սեռական բռնության բարձր ռիսկեր: Ներպետական օրենսդրությամբ իրենց գենդերային ինքնությանը համապատասխանող պահման պայմանների վերաբերյալ որոշման կայացմանը տրանսգենդեր կանանց մասնակցության հնարավորությունը առանձին իրավական ամրագրում չի ստացել:
- **Ազատագրվման վայրերում բռնության ռիսկերի խթան է հանդիսանում քրեական ենթամշակույթը, որը մեծապես հանդիպում է տղամարդկանց ՔԿՀ-ներում, և որի անմիջական հետևանքները կրում են ԼԳԲՏ անձինք, այդ թվում՝ տրանսգենդեր կանայք:** Տրանսգենդեր կանայք, պայմանավորված ենթամշակույթային դրվածքներով, մեկուսացվում են հետերոսեքսուալ տղամարդկանցից, ազատագրվում անցկացնում են քրեակատարողական հիմնարկի ամենաանբարվոք խցերում, ինչպես նաև հաճախ պատիժը կրում են սեռական բռնության համար դատապարտված անձանց հետ նույն խցերում, ինչը բռնության ենթարկվելու Էական վտանգ է ստեղծում տրանսգենդեր կանանց համար: **Հետազոտության շրջանակում հավաքած տվյալները փաստում են ազատագրված ԼԳԲՏ անձանց, այդ թվում՝ տրանսգենդեր կանանց նկատմամբ խտրականության, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, սեռական ոտնձգությունների և շահագործման մասին, ինչպես նաև այն, որ այդ ամենը տեղի է ունենում ՔԿՀ-ների վարչակազմի իմացությամբ և թողտվությամբ:**
- Ներպետական իրավակարգավորումները հստակ կերպով չեն արգելում տղամարդ աշխատակցի ներկայությունը կին կալանավորված անձի կամ բանտարկ-

յալի՝ կին աշխատակցի կողմից իրականացվող անձնական խուզարկությանը:

- Անձնական խուզարկության եղանակների (մերկացնելու, ինվազիվ և այլն) և մեթոդների վերաբերյալ իրավակարգավորումները բավարար չափով մանրամասնեցված չեն, **բացակայում են հստակ կարգավորումներ անձնական խուզարկության իրականացման թույլատրելի և ոչ թույլատրելի եղանակների վերաբերյալ:**
- **Առկա չեն ներպետական հատուկ կարգավորումներ, որոնք կապահովեն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավար կազմի և աշխատակազմի, մասնավորապես ուղեկցման և անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող հաստիքների համալրումը միայն կին աշխատակիցներով:**
- «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված դիտարկումների հիման վրա պարզվել է, որ ազատազրկված կանայք հաճախ գտնվում են անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող տղամարդ անձնակազմի մշտական ուշադրության ներքո՝ **այսպիսով հայտնվելով հոգեբանորեն ճնշող մթնոլորտում և զրկվելով անձնական տարածք ունենալու հնարավորությունից:**
- Հետազոտության հավաքած տվյալները վկայում են, որ ընտանիքի և երեխաների հետ կապի պահպանման տեսանկյունից ազատազրկված կանայք գործնականում ամբերսվում են մի շարք խնդիրների, **որոնք սահմանափակող ազդեցություն են ունենում վերջիններիս՝ արտաքին աշխարհի հետ կապի լիարժեք հասանելիության վրա:**

Ըստ այդմ, հաշվի առնելով վերոգրյալ իրավական և գործնական խնդիրները, **առաջարկում ենք.**

- իրականացնել քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց, մասնավորապես տրանսգենդեր կանանց նկատմամբ խտրականության և բռնության դրսևորումների համալիր ուսումնասիրում, ռիսկերի և կարիքների գնահատում և վերջ դնել քրեակատարողական հիմնարկներում տվյալ անձանց նկատմամբ կատարվող բռնարարքների անպատժելիության մթնոլորտին:
- Սահմանել քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց, մասնավորապես տրանսգենդեր կանանց արժանապատիվ, անվտանգ և սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից, նվաստացնող վերաբերմունքից և բռնությունից գերծ պահման պայմանների ապահովմանն ուղղված գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ նրանց նկատմամբ խտրականությունն ու բռնության գործադրումը տեղի են ունենում քրեակատարողական հիմնարկների վարչակազմի իմացությամբ և թողտվությամբ: Արձանագրված դեպքերի կապակցությամբ անհրաժեշտ է ապահովել արդար և արդյունավետ քննություն և դատական կարգով հետապնդել պատասխանատու անձանց:
- Կատարել ԼԳԲՏ անձանց, մասնավորապես տրանսգենդեր կանանց քրեա-

կատարողական հիմնարկներում անվտանգ տեղաբաշխման հիմնահարցի վերաբերյալ միջազգային փորձի և հայաստանյան համատեքստի համադրված և համալիր ուսումնասիրություն: Տվյալ ուսումնասիրության և վերհանված խնդիրների հիման վրա ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան՝ տրանսգենդեր անձանց տեղաբաշխման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն վերջիններիս նկատմամբ գենդերային հիմքով խտրականության և բռնության ռիսկերի կանխարգելումը:

- Հստակեցնել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգում տեղ գտած՝ անձնական խուզարկությունը անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելով կատարելու սկզբունքը և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ կանոնը՝ միջազգային չափանիշներից բխող հստակ կարգավորումները անձնական խուզարկության իրականացման թույլատրելի և ոչ թույլատրելի եղանակների վերաբերյալ: Մասնավորապես ամրագրել ինվազիվ գնումների իրականացման արգելքը:
- Միջազգային չափանիշներին համապատասխան՝ սահմանել հատուկ իրավակարգավորումներ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավար կազմի և աշխատակազմի, մասնավորապես ուղեկցման և անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող հաստիքների՝ միայն կին աշխատակիցներով համալրումը երաշխավորելու նպատակով:
- Հիմք ընդունելով միջազգային չափանիշները և փորձագետների արձանագրած մտահոգությունները՝ կատարել միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն կանանց քրեակատարողական հիմնարկների գենդերազգայուն ղեկավարման վերաբերյալ և քայլեր ձեռնարկել Հայաստանում այդ փորձի ներդրման ուղղությամբ:
- Ապահովել ազատագրված կանանց ընտանիքի անդամների հետ աշխատանքի գործուն և արդյունավետ մեխանիզմներ, որոնք կնպաստեն ինչպես ընտանիքի հետ կապի պահպանմանը, այնպես էլ կհաղթահարեն ազատագրված կանանց հանդեպ կարծրատիպային ընկալումները:

⋮ **3.3. Արդյո՞ք ներպետական օրենսդրությունն ու ձևավորված գործելակերպերը արտացոլում են միջազգային չափանիշներով սահմանված՝ քրեակատարողական ծառայողների՝ գենդերազգայուն վերապատրաստումների իրականացման պահանջը:**

Ազատագրված կանանց առանձնահատուկ կարիքներից և խոցելիությունից տեղյակ լինելու և դրանք հասկանալու, այդ կարիքները հաշվի առնելով նրանց հետ աշխատել կարողանալու, գենդերային բռնությունը ճանաչելու և տարբերակելու տեսանկյունից կարևորվում է պետության կողմից ազատությունից գրկման վայրերի **անձնակազմի վերապատ-**

## րաստման և զգայունության խնդիրը<sup>115</sup>:

ՔչՆ անձնակազմը, ըստ այդմ, պետք է վերապատրաստում անցնի ոչ միայն ոլորտային օրենքների և այլ կարգավորումների, այլև ազատազրկված անձանց հետ աշխատանքի, հաղորդակցության, ազատությունից զրկված անձանց տարբեր խմբերի առանձնահատկությունների և նրանց նկատմամբ խտրականության և խարանի բացառման և ազատազրկված յուրաքանչյուր անձի համար արժանապատիվ միջավայրի ապահովման համար պահանջվող վերաբերմունքի և գործելակերպերի վերաբերյալ<sup>116</sup>:

Այս կապակցությամբ «Բանգկոկի կանոնները» սահմանում է, որ **կանանց բանտերի կառավարման մեջ ներգրավված բոլոր աշխատակիցները** պետք է վերապատրաստվեն **գենդերազգայունության և խտրականության և սեռական ոտնձգությունների արգելման, ինչպես նաև կին բանտարկյալների գենդերային հատուկ կարիքների և մարդու իրավունքների վերաբերյալ** (ԲԿ, Կանոններ 42-43):

Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներից գատ՝ «Բանգկոկի կանոններով» նաև պահանջվում է **լրատվամիջոցներին, հանրությանը և կին բանտարկյալներին և իրավախախտներին վերաբերող հարցերում մասնագիտական պատասխանատվություն կրող անձանց** «Բանգկոկի կանոններում» ընդգրկված հարցերի և դրանց կիրառման մասին պարբերաբար փաստական տեղեկության տրամադրում: Նշվում է, որ **քրեական արդարադատության համապատասխան պաշտոնյաների իրազեկվածությունը բարձրացնելու և նրանց զգայուն դարձնելու համար** պետք է մշակվեն և իրականացվեն «Բանգկոկի կանոնների» վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր (ԲԿ, Կանոն 70):

Ներպետական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների վերաբերյալ կարգավորումները տեղ են գտել ինչպես օրենսդրական, այնպես էլ ենթաօրենսդրական մակարդակում:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի<sup>117</sup> համաձայն՝ քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները ենթակա են վերապատրաստման «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Վերապատրաստման վերաբերյալ հարցերը կարգավորված են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով<sup>118</sup>, որի համաձայն՝ քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական

115. Տե՛ս OSCE/ODIHR, 2019, Preventing and Addressing Sexual and Gender-Based Violence in Places of Deprivation of Liberty (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/f/b/427448.pdf>

116. Տե՛ս Fraser A., Staff health and well-being in prisons: leadership and training (անգլերեն), [https://www.euro.who.int/\\_data/assets/pdf\\_file/0019/249211/Prisons-and-Health-22-Staff-health-and-well-being-in-prisons-leadership-and.pdf](https://www.euro.who.int/_data/assets/pdf_file/0019/249211/Prisons-and-Health-22-Staff-health-and-well-being-in-prisons-leadership-and.pdf)  
The Association of Prevention of Torture, 2019, Complaints procedures (անգլերեն), <https://www.appt.ch/en/knowledge-hub/detention-focus-database/safeguards/complaints-procedures>

117. Տե՛ս «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151448>

118. Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>



ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանված են ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ<sup>119</sup>:

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների՝ հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) նպատակով հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի N 477-Լ որոշմամբ<sup>120</sup>, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ից:

Սույն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ հատուկ ուսուցումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև ուսումնական հաստատություն կամ Իրավական կրթության ՊՈԱԿ) կամ օտարերկրյա պետությունների համապատասխան կազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանի համաձայն:

Վերոնշյալ որոշման 16-րդ կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետը մինչև ընթացիկ տարվա հունվարի 20-ը ՀՀ արդարադատության նախարարի հաստատման է ներկայացնում ընթացիկ տարվա հատուկ ուսուցման ժամանակացույցը: Ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա հունվարի 20-ը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատման է ներկայացնում ծառայողների ընթացիկ տարվա հատուկ ուսուցման դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը՝ նշելով դրանց ընդհանուր ժամաքանակները: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը հատուկ ուսուցման ծրագրերը հաստատում է հատուկ ուսուցման ժամանակացույցի, դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը ներկայացնելու օրվանից 15-օրյա ժամկետում:

ՀՀ արդարադատության նախարարը 2021 թվականի հունվարի 21-ին ընդունել է N 12-Ա հրամանը «2021 թվականի քրեակատարողական ծառայողների վերապատրաստման և քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հատուկ ուսուցման դասախոսությունների և գործնական պարապմունքների ծրագրերը՝ ցանկերն ու դասընթացների հաճախման ժամանակացույցները հաստատելու մասին»: Հարկ է նշել, որ 2019 թվականի հունվարի 21-ին ՀՀ արդարադատության նախարարի N 15-Ա հրամանով հաստատվել են քրեակատարողական ծառայողների 2019 թվականի վերապատրաստման և հատուկ ուսուցման դասախոսությունների և գործնական պարապմունքների ծրագրերը՝ ցանկերն ու դասընթացների հաճախման ժամանակացույցները, իսկ 2020 թվականի հունվարի 29-ին

119. «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=127532>

120. Տե՛ս «Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) նպատակով հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ առաջին փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի N 477-Լ որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145141>

ՀՀ արդարադատության նախարարի N 29-Ա հրամանով հաստատվել են քրեակատարողական ծառայողների 2020 թվականի վերապատրաստման և հատուկ ուսուցման դասախոսությունների և գործնական պարապմունքների ծրագրերը՝ ցանկերն ու դասընթացների հաճախման ժամանակացույցները:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի հունվարի 21-ի N 12-Ա հրամանում որպես դրա ընդունման իրավական հիմք սահմանված է, ի թիվս այլևի, **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի «Քրեակատարողական ծառայողի վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգը հաստատելու մասին» թիվ ՔՀ-67-Ն հրամանով հաստատված 1-ին հավելվածի 15-րդ կետը**, մինչդեռ սույն հրամանն ընդունվել է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախկին խմբագրությամբ 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն<sup>121</sup>, որը փոփոխվել է 21.01.2020 թվականի ՀՕ-14-Ն ՀՀ օրենքով: Փոփոխությունների արդյունքում ՀՀ արդարադատության նախարարն այլևս իրավասու չէ սահմանելու քրեակատարողական ծառայողի վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգը, և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ փոխվարչապետին: Հետևաբար **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Քրեակատարողական ծառայողի վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգը հաստատելու մասին» թիվ ՔՀ-67-Ն հրամանը չի կարող որևէ իրավական ակտի ընդունման հիմք լինել, և անհրաժեշտ է այն ուժը կորցրած ճանաչել:**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը ՄԻՀԿ-ի հարցմանն ի պատասխան տրամադրել է արդարադատության նախարարի հաստատած 2019-2021 թվականների դասընթացների ցանկը<sup>122</sup>: Դասընթացների ցանկը դիտարկել ենք **ըստ երեք չափանիշների՝**

1. դասընթացներ, որոնք նվիրված են քրեակատարողական հիմնարկներում գեներալային հիմքով բռնության հարցերին,
2. դասընթացներ, որոնք վերաբերում են կին դատապարտյալների և կալանավորվածների հետ աշխատանքին,
3. քրեակատարողական հիմնարկներում գեներալային հիմքով բռնությանն առնչվող, հարակից կամ համակարգային առումով փոխկապակցված թեմատիկայով դասընթացներ:

Այսպես՝ դասընթացների անվանումներն ուսումնասիրելիս կարելի է արձանագրել, որ ներկայացված ցանկերում **առկա չէ մեկ ընդհանուր դասընթաց, որն ամբողջությամբ նվիրված կլինի ՔԿՀ-ներում գեներալային բռնության հարցերին:**

Կին դատապարտյալների և կալանավորվածների հետ աշխատանքին է անդրադառնում **«Քրեակատարողական հիմնարկներում պահվող կին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները» դասընթացը:** Սակայն տվյալ դասընթացի գեներալազգայունությունը, դրա շրջանակում, միջազգային չափանիշներին համաձայն, գեներալային բռնության և խտրականության, կին բանտարկյալների գեներալային հատուկ կարիքների և մարդու իրավունքների վերաբերյալ հարցերի արտա-

121. Փոփոխության է ենթարկվել ՀՕ-14-Ն օրենքով, տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138779>

122. Աղբյուր՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 12.11.21 թվականի Ե 40/12-4987 գրություն՝ ի պատասխան ՄԻՀԿ-ի հարցման:

ցուվածությունը (այդ թվում՝ սույն բաժնում քննարկվող հարցերի և խնդիրների) **հնարավոր է պարզել ուսումնական պլանի ուսումնասիրությամբ, ինչն առանձին հետազոտության առարկա է:**

Բացի նշվածից՝ առկա են դասընթացներ, որոնք թեմատիկ առումով կարող են վերաբերելի, հարակից կամ համակարգային առումով փոխկապակցված լինել ԲԿՀ-ներում գեոդերային խտրականության, բռնության թեմայի հետ, ինչպես, օրինակ՝ «**Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր**», «**Ստամբուլյան արձանագրության Էուրյունը և խոշտանգումների ու այլ տեսակի դաժան վերաբերմունքի քննության և փաստաթղթավորման նվազագույն ստանդարտները**», «**Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները**», **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների քննարկում, խմբային աշխատանք**», «**խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշները**», «**Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները**», «**Քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները**» և այլն:

Սակայն այս դասընթացների ԲԿՀ-ներում գեոդերային բռնության, խտրականության անդրադարձող միջազգային չափանիշների, այդ թվում՝ «**Բանգկոկի կանոններով**» սահմանվող պահանջների վերաբերյալ ենթաթեմաների կամ հարցերի ընդգրկվածության գնահատումը **հնարավոր է իրականացնել միայն առանձին համապարփակ ուսումնասիրության հիման վրա:**

Հարկ է նշել, որ վերոգրյալ արձանագրումները նաև տեղ են գտել հետազոտության մասնակիցների հետ իրականացված հարցազրույցներում:

Այսպես, ըստ «**Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն**» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի, քրեակատարողական ծառայողների հետ իրականացվող դասընթացների, մասնավորապես «**Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները**» թեմայի շրջանակում մասնակիորեն շոշափվում է բռնության խնդիրը, **սակայն անդրադարձ չի արվում գեոդերային խտրականության, գեոդերային բռնության, դրա դրսևորումների և կանխարգելման հարցերին:**

Քրեակատարողական ծառայողների հետ վերապատրաստման գործառույթը ստանձնված է ՀՀ արդարադատության նախարարությանը կից գործող «**Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն**» ՊՈԱԿ-ին: Հետազոտության մասնակիցները (փորձագետները և «**Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն**» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները) արձանագրում են, որ քրեակատարողական ծառայողների համար իրականացվող վերապատրաստումները, ընդհանուր առմամբ, գեոդերագալուն չեն: «**Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն**» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը նշում է նաև ՊՈԱԿ-ի անձնակազմի շրջանում գեոդերային բռնության թեմայով վերապատրաստման, քննարկումների, միջազգային փորձի ուսումնասիրության կարիքների մասին:

Փորձագետները շեշտում են նաև հաստատություններում աշխատող հոգեբանների,

սոցիալական աշխատողների, իրավաբանների գեներազգայուն վերապատրաստման անհրաժեշտությունը:

*«Օրինակ՝ հոգեբանները կամ սոցիալական աշխատողները որքանով են վերապատրաստված, որպեսզի աշխատեն կանանց և աղջիկների հետ: Արդյո՞ք իրենց հետ հատուկ, թեմատիկ վերապատրաստումներ արվում են, որպեսզի այս մարդիկ զգայուն լինեն կանանց և աղջիկների հատկապես գեներային առանձնահատկություններով պայմանավորված խնդիրների նկատմամբ»:*  
(Փորձագետ)

Ե՛վ արդարադատության նախարարության, և՛ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները նշում են, որ քրեակատարողական ծառայողների հետ դասընթացներն իրականացնում են այն թեմաներով, որոնց անհրաժեշտության մասին շատ է բարձրաձայնվում, և որոնց բացը կամ պահանջարկը նկատվում է նրանց շրջանում: Ընդհանուր առմամբ, ՔԿՀ-ներում գեներային բռնության խնդիրը հասցեագրելու համար շեշտվում է **առանձին ծրագրի առկայության անհրաժեշտությունը**:

Ի տարբերություն վերոնշյալի՝ ըստ ՔԿԾ ներկայացուցչի, անմիջականորեն գեներային հիմքով խտրականության, բռնության ռիսկերին վերաբերող թեմաներին առանձին անդրադարձի կարիք չկա: Միևնույն ժամանակ **դասընթացի անհրաժեշտություն կա տրանսգեներ կանանց հետ աշխատող անձնակազմի համար՝ նրանց հետ շփումների առանձնահատկությունները հասկանալու տեսանկյունից**:

Թեև նշվում է, որ «Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակիցները բավականաչափ գիտելիքներ ունեն կանանց և անչափահասների աշխատանքի առումով, սակայն, ըստ ՔԿԾ ներկայացուցչի, հաստատության անձնակազմը լրացուցիչ գիտելիքների կարիք ունի կանանց հետ աշխատելու առանձնահատկությունների և մոտեցումների մասին, և պետք է որոշակի ստանդարտներ ներդրվեն, համաձայն որոնց՝ կընտրվեն հաստատության աշխատակիցները:

Այսպիսով, միջազգային չափանիշներով սահմանված՝ քրեակատարողական ծառայողների շրջանում գեներազգայուն վերապատրաստումների իրականացման պահանջին համապատասխանելիության տեսանկյունից ներպետական օրենսդրության և ձևավորված գործելակերպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

- Քրեակատարողական ծառայողների վերապատրաստման 2019-2021 թվականների դասընթացների ցանկերում տեղ գտած թեմաների վերնագրերի ուսումնասիրումը թույլ է տալիս արձանագրել, որ **ներկայացված ցանկերում ՔՀԿ-ներում գեներային հիմքով բռնության հարցերին նվիրված մեկ միասնական դասընթաց առկա չէ**:
- Կին դատապարտյալների և ազատազրկվածների հետ աշխատանքի առանձնահատկություններին նվիրված առանձին դասընթացի առկայությունը դրական է, սակայն **անհրաժեշտ է, որ տվյալ դասընթացը լինի գեներազգայուն, ապահովի միջազգային չափանիշներին համաձայն, գեներային բռնության և**

խտրականության, կին բանտարկյալների գեղեցիկ հատուկ կարիքների և իրավունքների վերաբերյալ հարցերի (այդ թվում՝ սույն բաժնում քննարկվող հարցերի և խնդիրների) արտացոլվածությունը: Նշված հարցերի արտացոլվածությունը պարզելու համար անհրաժեշտ է նաև ուսումնական պլանների առանձին համապարփակ ուսումնասիրություն:

- Ներկայացված ցանկերում ընդգրկված են այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պարունակել ՔԿՀ-ներում գեղեցիկ բնության, խտրականությանն անդրադարձող միջազգային չափանիշների, այդ թվում «Բանգկոկի կանոններով» սահմանվող պահանջների վերաբերյալ ենթաթեմաներ կամ հարցեր, **ինչը պարզելու համար ևս անհրաժեշտ է իրականացնել ուսումնական պլանների առանձին համապարփակ ուսումնասիրություն:**

Ըստ այդմ միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական ծառայողների վերապատրաստման իրականացումն ապահովելու նպատակով **առաջարկում ենք.**

- Կատարել առկա դասընթացների ուսումնական պլանների խորքային և համապարփակ ուսումնասիրություն՝ դրանցում գեղեցիկազգայուն վերապատրաստումների իրականացման միջազգային չափանիշների արտացոլվածությունը վերհանելու նպատակով:
- Ուսումնասիրության հիման վրա կատարել փոփոխություններ առկա դասընթացների ուսումնական պլաններում և ներդնել նոր դասընթացներ, որոնք կհամապատասխանեն քրեակատարողական ծառայողների գեղեցիկազգայուն վերապատրաստումներին վերաբերող միջազգային չափանիշներին, այդ թվում «Բանգկոկի կանոններով» սահմանվող պահանջներին:

# Առաջարկներ (Բաժին 3)

## Սույն բաժնում տեղ գտած վերլուծության արդյունքում առաջարկում ենք.

1. Ապահովել ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ N 439-Լ հրամանի (քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության և ռիսկի գնահատման նոր գործիքների) շարունակականությունը՝ իրականացնելով փորձարկման արդյունքում ստացված տվյալների գեներացիան (ներդրվող գործիքները որքանով են երաշխավորում կնոջ նկատմամբ խոշտանգման, վատ վերաբերմունքի և գեներային հիմքով բռնության տարբեր դրսևորումների ենթարկվելու փաստի վերհաման հնարավորությունը) վերլուծություն: Վերոնշյալը հնարավորություն կտա ստացված տվյալների հիմքով իրականացնելու գործիքների և ընթացակարգերի բարելավում դրանք համապատասխանեցնելով հաստատություն ընդունվող կանանց շրջանում ռիսկերի գեներացիայուն գնահատման միջազգային չափանիշներին:
2. Համալիր բուժգնության գեներացիայունության ապահովման միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնել հետևյալ օրենսդրական փոփոխությունները. ա) ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի N 163-Լ հրամանի 2-րդ հավելվածի 14-րդ կետում կատարել փոփոխություն և սահմանել նույն սեռի մասնագետի կողմից բժշկական գննության իրականացման անհնարիության դեպքում բժշկական գննությանը պահման վայրի նույն սեռի աշխատակցի ներգրավման վերաբերյալ կարգավորումներ: բ) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրերի մասին» ՀՀ օրենքում, որի 21-րդ հոդվածում և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ին ընդունած N 825-Ն որոշման հավելվածի 13-րդ կետում կատարել փոփոխություն և հանել «եթե բժշկական գննությունն իրականացնող բժիշկը հակառակը չի պահանջում» բառակապակցությունը:
3. Մինչ քրեակատարողական հիմնարկ ընդունվելը բռնության ենթարկված կալանավորված և դատապարտյալ կանանց կարիքներին համապատասխան տրամադրվող իրավական և սոցիալ-հոգեբանական աջակցության և խորհրդատվության արդյունավետության և գեներացիայունության ապահովման նպատակով իրականացնել հետևյալ գործառնական քայլերը. ա) Ապահովել քրեակատարողական հիմնարկներում բավարար քանակով և մասնագիտական բարձր որակավորում ունեցող իրավաբանների, հոգեբանների և սոցիալական աշխատողների առկայությունը: բ) Ապահովել նշված մասնագետների գեներացիայունությունը, նրանց կողմից ազատագրված կանանց հետ աշխատանքի և վարվեցողության Էթիկական նորմերի պահպանումը, որը ներառում է որևէ հիմքով խտրական կամ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորումների բացառումը: գ) Ապահովել նշված մասնագետների՝ գեներային հիմքով բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու համար բավարար և անհրաժեշտ հմտությունների և գիտելիքների առկայությունը:
4. Իրականացնել քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց, մասնավոր-

րապես տրանսգենդեր կանանց նկատմամբ խտրականության և բռնության դրսևորումների համալիր ուսումնասիրում, ռիսկերի և կարիքների գնահատում և վերջ դնել քրեակատարողական հիմնարկներում տվյալ անձանց նկատմամբ կատարվող բռնարարքների անպատժելիության մթնոլորտին:

5. Սահմանել քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց, մասնավորապես տրանսգենդեր կանանց արժանապատիվ, անվտանգ և սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից, նվաստացնող վերաբերմունքից և բռնությունից զերծ պահման պայմանների ապահովմանն ուղղված գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ նրանց նկատմամբ խտրականությունն ու բռնության գործադրումը տեղի են ունենում քրեակատարողական հիմնարկների վարչակազմի իմացությամբ և թողտվությամբ: Արձանագրված դեպքերի կապակցությամբ անհրաժեշտ է ապահովել արդար և արդյունավետ քննություն և դատական կարգով հետապնդել պատասխանատու անձանց:
6. Կատարել ԼԳԲՏ անձանց, մասնավորապես տրանսգենդեր կանանց քրեակատարողական հիմնարկներում անվտանգ տեղաբաշխման հիմնահարցի վերաբերյալ միջազգային փորձի և հայաստանյան համատեքստի համադրված և համալիր ուսումնասիրություն: Տվյալ ուսումնասիրության և վերհանված խնդիրների հիման վրա ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան՝ տրանսգենդեր անձանց տեղաբաշխման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն վերջիններիս նկատմամբ գենդերային հիմքով խտրականության և բռնության ռիսկերի կանխարգելումը:
7. Հստակեցնել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգում տեղ գտած՝ անձնական խուզարկությունը անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելով կատարելու սկզբունքը և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ կանոնը՝ միջազգային չափանիշներից բխող հստակ կարգավորումները անձնական խուզարկության իրականացման թույլատրելի և ոչ թույլատրելի եղանակների վերաբերյալ: Մասնավորապես ամրագրել ինվազիվ գննումների իրականացման արգելքը:
8. Միջազգային չափանիշներին համապատասխան՝ սահմանել հատուկ իրավակարգավորումներ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավար կազմի և աշխատակազմի, մասնավորապես ուղեկցման և անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող հաստիքների՝ միայն կին աշխատակիցներով համալրումը երաշխավորելու նպատակով:
9. Հիմք ընդունելով միջազգային չափանիշները և փորձագետների արձանագրած մտահոգությունները՝ կատարել միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն կանանց քրեակատարողական հիմնարկների գենդերազգայուն ղեկավարման վերաբերյալ և քայլեր ձեռնարկել Հայաստանում այդ փորձի ներդրման ուղղությամբ:
10. Ապահովել ազատագրված կանանց ընտանիքի անդամների հետ աշխատանքի գործուն և արդյունավետ մեխանիզմներ, որոնք կնպաստեն ինչպես ընտանիքի հետ կապի պահպանմանը, այնպես էլ կհաղթահարեն ազատագրված կանանց հանդեպ կարծրատիպային ընկալումները:

11. Կատարել քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացների ուսումնական պլանների խորքային և համապարփակ ուսումնասիրություն՝ դրանցում գեղեցիկագայուն վերապատրաստումների իրականացման միջազգային չափանիշների արտացոլվածությունը վերհանելու նպատակով: Ուսումնասիրության հիման վրա կատարել փոփոխություններ առկա դասընթացների ուսումնական պլաններում և ներդնել նոր դասընթացներ, որոնք կհամապատասխանեն քրեակատարողական ծառայողների գեղեցիկագայուն վերապատրաստումներին վերաբերող միջազգային չափանիշներին, այդ թվում՝ «Բանգկոկի կանոններով» սահմանվող պահանջներին:



## Բաժին 4

# Հիմնախնդրի հասցեագրում հոգեկան առողջության ոլորտի համատեքստում

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշները և առաջադեմ փորձը շեշտադրում են, որ հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության խնդրի հասցեագրումն անմիջականորեն պայմանավորված է տվյալ անձանց ազատության սահմանափակմամբ և հաստատություններում մեկուսացման պրակտիկաների վերացմամբ:

Հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության ու վատ վերաբերմունքի ռիսկն Էապես աճում է հաստատություններում մեկուսացման պայմաններում: Սա են վկայում ինչպես միջազգային ուսումնասիրությունները, այնպես էլ սույն հետազոտության շրջանակում հայաստանյան համատեքստի վերաբերյալ հավաքված տվյալները: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հայաստանյան հաստատություններում անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի առկայության, նրանց նկատմամբ որպես բուժման կամ պատժի միջոց անտեսման և ֆիզիկական զսպման կիրառման, շահագործման, ինչպես նաև հոգեբուժական և ինամքի հաստատություններում գնտվող անձանց կողմից բողոքներ ներկայացնելու ընթացակարգերի անարդյունավետ և ոչ բավարար լինելու խնդիրներին Է անդրադարձել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն Հայաստանին ուղղած իր դիտարկումներում<sup>123</sup>:

Ըստ այդմ՝ ՄԻՀԿ-ը, արձանագրելով հայաստանյան հոգեբուժական կազմակերպություններում բռնության դեպքերի, ինչպես նաև գենդերային բռնության ռիսկերի առկայությունը<sup>124</sup> և դրանք անհապաղ հասցեագրելու պետության պարտավորությունը, սույն բաժնի շրջանակում առաջնահերթ է համարել հիմնախնդրի քննարկումը ոչ թե գործող հոգեբուժական կազմակերպությունների գործունեության բարելավման, այլ ոլորտի ամբողջական մոդելային փոփոխության և պետության կողմից հոգեկան առողջության ոլորտի ապահիստիտուցիոնալացման գործընթացի պատշաճ իրականացման համատեքստում<sup>125</sup>:

.....

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշների իրացումը հաշմանդամության ոլորտում պահանջում է **իրավունքահենք մոտեցում**՝ գաղափարական, մոտե-

123. *St'u* CRPD, 2017, Concluding Observation on the Initial Report of Armenia (անգլերեն), <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPrICAqhKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2BMkIITZvw7JK%2BuYWfpBtdMIEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dIH%2FYkMw%2Fe0juigiYWKOfVF6vzhs77>

124. *St'u* Բաժին 1:

125. Միևնույն ժամանակ ՀՀ-ում գործող հոգեբուժական կազմակերպությունների գործունեության կարգավորման և այդ համատեքստում բռնության/գենդերային հիմքով բռնության կանխարգելման հարցերին հետազոտությունն անդրադարձել է հիմնախնդրի ամփոփ նկարագրման (Բաժին 1), հիմնախնդրի իրավական ճանաչման (Բաժին 2) և հաստատություններում արտաքին մշտադիտարկման իրականացման (Բաժին 5) վերաբերյալ բաժինների շրջանակում:

ցումների և վերաբերմունքի առումով արմատական փոփոխություն: Իրավունքահենք մոտեցման համաձայն՝ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձ դիտարկվում է ոչ թե իբրև «խնդիր ունեցող», բուժման, գերհոգատարության կամ բարեգործության «օբյեկտ», այլ իբրև հասարակության լիիրավ անդամ, որն ունի **սեփական կյանքի վերաբերյալ ազատ, տեղեկացված և սեփական կամարտահայտման հիմքով որոշումներ կայացնելու իրավունք**, և որի նկատմամբ հավասար և արժանապատիվ վերաբերմունքը պետք է պահպանվի կյանքի բոլոր ոլորտներում<sup>126</sup>:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների (ներառյալ հոգեկան առողջության ոլորտի) վերաբերյալ օրենսդրության և քաղաքականությունների մշակման և կիրառման գործընթացում պետությունների համար պետք է ուղենիշային լինեն **«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով** (այսուհետ՝ նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիա)<sup>127</sup> սահմանվող պարտավորությունները, **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի** (այսուհետ՝ նաև ՀՌԻԱԻՀԿ) և ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմինների պրակտիկայով ձևակերպված չափանիշները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիան սահմանում է **հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասարությունը** (հոդված 12), **ազատությունը և անվտանգությունը** (հոդված 14), **շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը** (հոդված 16), **անձի անձեռնմխելիությունը** (հոդված 17), **անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը** (հոդված 19) և այլ իրավունքներ ու ազատություններ:

Կոնվենցիան նաև արձանագրում է, որ «հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները՝ տանը, թե դրսում, ավելի հաճախ են ենթարկվում բռնության, վիրավորանքի կամ անարգանքի, արհամարհական, անփույթ կամ վատ վերաբերմունքի ու շահագործման», և շեշտում է «հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից լիարժեքորեն օգտվելուն նպաստող բոլոր ծրագրերում **գենդերային մոտեցում որդեգրելու անհրաժեշտությունը**» (Կոնվենցիայի նախաբան):

**Հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանայք բազմակի խտրականության ենթարկվող խումբ են՝ թե՛ գենդերային և թե՛ առողջական կարգավիճակի կամ հաշմանդամության հիմքով, ինչի հետևանքով նաև առավել խոցելի են բռնության տարբեր դրսևորումների, այդ թվում սեռական բռնության նկատմամբ<sup>128</sup>:**

126. *Տե՛ս* UNICEF, 2021, Discussion Paper. A Rights-Based Approach to Disability in the Context of Mental Health, United Nations Children's Fund (անլվերեն), <https://www.unicef.org/documents/rights-based-approach-disability-context-mental-health>

127. *Տե՛ս* «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762>: Կոնվենցիայով արձանագրված ընդհանուր սկզբունքներ են, ի թիվս այլնի, հարգանքը արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ, խտրականության բացառումը, հնարավորությունների հավասարությունը, մատչելիությունը, հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև, հարգանքը հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ և հարգանքը հաշմանդամ երեխաների՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ (հոդված 3):

128. Այսպես՝ 2018 թվականին ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձինք միջինում երեք անգամ ավելի հաճախ են ենթարկվում ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության՝ հաշմանդամություն չունեցող անձանց համեմատությամբ, իսկ հաշմանդամություն ունեցող կանայք տասն անգամ ավելի խոցելի են սեռական բռնության տեսանկյունից, քան հաշմանդամություն ունեցող տղամարդիկ, ընդ որում սոցիալ-հոգեբանական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց 68%-ը սեռական ոտնձգության է ենթարկվում անչափահասության ընթացքում մինչև 18 տարեկանը: *Տե՛ս* UNFPA, 2018, Women and Young Persons with Disabilities: Guidelines for Providing Rights-Based and Gender-Responsive Services to Address Gender-Based Violence and Sexual and Reproductive Health and Rights (անլվերեն), [https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/UNFPA-WEI\\_Guidelines\\_Disability\\_GBV\\_SRHR\\_FINAL\\_19-11-18\\_0.pdf](https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/UNFPA-WEI_Guidelines_Disability_GBV_SRHR_FINAL_19-11-18_0.pdf)

Հոգեբուժական հաստատություններում ազատությունից զրկված կանանց խնդիրներին անդրադառնալով՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն մասնավորապես արձանագրում է, որ.

- Հոգեբուժական հաստատություններում ազատությունից զրկված կանայք **առավել հաճախ են ենթարկվում խոշտանգումների**, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի և պատժի:
- Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ հոգեբուժական հաստատություններում **առանց անձի համաձայնության հոգեբուժական միջամտություններն ավելի հաճախ են կիրառվում**, քան հաշմանդամություն ունեցող տղամարդկանց նկատմամբ՝ անգործունակության և բժշկական անհրաժեշտության կեղծ մեկնաբանման լույսի ներքո, ինչը հաճախ նաև թույլատրվում է ներպետական օրենսդրություններով:
- Հոգեբուժական հաստատություններում կանանց նկատմամբ բռնության գործադրման առանձնահատկությունն է բռնարարի՝ **սեփական անպատժելիության բարձր հավանականության գիտակցումը**:
- Հոգեբուժական հաստատություններում կանայք խոցելի են բռնության այնպիսի դրսևորումների նկատմամբ, ինչպիսիք են հարկադիր մերկացումը տղամարդ անձնակազմի կողմից, կամքին հակառակ հոգեմետ դեղորայքի ընդունումը, դեղորայքի գերդոզավորումը, **որը հաճախ արվում է կնոջ սթափությունն ու արձագանքողականությունը նվազեցնելու նպատակով**, ինչը նվազեցնում է նաև սեռական բռնության ենթարկվելու պարագայում տեղի ունեցածը հիշելու կամ նկարագրելու կնոջ կարողությունները (ՀՈՒԱԻՀԿ, Ընդհանուր դիտարկում N 3<sup>129</sup>):

Անդրադառնալով հոգեկան առողջության խնդիրներ և սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց՝ հաստատություններում մեկուսացնելու պրակտիկաներին՝ պետք է նշել, որ պատմականորեն խտրականությունը վերջիններիս նկատմամբ մեծապես հանգեցրել է նրանց մարգինալացմանը և մեկուսացմանը:

Հոգեկան առողջությանն առնչվող խարանս ու կարծրատիպները մեծապես առկա են մինչ այժմ և ընկած են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ ազատությունից զրկելու ներպետական օրենսդրությունների հիմքում<sup>130</sup>, իսկ տվյալ անձանց խնդիրներին և կարիքներին պետության կողմից տրվող հիմնական լուծումն է հաստատություններում նրանց բնակության (պահման) և խնամքի կազմակերպումը<sup>131</sup>:

**Վերոգրյալով պայմանավորված՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի առաջադրած օրակարգային հիմնահարցերից է փաստացի կամ ենթադրյալ հաշմանդամության, ֆիզիկական, մտավոր և հոգեկան առողջության հիմքով անձի ազատությունը սահմանափակելու անթույլատրելիությունը:**

129. *St'u* UN Committee on the Rights of Persons with Disabilities (CRPD), General comment No. 3 (2016), Article 6: Women and girls with disabilities, 2 September 2016, CRPD/C/GC/3 (անգլերեն), <https://www.refworld.org/docid/57c977344.html>

130. *St'u* Deany P., Psychosocial Disability: one of the most misunderstood areas of disability, 9th session of the Conference of States Parties to the Convention on the Rights of Persons with Disabilities, June 15, 2016 (անգլերեն), <https://disabilityrightsfund.org/our-impact/insights/psychosocial-disability/>

131. *St'u* Հոգեկան առողջություն. ապահիստիտուցիոնալացում, Reforms.am տեղեկատվական կայք, <https://reforms.am/reforms/deinstitutionalization-mental-health/>

**ՀՈՒԱԻՀԿ-ն արձանագրում է հաշմանդամության (այն է՝ ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, մտավոր կամ զգայական կարգավիճակ, որը դիտվում է իբրև տարբերվող՝ անձի բնականոն առողջական կարգավիճակից) հիմքով անձին ազատությունից զրկման բացարձակ արգելքը** և շեշտում է, որ թեպետ մի շարք պետություններում հոգեկան առողջության ոլորտի օրենսդրությունները թույլատրում են անձանց ազատությունից զրկել ենթադրյալ կամ փաստացի հաշմանդամության հիմքով, պայմանով, որ առկա են այլ հիմքեր (ներառյալ այդ անձանց վտանգավորությունն իրենց և այլ անձանց համար), **սման գործելակերպն անհամատեղելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի և Կոմիտեի այս կապակցությամբ կայացրած նախադեպային որոշումների հետ (ՀՈՒԱԻՀԿ, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի (Անձի ազատությունը և անվտանգությունը) վերաբերյալ ուղեցույց**<sup>132</sup>:

Տվյալ հայեցակարգի խիստ պահպանումը կարևոր է հատկապես հաշվի առնելով, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պարագայում բռնության ու վատ վերաբերմունքի ռիսկն էապես աճում է նրանց ազատության սահմանափակման և հաստատություններում մեկուսացման պայմաններում<sup>133</sup>:

Խնդրի հասցեագրման նպատակով մի շարք երկրներում վերջին տասնամյակներում իրականացվել է հոգեկան առողջության ոլորտը կարգավորող ներպետական համակարգերի հիմնարար վերանայում և անցում հոգեբուժական հաստատություններից համայնքային միջավայրում բուժսպասարկման, սոցիալական և հոգեբանական աջակցության տրամադրման, այն է՝ **ապահեստիտուցիոնալ ոլորտային քաղաքականությունների ներդրում**<sup>134</sup>:

Ապահեստիտուցիոնալացման հիմքում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով պահանջվող երաշխիքների համալիր իրագործումը և մասնավորապես Կոնվենցիայի 19-րդ հոդվածից բխող՝ հաշմանդամություն ունեցող անձանց **անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի** լիարժեք իրագործումն են:

132. Հաշմանդամության հիմքով անձին ազատությունից զրկման ներպետական իրավական հիմքերի պահպանումն էական խնդիր է նաև հայաստանյան համատեքստում, ինչը կոպտորեն հակասում է ՀՈՒԱԻՀԿ-ի այս կապակցությամբ առաջադրած պահանջներին: Տվյալ խնդրի մասնավոր դիտարկումը թեպետ դուրս է սույն հետազոտության շրջանակից, սակայն հարկ ենք համարում շեշտել, որ խնդրի կապակցությամբ ՀՈՒԱԻՀԿ-ը Հայաստանին ուղղած իր դիտարկումներում նշել է, որ «Կոմիտեին մտահոգում են ներպետական իրավական դրույթները, որոնք թույլ են տալիս սոցիալ-հոգեբանական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց երկարաժամկետ, երբեմն իրենց կյանքի ամբողջ ընթացքում կամայական ազատությունից զրկումը՝ ներառյալ ոչ կամովին հոսպիտալացումը և հարկադիր ինստիտուցիոնալացումը, ինչպես և հաստատություններում ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց համար բավարար իրավական երաշխիքների և աջակցության բացակայությունը»: Ըստ այդմ Կոմիտեն ՀՀ Կառավարությանը հորդորել է ուժը կորցրած ճանաչել և արգելել հոգեկան խանգարման հիմքով կալանավորումը՝ ներառյալ ոչ կամովին հոսպիտալացումը և հարկադիր ինստիտուցիոնալացումը, ինչպես նաև ոչ կոնսենսուսային հոգեբուժական բուժումը:

133. Սա են փաստում միջազգային բազմաթիվ ուսումնասիրություններ և զեկույցներ: *Stú*, օրինակ, OHCHR, 2018, Mental health and human rights. Report of the United Nations High Commissioner for Human Rights (անգլերեն), <https://undocs.org/en/A/HRC/39/36>, Quinn C., Happel B., 2015, Exploring Sexual Risks in a Forensic Mental Health Hospital: Perspectives from Patients and Nurses, Issues in Mental Health Nursing, Vol. 36(9), pp 669-677 (անգլերեն), <https://www.tandfonline.com/doi/abs/10.3109/01612840.2015.1033042?journalCode=imhn20>, Melville J., 2012, Professional sexual abuse in mental health services: Capturing practitioner views of a contemporary corruption of care, Social Work & Social Sciences Review, 15(3) pp 26-43 (անգլերեն), [https://www.researchgate.net/publication/274202232\\_Professional\\_sexual\\_abuse\\_in\\_mental\\_health\\_services](https://www.researchgate.net/publication/274202232_Professional_sexual_abuse_in_mental_health_services)

134. Ապահեստիտուցիոնալացումը երեք հիմնական բաղադրիչներից է կազմված՝ անձանց տեղափոխում հաստատություններից համայնք, հրաժարում հոսպիտալացումից և այլընտրանքային խնամքի կենտրոնների և ծառայությունների ստեղծում: Արևմտյան հասարակություններում հոգեբուժական հաստատությունների ապահեստիտուցիոնալացման գործընթացը սկսվել է դեռևս 1950-ականներից, և, ըստ մի շարք հետազոտությունների, այն նպաստել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինտեգրմանը հասարակությունում՝ զուգահեռաբար ստանալով հոգեկան առողջության ծառայություններ և անհրաժեշտ անհատական աջակցություն, ապրելով համայնքում և բոլորի հետ հավասար հիմքերով իրացնելով սեփական իրավունքները և ազատությունները: *Stú* Novella E., 2010, Mental Health Care in the Aftermath of Deinstitutionalization: A Retrospective and Prospective View. Health Care Analysis, 18(3), 222-238 (անգլերեն), <https://sci-hub.se/10.1007/s10728-009-0138-8>, *տն՝ս* ևսև Hudson, C. G. (2019). Deinstitutionalization of mental hospitals and rates of psychiatric disability: An international study. Health & Place, 56, 70-79 (անգլերեն), <https://sci-hub.se/10.1016/j.healthplace.2019.01.006>: Հոգեկան առողջություն. ապահեստիտուցիոնալացում, Reforms.am տեղեկատվական կայք, <https://reforms.am/reforms/deinstitutionalization-mental-health/>:

Հիմնախնդրի հասցեագրում հոգեկան առողջության ոլորտի համատեքստում

Ապահիստիտուցիոնալացման պահանջն առաջադրված է ինչպես ՀՈՒԱԻՀԿ-ի, այնպես էլ ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ պայմանագրային մարմինների կողմից<sup>135</sup>:

2017 թվականին ՀՈՒԱԻՀԿ-ը ներկայացրել է 19-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր դիտարկում, որով արձանագրվել է, որ տվյալ իրավունքի իրացման համար անհրաժեշտ են համակարգային փոփոխություններ, մասնավորապես պետությունների կողմից լիարժեք ապահիստիտուցիոնալացման իրականացում: Կոնվենցիայի անդամ պետություններում կոնվենցիային միացումից ի վեր չպետք է գործարկվի ոչ մի նոր հաստատություն, չպետք է իրականացվի նաև գործող հաստատությունների վերանորոգում (բացառություն են կազմում հաստատության շենքային պայմաններին վերաբերող ծայրահեղ հրատապ աշխատանքները՝ մինչև լիարժեք ապահիստիտուցիոնալացման իրականացումը): Հաստատությունները չպետք է ընդլայնվեն և համալրվեն նոր բնակիչներով: Պետություններից, այսպիսով, պահանջվում է հրաժարում բոլոր տեսակի ինստիտուցիոնալ միջավայրերից (անկախ դրանց չափից, տեսակից, կարգավիճակից) և դրանց փոխարինում անկախ ապրելուն աջակցող ծառայություններով (independent living support services): Հաշմանդամություն ունեցող անձանց՝ անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի հարգման հրամայականից է բխում նաև իրենց կամքին հակառակ հոգեբուժական հաստատություններում կամ իրենց առողջական վիճակով և/կամ հաշմանդամությամբ պայմանավորված ազատությունից զրկման այլ պայմաններում գտնվող անձանց ազատ արձակումը:

ՀՈՒԱԻՀԿ-ը 2021 թվականին ներկայացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց ապահիստիտուցիոնալացման ուղեցույցի նախագիծը («Annotated outline of Guidelines on Deinstitutionalization of Persons with Disabilities, including in emergency situations»)<sup>136</sup>, որում Կոմիտեն, ի թիվս այլնի, ընդգծում է նաև կապը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ գեղեցիկ հիմքով խտրականության և բռնության դրսևորումների հաղթահարման և ապահիստիտուցիոնալացման գործընթացի միջև:

Հայաստանի համար «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան ուժի մեջ է մտել 2010 թվականից: Հայաստանը, սակայն, դեռևս չի վավերացրել Կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը<sup>137</sup>:

**Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը ևս ստանձնել է ապահիստիտուցիոնալացման պարտավորությունը:**

135. Օրինակ՝ խոշտանգումների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Խուան Մենդեզը 2013 թվականի թեմատիկ զեկույցում համապարփակորեն անդրադարձել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ անգործունակ ճանաչելու, ազատությունից զրկելու և առանց անձի կամքը հաշվի առնելու հոգեբուժական միջամտությունների ենթարկելու և խոշտանգումների միջև կապին՝ շեշտելով, որ անձանց գործունակության լիարժեք ճանաչումն ու հարգումը խոշտանգումների կանխարգելմանն ուղղված առաջնային քայլն են: UN Human Rights Council, 1 February 2013, Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, Juan E. Méndez, A/HRC/22/53 (անգլերեն), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G13/105/77/PDF/G1310577.pdf?OpenElement>: Տե՛ս նաև UN, 28 July 2008, Torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, A/63/175 (անգլերեն), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N08/440/75/PDF/N0844075.pdf?OpenElement>, Human Rights Committee, 31 March 1984, Communication No. 110/1981, Viana Acosta v. Uruguay (անգլերեն), <http://hrlibrary.umn.edu/undocs/session39/110-1981.htm>

136. Տե՛ս CRPD, Living Independently and Being Included in the Community: Guidelines on Deinstitutionalization of Persons with Disabilities, Including in Emergency Situations (անգլերեն), [https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRPD/Guidelines/CRPD\\_Annotated\\_outline.docx](https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRPD/Guidelines/CRPD_Annotated_outline.docx)

137. Կոնվենցիային կից կամընտիր արձանագրության վերաբերյալ առկա է ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԴՈ-1556 որոշումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, սակայն ՀՀ Ազգային ժողովն այն չի վավերացրել: Կամընտիր արձանագրության վավերացումը հնարավորություն է տալիս ներկայացնելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման անհատական դեպքերը ՀՈՒԱԻՀԿ-ի քննությանը: Այն նաև կարևոր գործիք է Կոմիտեի որոշումների հիման վրա ներպետական համակարգերի վերանայման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման առումով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանվող պարտավորությունների իրականացման վերաբերյալ ՀՀ Կառավարության մեկնարկային զեկույցի քննությունը ՀՌԻԱԻՀԿ-ն իրականացրել է 2017 թվականին: Այս կապակցությամբ ներկայացված Ամփոփիչ դիտարկումներում<sup>138</sup> ՀՌԻԱԻՀԿ-ը ընդհանուր առմամբ շեշտել է ներպետական օրենսդրությունը և գործողությունների ծրագրերը վերանայելու և դրանք հաշմանդամության իրավունքահենք մոդելին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Ամփոփիչ դիտարկումներում տեղ են գտել, ի թիվս այլևի, Հայաստանում հոգեկան առողջության խնդիրներ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում կանանց) իրավունքների պաշտպանության, նրանց հանդեպ խտրականության և բռնության ռիսկերի հասցեագրման, հոգեբուժական հաստատություններում անձանց ազատությունից զրկելու օրենսդրական հիմքերի վերացման և հոգեկան առողջության ոլորտի ապահովման ստիտուցիոնալացման պարտավորության պատշաճ իրականացումն ապահովելու վերաբերյալ մի շարք ուշագրավ արձանագրումներ և առաջարկներ, որոնց կանդրադառնանք հաջորդիվ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին և կոնվենցիայով ներկայացվող պահանջներին ներպետական օրենսդրության համապատասխանեցման տեսանկյունից կարևոր զարգացում էր 2021 թվականին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի ընդունումը<sup>139</sup>, համաձայն որի՝ պետությունը պետք է նաև երաշխավորի «հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար անկախ կյանք վարելու և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծումը, այդ թվում՝ խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններում կազմակերպվող ծառայությունները համայնքահենք ծառայություններով փոխակերպելը»:

Նշված օրենսդրական կարգավորումը կարևոր հիմք է Հայաստանում ապահովման ստիտուցիոնալացման քաղաքականության լիարժեք ներդրման և զարգացման առումով:

Պետության՝ ապահովման ստիտուցիոնալացման քաղաքականության որդեգրման տեսանկյունից կարևոր էին ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը<sup>140</sup> և 2013 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրա-

138. *Stú* CRPD, 2017, Concluding Observation on the Initial Report of Armenia (անգլերեն), <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRICAqKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2BMkKIITZvw7JK%2BuYWfpBtdMIEVnF0FSZiwodb8OBMgU4q3E3dlH%2FYkMw%2Fe0juigiYWKOfV6vzhs77>

139. Օրենքն իբրև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական նպատակ է սահմանում «մյուսների հետ հավասար հիմունքներով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և ազատություններն իրականացնելու, օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը» (հոդված 1): *Stú* <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152960>

140. *Stú* «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգին հավանություն տալու մասին ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի նիստի N 17 արձանագրությունից քաղվածք», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83190>

յին որոշումը<sup>141</sup>, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» 2014 թվականի ապրիլի 17-ի նիստի N 15 արձանագրային որոշումը<sup>142</sup>:

**Խնդրային Է, սակայն, այն հանգամանքը, որ վերոնշյալ բոլոր փաստաթղթերի գործողությունը դադարեցված Է ՀՀ Կառավարության 21.10.21 թ. N 1728-Ն որոշման 1-ին կետով<sup>143</sup>, և փաստացիորեն 2019 թվականից մինչ օրս Կառավարությունը չի պահպանել ապահովման ստիտուցիոնալացման գործընթացի շարունակականությունը, քանի որ այդ ուղղությամբ նոր ռազմավարություն, գործողությունների ծրագիր կամ այլ ակտ չի ընդունվել:**

Հարկ Է նշել, որ 2020 թվականի մարտին հանրային քննարկման Է դրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, որը մինչ օրս չի ընդունվել և, ըստ [www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքի տվյալների, դեռևս լրամշակման փուլում Է<sup>144</sup>:

Հոգեկան առողջության ոլորտը կարգավորող գործող միասնական ռազմավարական փաստաթղթի բացակայության պայմաններում ներկայումս հնարավոր Է միայն հետադարձ գնահատական տալ նախորդ հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերին:

Այս առումով իրականացված փորձագիտական վերլուծություններն արձանագրում են, որ Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման եւ բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը (այսուհետ նաև՝ Ռազմավարություն) արդյունավետ, ժամանակին և ամբողջապես չի իրականացվել, մասնավորապես **«հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անկախ կյանքի և համայնքում ներառման իրավունքի ապահովման համատեքստում առաջընթացը Ռազմավարության իրականացման շրջանակում [եղել Է] չնչին, իսկ նրանց նկատմամբ խարանդ և կարծրատիպային վերաբերմունքը անփոփոխ են ինչպես պետական պաշտոնյաների, այնպես էլ հասարակության շրջանում»**<sup>145</sup>:

141. Տե՛ս «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 13-ի նիստի N 36 արձանագրությունից քաղվածք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123695>

142. Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարություն», [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2104/04/15-1ardz.pdf?fbclid=IwAR0WPGI\\_-TaEL1BjJeGq0IjQhaQkKj\\_xDKF6LKRc8RSI3Segq9DXwCE5KKY](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/15-1ardz.pdf?fbclid=IwAR0WPGI_-TaEL1BjJeGq0IjQhaQkKj_xDKF6LKRc8RSI3Segq9DXwCE5KKY)

143. Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157069U>

144. Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, [https://www.e-draft.am/projects/2366/justification?fbclid=IwAR2i\\_n1V6WcXLZ60nHhGJ9Q0drSMA9F4gy\\_T0VZda6w7ug85MlyJl7478Cg](https://www.e-draft.am/projects/2366/justification?fbclid=IwAR2i_n1V6WcXLZ60nHhGJ9Q0drSMA9F4gy_T0VZda6w7ug85MlyJl7478Cg)  
Նախագծի վերաբերյալ փորձագիտական վերլուծությունները դրական են գնահատում փաստաթղթի մշակումը՝ արձանագրելով, որ այն, ի տարբերություն նախորդ բարեփոխումների փաստաթղթերի, «ներառում Է ապահովման ստիտուցիոնալացման գործընթացների կառավարման, ռազմավարական վերանայման, ծառայությունների դիզայնի, ռեսուրսների վերաբաշխման պլանավորման, անհատների գնահատման և նախապատրաստման, աշխատուժի զարգացման, լոգիստիկ պլանավորման, վարչարարության և ղեկավարման, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման մասին դրույթներ»:  
Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ, [https://reforms.am/entities/%D5%B0%D5%B0-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D6%87-%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD/?fbclid=IwAR3f4wqg3iUS6J3K\\_KfOFxErQ8bmSS-IOtNZ57P8VHR43NIWHuzCKoVajpo](https://reforms.am/entities/%D5%B0%D5%B0-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D6%87-%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD/?fbclid=IwAR3f4wqg3iUS6J3K_KfOFxErQ8bmSS-IOtNZ57P8VHR43NIWHuzCKoVajpo)

145. ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարության իրականացումը. զեկույց, 2020, [https://hcav.am/evaluation\\_mental-health-strategy\\_2014-2019/](https://hcav.am/evaluation_mental-health-strategy_2014-2019/)

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խոր արմատացած խարանի պայմաններում նրանք շարունակում են խնամքը և բուժումը ստանալ հաստատություններում՝ բախվելով բռնության, վատ վերաբերմունքի և ինքնին հաստատության ներսում խտրականության ռիսկերի<sup>146</sup>:

Հայաստանում ապահիստիտուցիոնալացման գործընթացի «դանդաղ առաջընթացը» արձանագրել է նաև ՀՈՒԱԻՀԿ-ը՝ ՀՀ Կառավարությանն առաջարկելով «արագացնել ապահիստիտուցիոնալացման գործընթացը», «ձեռնարկել իրավական միջոցներ և հատկացնել բավարար ռեսուրսներ աջակցության ծառայությունների զարգացման համար (այդ թվում անձնական աջակցողի ծառայության, որը կիեշտացնի հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը համայնքում)», ապահովել, որ «հաշմանդամություն ունեցող անձինք իրենց կազմակերպությունների միջոցով ներգրավվեն ապահիստիտուցիոնալացման բոլոր փուլերում (պլանավորում, իրականացում, գնահատում և մշտադիտարկում)»:

**Ռազմավարության ուսումնասիրումը նաև ցույց է տալիս, որ փաստաթուղթը գենդերազգայուն չէ:** Ռազմավարության շրջանակում առանձնացված յոթ նպատակներից որևէ մեկի շրջանակում առկա չէ անդրադարձ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանանց կարիքներին, ինչպես նաև նրանց նկատմամբ խտրականության, բռնության/գենդերային բռնության հաղթահարման խնդիրներին:

Հարկ է նշել, որ անդրադառնալով Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց խնդիրներին՝ ՀՈՒԱԻՀԿ-ն իր 2017 թվականի դիտարկումներում, ի թիվս այլնի, մտահոգություն է հայտնել «Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին (այդ թվում հաստատություններում գտնվող կանանց և աղջիկներին) գենդերային հիմքով բռնությունից պաշտպանող օրենսդրության և համապատասխան կարգավորումների բացակայության առնչությամբ»:

Ըստ այդմ կարևոր է, որ պետության կողմից ընդունվելիք հաջորդ ոլորտային Ռազմավարությունը ինչպես ապահիստիտուցիոնալացման, այնպես էլ հոգեկան առողջության ոլորտի այլ հարցերի վերաբերյալ առաջնահերթությունների և գործողությունների սահմանման շրջանակում ապահովի կանանց կարիքների, ռիսկերի (այդ թվում գենդերային հիմքով խտրականության և բռնության ենթարկվելու ռիսկերի) տեսանկյունից և դրանց հասցեագրումը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ կանանց կարիքների, ռիսկերի (այդ թվում գենդերային հիմքով խտրականության և բռնության ենթարկվելու ռիսկերի) հասցեագրման տեսանկյունից միջազգային ուղեցույցներում կարևորվում է **գենդերազգայուն հոգեկան առողջության խնամքի համակարգի ձևավորումը (gender-sensitive mental health care system)**<sup>147</sup>, ինչը ենթադրում է հոգեկան առողջության հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններից օգտվող անձանց և հատկապես կանանց և խոցելի խմբերի

146. Պացիենտների հանդեպ տարբերակված մոտեցման և վատ վերաբերմունքի դեպքերի մասին է նշվում ՀՀ ՄԻՊ-ի 2021 թվականի տարեկան զեկույցում, արձանագրվում են նաև խախտումներ պացիենտների նկատմամբ զգալի միջոցների կիրառմամբ: Մանրամասն տե՛ս Բաժին 1-ում:

147. Հոգեկան առողջության գենդերազգայուն մոտեցումը կանանց հետ բոլոր մակարդակներում առնչվող մասնագետներից պահանջում է դիտարկել և ընկալել հոգեկան առողջության խնդիրները կնոջ կյանքի համատեքստում, հաշվի առնել նախկին տրավմաները, այդ թվում ընտանեկան բռնության, սեռական բռնության և գենդերային հիմքով բռնության այլ դրսևորումների հետ բախման հետևանքները, լինել զգայուն կանանց տարբեր խմբերի կարիքների և առանձնահատկությունների նկատմամբ, այդ թվում ռասայի, սեռականության, հաշմանդամության: *See Women's Health Victoria, 2020, Spotlight on women and gender-responsive mental health care (անգլերեն), [https://womenshealthvic.com.au/resources/WHV\\_Publications/Spotlight\\_2020.05.15A\\_Spotlight-on-women-and-gender-responsive-mental-health-care\\_May-2020\\_\(Fulltext-PDF\).pdf](https://womenshealthvic.com.au/resources/WHV_Publications/Spotlight_2020.05.15A_Spotlight-on-women-and-gender-responsive-mental-health-care_May-2020_(Fulltext-PDF).pdf)*



կարիքները հարգելը և ծառայություններ մատուցելիս դրանք հաշվի առնելը<sup>148</sup>:

Գենդերազգայուն խնամքը նախ և առաջ ենթադրում է գիտելիք և ընկալում, որ կանանց, տղամարդկանց, տրանսգենդեր անձանց և այլ սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն ունեցող անձանց կարիքները տարբերվում են, և որ յուրաքանչյուր խմբի դեպքում փոխվում են նաև նրանց հետ աշխատանքի մոտեցումները<sup>149</sup>: Ավելին, երբ տարբեր բնույթի (բժշկական, խնամքի և այլ) ծառայությունների մատուցման մեջ ներգրավված մասնագետները չունեն բավարար հմտություններ և գիտելիք՝ տեսնելու և հասկանալու համար գենդերային բռնությունը՝ գենդերային բռնության դեպքում համարժեք արձագանք և քայլեր ձեռնարկելու համար, չեն կարող նաև բավարար կերպով պաշտպանել այդ հաստատություններում գտնվող կանանց գենդերային բռնության ռիսկերից<sup>150</sup>:

Գենդերազգայուն մոտեցումների ներդրումը, ի թիվս այլևի, պահանջում է որոշում կայացնողների և հաստատությունների ղեկավարների՝ նման մոտեցումների անհրաժեշտության գիտակցումը, կարևորումը և արտացոլումը ոլորտային քաղաքականություններում, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, մասնավորապես կանանց հետ անմիջականորեն աշխատող, հոգեբուժական, հոգեբանական և այլ անհրաժեշտ ծառայություններ մատուցող մասնագետների գենդերազգայունության ապահովումը վերապատրաստումների և մասնագիտական զարգացման միջոցով<sup>151</sup>: Գենդերազգայուն վերապատրաստումները պետք է ուղղված լինեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանանց նկատմամբ բազմակի հիմքերով (ինչպես փաստացի կամ ենթադրյալ հաշմանդամության, այնպես էլ սեռի/սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության հիմքով) խարանի և խտրականության հաղթահարմանը և ծառայություն մատուցողների այնպիսի գործելակերպերի բացառմանը, որոնք կարող են պարունակել բռնության/գենդերային բռնության, անտեսման, շահագործման, խոշտանգման, վատ կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ռիսկեր:

**Սույն բաժնում ներկայացված վերոնշյալ խնդիրները և կարիքները քննարկվել են նաև հետազոտության մասնակիցների հետ:**

Կարևոր է արձանագրել, որ հետազոտության մասնակիցների մեծ մասն ապահիստիտուցիոնալացումը դիտարկում է իբրև հոգեբուժական կազմակերպություններում և պետական խնամքի կենտրոններում գոյություն ունեցող խնդիրների, այդ թվում՝ բռնության գործոնների հաղթահարմանն ուղղված առանցքային լուծում: Նշվում է նաև, որ գործընթացի հաջողությունը և արդյունավետությունը մեծապես պայմանավորված են հասարակության իրազեկման, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խարանի և խտրականության հաղթահարման, ներառական միջավայրի

148. *St'u* Mental Health, Drugs and Regions Division, Victorian Government, Department of Health, 2011, Service guideline on gender sensitivity and safety: Promoting a holistic approach to wellbeing (անգլերեն), <https://www.health.vic.gov.au/practice-and-service-quality/gender-sensitivity-and-safety?fbclid=IwAR0V9PWYqQ2bjQDEvs6cCakqPb1lgdJHVs9l3b4h1lJkUje1v6h4kMidco>

149. *St'u* State of Victoria, Department of Health, 2011, Service guideline on gender sensitivity and safety: Literature review (անգլերեն), <https://www.health.vic.gov.au/practice-and-service-quality/gender-sensitivity-and-safety?fbclid=IwAR0V9PWYqQ2bjQDEvs6cCakqPb1lgdJHVs9l3b4h1lJkUje1v6h4kMidco>

150. *St'u* Watson J., Maylea C., Roberts R., Hill N., McCallum S., 2020, Preventing Gender-based Violence in Mental Health Inpatient Units, Research Report (անգլերեն), [https://20ian81kynqg38b3l3eh8bf-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2020/01/ANROWS-Watson-RR-VAW\\_MH\\_Units.pdf](https://20ian81kynqg38b3l3eh8bf-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2020/01/ANROWS-Watson-RR-VAW_MH_Units.pdf)

151. *St'u* Women's Health Victoria, 2020, Spotlight on women and gender-responsive mental health care (անգլերեն), [https://womenshealthvic.com.au/resources/WHV\\_Publications/Spotlight\\_2020.05.15A\\_Spotlight-on-women-and-gender-responsive-mental-health-care\\_May-2020\\_\(Fulltext-PDF\).pdf](https://womenshealthvic.com.au/resources/WHV_Publications/Spotlight_2020.05.15A_Spotlight-on-women-and-gender-responsive-mental-health-care_May-2020_(Fulltext-PDF).pdf)

և անհրաժեշտ համայնքային ծառայությունների ապահովմանն ուղղված պետության ջանքերով:

*«Այնպիսի համակարգ պետք է լինի, որտեղ անձինք կլինեն համայնքում, իրենց համայնքում, կկարողանան ստանալ Էն բոլոր ծառայությունները, որոնք հասանելի են մյուս բոլոր մարդկանց, և իրենց լրացուցիչ կարիքների համար կունենան լրացուցիչ աջակցող ծառայություններ»:* (Փորձագետ)

*«Պետք է սովորեցնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հետ ապրելու մշակույթ»:* (ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ)

*«Շահառուները պետք է կարողանան համայնքից օգտվել, համայնքի հետ կապ ունենալ, աշխատանքի հնարավորություն ունենան, այսինքն՝ իրենց շահերի պաշտպանությունը մաքսիմալ իրականացվի»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Վերոնշյալ խնդիրների հասցեագրման առումով արժեքավոր է Հայաստանում գործող այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների՝ Սպիտակի խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի փորձը, որն արմատապես տարբերվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման ու խնամքի իրականացման նպատակով գործող պետական հաստատությունների գործունեությունից և հարում է մարդու իրավունքների միջազգային չափանիշների և լավագույն փորձի շրջանակներում ընդունված՝ ապահիստիտուցիոնալ մոդելին<sup>152</sup>: Խմբային տների գործունեության առանցքում է հրաժարումը պետության կողմից մինչ այժմ ցուցաբերվող ինստիտուցիոնալ մոտեցումից: Կենտրոններից մեկի ներկայացուցիչը նշում է նաև, որ մշակել և ներդրել են խտրականության և բռնության բացառման ներքին մեխանիզմներ, որոնք աշխատակիցները խստորեն պահպանում են:

*«Հաստատություններում մարդիկ պաշտպանվածության խնդիր ունեն, իրենց շահերն ամբողջությամբ ոտնահարված են՝ սկսած նրանից, որ իրենք փակի տակ են, վերջացրած բռնության շատ և շատ դեպքերով: Սա է պատճառը, որ մեր կազմակերպությունը դեմ է գնում առհասարակ բոլոր տեսակի ինստիտուցիոնալ կառույցների: Մենք դեմ ենք գնում առհասարակ բոլոր տեսակի մեծ հաստատություններ»:*

152. Կենտրոնների նպատակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ապահիստիտուցիոնալ ծառայության ստեղծումն է: Խմբային տներում կազմակերպվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամք, տրամադրվում են անհրաժեշտ ծառայություններ՝ շեշտադրելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, արժանապատիվ միջավայրի ապահովմանն ու բռնության և վատ վերաբերմունքի բացառման հրամայականը: Այդ տները համայնքներում են, և այդտեղ ապրող անձինք լիովին մասնակցում են համայնքային կյանքին և օգտվում են համայնքային բոլոր ծառայություններից: Բացի այդ՝ կենտրոնների շահառուները նաև ստանում են հոգեբանի, հոգեբույժի, սոցիալական աշխատողի մասնագիտական ծառայություններ: Խնամքի կենտրոններում հիմնական գործառնությունը սոցիալական աշխատողն է իրականացնում և խնդիրների դեպքում դիմում է նաև մասնագիտական թիմին: Այս առումով կարևորվում են այս մասնագետի հմտությունները և գիտելիքները:

*րին և հավատացած ենք, որ համայնքահենք խնամքի մոդելը կիրառելի է որպես այլընտրանք բոլոր տեսակի մեծ հաստատություններին»:*  
(Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

*«Խնամքի տանը բացարձակ արգելվում է որևէ խտրականություն: Ունենք ներքին կանոնակարգ, Էթիկայի նորմեր, և բոլոր աշխատակիցները ենթարկվում են դրանց: Աշխատակիցը կանոնակարգից դուրս որևէ բան անել չի կարող: Մենք մոնիթորինգ ենք անցկացնում նաև անանուն: Գրում ենք խնամակալների անունները, և բնակիչները նշում են, թե տվյալ խնամակալն ինչ է անում, իրենցից ինչ վնաս կա: Հետո մեր նախագահի հետ քննարկում ենք: Եթե որևէ բռնության կամ վատ վերաբերմունքի դրսևորում լինի, աշխատակիցները շատ լավ գիտեն, որ կզրկվեն իրենց աշխատանքից»:*  
(Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Այլընտրանքային այս կենտրոնների ներկայացուցիչները նշում են, որ կարևոր է հասկանալ նաև, թե համայնքային ինչ ծառայություններ են անհրաժեշտ, և ինչ աշխատանք պետք է տարվի շահառուների և առհասարակ հասարակության շրջանում, որպեսզի շահառուները լիարժեք ներգրավված լինեն և լիարժեք ապրեն, և նրանց համար նախատեսված այլընտրանքային կենտրոնները ևս չվերածվեն «փոքր փակ հաստատությունների»:

*«Շահառուները պետք է կարողանան համայնքից օգտվել, համայնքի հետ կապ ունենալ, աշխատանքի հնարավորություն ունենան, այսինքն՝ իրենց շահերի պաշտպանությունը մաքսիմալ իրականացվի»:*  
(Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

*«Այստեղ իրենք իրենց լիարժեք մարդ են զգում, իսկ Սևանում փակված են եղել չորս պատի մեջ և վերջ: Հիմա կարող են դուրս գալ, ամբողջությամբ օգտվել խնամքի տնից դուրս գտնվող ծառայություններից: Հիմա իրենք նստում են երթուղային տաքսի, գնում են կենտրոն, գնում են գրադարան, ատամնաբուժարան, զբոսայգի, և որևէ մեկը նրանց այլ աչքով չի նայում: Սկզբնական փուլում շրջապատի կարծրատիպն էր, որ իրենք «հոգեկան հիվանդներ» են, այն ի՞նչ պիտի անեն, այն ո՞նց պիտի անեն... և՛ կանանց, և՛ տղամարդկանց նկատմամբ: Սկզբնական շրջանում մեր բնակիչներն իրենց հազուստներով էլ Էին տարբերվում: Ասենք, գնում էին կենտրոն ման գալու, ուստիկանությունից մոտենում, հարցնում էին՝ «ովքե՞ր եք դուք, ի՞նչ եք անում»: Բայց կամաց-կամաց մենք դրա միջով էլ անցանք»:*  
(Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Միևնույն ժամանակ, ապահիստիտուցիոնալացման գործընթացի բարդ և բազմաշերտ բնույթը, համակարգային մի շարք խնդիրների հետ կապը հաշվի առնելով, հետազոտության մասնակիցները նշում են, որ **պետության կողմից ապահիստիտուցիոնալացումն առաջնահերթություն սահմանելուն զուգահեռ անհրաժեշտ է նաև հաստատություններում ներդնել պացիենտներին բռնությունից, խտրականությունից պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, երաշխավորել ցանկացած դեպքի առթիվ արդար քննություն, նման դեպքերի բացահայտում և կանխարգելում:**

Սրա մասին են հատկապես շեշտում այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների ներկայացուցիչները՝ վկայակոչելով իրենց ներկայիս շահառուների նկատմամբ հաստատություններում տեղի ունեցած բռնության դեպքերը:

*«Պետական հաստատություններում գտնվողները, ցավոք, բռնությունից պաշտպանության մեխանիզմներ չունեն: Եթե ունենային, չեմ կարծում, որ բռնության կենթարկեին: Եթե հաստատությունում բռնության ենթարկողը մեկից վախ ունենար, չեմ կարծում, որ այդ կերպ վարվեր: Երևի անպատժելիությունն էլ հենց տարել է այդ քայլին»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների ներկայացուցիչները նշում են, որ շահառուների հետ աշխատանքում առնչվել են նախկինում տեղի ունեցած բռնության խնդրի՝ արձանագրելով հոգեբուժական կազմակերպություններում բռնության գործադրման պարագայում անպատժելիության բարձր հավանականության, ինչպես նաև բռնության դեպքերի բարձրաձայնման առումով պացիենտների շրջանում վախի մթնոլորտի առկայության հարցերը՝ անկախ սեռային կամ այլ տարբերակումներից: Ընդ որում՝ բռնությունը հաստատություններում գործադրվել է ինչպես անձնակազմի կողմից պացիենտների հանդեպ, այդպես էլ պացիենտների կողմից միմյանց հանդեպ՝ ներառյալ անձնակազմի թողտվությամբ կամ հրահրմամբ:

*«Մեր շահառուներից ոմանք, նախկինում պարբերաբար տարբեր տեսակի բռնությունների ենթարկվելով, այսօր առողջական և հոգեկան բավականին լուրջ հետևանքներ են կրում: Իրենք, բացի նրանից, որ հաստատությունում բռնության են ենթարկվում, նաև սովորում են այդ վախի մթնոլորտին, որ հանկարծ ոչ մի պարագայում իրենք դրա մասին չբարձրաձայնեն»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Խմբային տների ներկայացուցիչներն արձանագրում են, որ հաստատություններում իրավիճակը վերահսկելը շատ դժվար է, «նույնիսկ անհնարին», մի շարք պատճառներով, որոնց թվում են հաստատությունների գերբեռնվածությունը, աշխատակազմի անբավարար հմտությունները, իրավունքահեղձ մոտեցումների բացակայությունը, անտարբերությունը, սեփական գործառույթների ոչ պատշաճ իրականացումը:

*«Փորձը ցույց է տվել, որ հաստատություններում, որտեղ բնակվում են 150 և ավել շահառուներ, հնարավոր չէ, որ բռնություն կամ անտեսում չլինի կամ իրավունքի պաշտպանությունը պատշաճ ձևով իրականացվի»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

*«Երբ նայում ես հաստատություններում աշխատակազմի քանակը, քեզ թվում է, որ ինչքան շատ են՝ հարյուրից ավել աշխատողներ ունեն, բայց միևնույն է՝ մեծ քանակությամբ շահառուների հետ կցված են լինում շատ քիչ աշխատակիցներ, որոնց աշխատատեղն էլ արդեն իսկ... չգիտեմ էլ ոնց ասեմ, «անտարբերությունն» ամենամեղմն է... չկա հոգատարություն կամ գիտակցում, թե իրենք ինչ են անում, ինչի համար են անում, ու իրենց ֆունկցիան որն է: Այս առումով բավականին աշխատանք պետք է տարվի հաստատությունների աշխատակազմի հետ»:* (Այլընտրանքային (ոչ պետական) խմբային տան ներկայացուցիչ)

Այս կապակցությամբ փորձագետները շեշտում են նաև գործող հոգեբուժական կազմակերպությունների անձնակազմի վերապատրաստումների կարևորությունը, գենդերազգային գիտելիքների և մոտեցումների բացը: Նշվում է, որ ինչպես հաստատությունների անձնակազմերը, այնպես էլ ղեկավարները կարիք ունեն վերապատրաստումների, որոնք կանդրադառնան ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին, իրավունքահենք մոտեցումներին, այնպես էլ գենդերային հարցերին, այդ թվում՝ գենդերային հիմքով խտարականության և բռնության դրսևորումներին:

*«Հատկապես մեծ սերնդի ներկայացուցիչները չունեն: Ի՞նչ մարդու իրավունքներ: Ասում եմ՝ մարդ չեն տեսնում էլտեղ, որ մի հատ էլ իրավունքների մասին խոսենք: Երիտասարդ սերունդն ա, որի հետ հիմա պետք ա աշխատել, կրթական ծրագրեր անել: Չգիտեմ էլ, իրենք պրոֆեսիոնալ մասնագետներ դառնո՞ւմ են արդյոք: Սա էլ ա հարց»:* (Փորձագետ)

*«Մենք վերապատրաստման հետ կապված մշտապես հարցնում ենք հոգեբուժարաններին, այսինքն՝ Էդ տվյալները նույնիսկ ունեմ, բայց ինչ-որ տեևց բան չեմ հիշում, որ իրենք գրած լինեն, որ նման վերապատրաստում անցել են: Իրենց հիմնական վերապատրաստումները հենց հոգեկան առողջության հետ կապված թեմաներն են: Նորմալ իրենց մասնագիտացմամբ չեն վերապատրաստվում, ինչ էլ մնաց գենդերային բռնություն»:* (Փորձագետ)

Հարկ է նշել, որ հետազոտությունում ներառված հոգեբուժական կազմակերպությունների տրամադրած՝ անձնակազմերի համար նախատեսված վերապատրաստումների ցանկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, վերապատրաստումների թեմաները նույնական են. իրականացվող վերապատրաստումների ընթացքում ներկայացվում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը, այլ իրավական ակտերը, պացիենտների հետ աշխատելու և աշխատակիցների վարքագծի ընդհանուր կանոնները, հոգեբուժության և ոլորտին անչվող այլ թեմաներ<sup>153</sup>: Թե՛ այդ ցանկերի ուսումնասիրությունը, թե՛ հոգեբուժական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցները փաստում են, որ **իրականացվող վերապատրաստումները չեն անդրադառնում գենդերային բռնության ճանաչման և կանխարգելման, կանանց, այդ թվում՝ տարբեր խմբերի կանանց կամ առավել խոցելի պացիենտների հետ աշխատանքի առանձնահատկությունների թեմաներին**: Պետք է նաև նշել, որ հետազոտությանը մասնակցած հոգեբուժական կազմակերպություններից միայն «Սևան» հոգեկան առողջության կենտրոնի անձնակազմն է մեկ անգամ մասնակցել գենդերային բռնության մասին սեմինարի, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերը» աշխատողների համար կազմակերպել է սեմինար՝ տարբեր խոցելի խմբերի հետ աշխատանքի թեմայով, իսկ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի» աշխատակիցները վերապատրաստվել են «Մարդու հիմնարար իրավունքներ, հարկադրանքից, չարաշահումներից և բռնությունից ազատ հոգեկան առողջության սոցիալական ծառայություններ» թեմայով: Սակայն նշված դասընթացների և վերապատրաստումների գենդերազգայնությունը, կանանց գենդերային հատուկ կարիքների և մարդու իրավունքների ընդգրկվածությունը պարզելը և գնահատելը ենթադրում են առանձին համապարփակ ուսումնասիրություն:

Այսպիսով՝ վերոգրյալ հարցերի և խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

- Ի տարբերություն քրեակատարողական ոլորտի համատեքստի դիտարկման՝ հոգեկան առողջության ոլորտի համատեքստում ՄԻՀԿ-ն առաջնահերթ է համարել հիմնախնդրի դիտարկումը ոչ թե գործող հոգեբուժական կազմակերպությունների բարելավման, այլ ոլորտի ամբողջական մոդելային փոփոխության և պետության կողմից ապահովող ստրատեգիաներից ստացված քաղաքականության համատեքստում: ՄԻՀԿ-ի կողմից ցուցաբերվող վերոնշյալ մոտեցման հիմքում են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներից բխող չափանիշները, պետության քաղաքականության ձևավորման՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա հիմնված մոտեցումը և միջազգային ուսումնասիրություններով հաստատված այն փաստը, որ **հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի ռիսկն էապես աճում է ազատության սահմանափակման և հաստատություններում մեկուսացման պայմաններում**: Սա են վկայում նաև սույն հետազոտության շրջանակում հայաստանյան համատեքստի վերաբերյալ հավաքված տվյալները:

153. Աղբյուր՝ հետազոտության շրջանակում ընտրված հոգեբուժական կազմակերպությունների գրություններ՝ ի պատասխան ՄԻՀԿ-ի հարցման:

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը ստանձնել է, ի թիվս այլնի, ապահիստիտուցիոնալացման գործընթացի պատշաճ իրականացման պարտավորությունը:
- Հայաստանում ապահիստիտուցիոնալացման հարցը սկսել է քննարկվել վերջին տարիներին: Գործընթացի իրավական հիմքերը մասնավորապես ապահովված են 2021 թվականին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով և 2014 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N 15 արձանագրային որոշմամբ: Սակայն հարկ է նշել, որ տվյալ իրավական ակտի իրականացումն ավարտվել է 2019 թվականին, որից հետո այն չի փոխարինվել հոգեկան առողջության ոլորտի կարգավորմանն ուղղված որևէ այլ հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթով: Ըստ այդմ Կառավարությունը չի պահպանել ապահիստիտուցիոնալացման գործընթացի շարունակականությունը:
- Հայաստանում ապահիստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետությունը դրական չեն գնահատում թե՛ տեղական փորձագետները և թե՛ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն: Հայաստանում մինչ այժմ ապահովված չեն գործընթացի կայացման համար անհրաժեշտ՝ որակյալ, հասանելի և մատչելի համայնքափոխ ծառայություններ, շարունակում է գործել հոգեկան առողջության ոլորտի ինստիտուցիոնալ քաղաքականության մոդելը:
- Հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց (այդ թվում՝ հոգեբուժական և խնամքի հաստատություններում գտնվող) նկատմամբ բռնության, բազմակի խտրականության ռիսկերի, նրանց կարիքների և իրավունքների պաշտպանության հարցերը դուրս են պետության քաղաքականության առաջնահերթությունից: Դրանք նաև ամրագրված չեն Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման եւ բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության հոչակած նպատակներից որևէ մեկի շրջանակում:
- Հաստատություններում գտնվող հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող կանանց գենդերային հիմքով բռնությունից պաշտպանող ներպետական օրենսդրության և համապատասխան կարգավորումների անբավարարությունը արձանագրել է և այս կապակցությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ Հայաստանին ուղղված իր դիտարկումներում:
- Ապահիստիտուցիոնալացման գործընթացի զարգացման առումով արժեքավոր է Հայաստանում գործող այլընտրանքային (ոչ պետական) խմբային տների՝ Սպիտակի խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի փորձը: Ինչպես տվյալ կենտրոնների ներկայացուցիչները, այնպես էլ հետազոտության մասնակիցների մեծ մասը ապահիստիտուցիոնալացումը դիտարկում են իբրև հոգեբուժական կազմակերպություններում և խնամքի հաստատություններում առկա խնդիրների, այդ թվում՝ բռնության գործոնների հաղթահարմանն ուղղված

**առանցքային լուծում:** Միևնույն ժամանակ հետազոտության մասնակիցներն արձանագրում են, որ քանի դեռ ապահիստիտուցիոնալացման գործընթացը համալիր կերպով չի կայացել, անհրաժեշտ է ապահովել գործող հոգեբուժական կազմակերպություններում պացիենտների իրավունքների պաշտպանությունը, բռնությունից զերծ միջավայրը, բացառել խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումները, ներդնել պացիենտների իրավունքների ոտնահարման, այդ թվում՝ բռնության/գենդերային հիմքով բռնության դեպքերից պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ:

- Հոգեբուժական կազմակերպություններում փորձագետները նշում են անձնակազմի գենդերազգայուն գիտելիքի և հմտությունների պակասը: Հաշվի առնելով հոգեբուժական կազմակերպությունների ապահիստիտուցիոնալացմանն ուղղված Կառավարության ջանքերը, դրանց շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ միջազգային պարտավորություններին համապատասխան, **ՄԻՀԿ-ն կարևորում է ապահիստիտուցիոնալացման արդյունքում ձևավորման ենթակա համակարգի գենդերազգայունության ապահովումը և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատող բոլոր մասնագետների և բոլոր օղակներում ծառայություն մատուցողների գենդերազգայուն կարողությունների զարգացումը:**



## Առաջարկներ (Բաժին 4)

Հիմք ընդունելով սույն բաժնում դիտարկված միջազգային չափանիշների, մասնավորապես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջների, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի զարգացրած պրակտիկայի և Կոմիտեի՝ Հայաստանին ուղղած Ամփոփիչ դիտարկումների, տեղական իրավակարգավորումների, տեղական փորձագիտական աղբյուրների և սույն հետազոտության հավաքած տվյալների համադրված վերլուծությունը՝ առաջարկում ենք.

1. Պետության կողմից հոգեկան առողջության ոլորտին վերաբերող բոլոր հարցերի կարգավորման, օրենսդրական, հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերի մշակման և որոշումների կայացման գործընթացներում ապահովել հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական, մտավոր և այլ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ կանանց, ինչպես նաև նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների և կառույցների անմիջական մասնակցությունը:
2. Ապահիստիտուցիոնալացումը սահմանել որպես հոգեկան առողջության ոլորտի պետական քաղաքականություն:
3. ՀՈՒԱԻՀԿ-ի՝ Հայաստանին ներկայացրած դիտարկումներին համապատասխան՝ ուժը կորցրած ճանաչել հոգեբուժական և ինամքի հաստատություններում անձանց ազատությունից զրկման և մեկուսացման՝ ներառյալ ոչ կամովին հոսպիտալացման և հարկադիր ինստիտուցիոնալացման, ինչպես նաև առանց անձի համաձայնության հոգեբուժական բուժման իրավական հիմք հանդիսացող իրավակարգավորումները:
4. Հրատապ քայլեր ձեռնարկել ապահիստիտուցիոնալացման գործընթացի արագ առաջընթացի ուղղությամբ՝ ապահովելով առանց հապաղման ապահիստիտուցիոնալացման գործողությունների ծրագրի իրականացումը, այդ թվում՝ ամկա հաստատությունների փակման ժամանակացույցները: Ձեռնարկել քայլեր դրա արդյունավետության համար անհրաժեշտ բոլոր ծառայությունների կայացման, ինչպես նաև հասարակության շրջանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, այդ թվում՝ կանանց նկատմամբ խարանի և խտրականության հաղթահարման, վերջիններիս՝ համայնքում ապահով, պաշտպանված և ներառական մթնոլորտում ապրելու համար նպաստավոր միջավայրի կայացման ուղղությամբ:
5. ՀՈՒԱԻՀԿ-ի՝ Հայաստանին ուղղած դիտարկումների համապատասխան՝ ձեռնարկել իրավական, քաղաքական և գործնական արդյունավետ միջոցներ՝ ուղղված սոցիալ-հոգեբանական, մտավոր և այլ հաշմանդամություն ունեցող կանանց (մասնավորապես հաստատություններում ապրող կանանց) նկատմամբ գենդերային հիմքով խտրականության և բռնության հասցեագրմանը:
6. ՀՈՒԱԻՀԿ-ի՝ Հայաստանին ներկայացրած դիտարկումներին համապատասխան՝ ձեռնարկել օրենսդրական և գործնական միջոցներ՝ պաշտպանելու հաստատութ-

յուններում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և այլ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում կանանց, անտեսումից, բռնությունից, հարկադրանքից, շահագործումից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից, ինչպես նաև վերջ դնել հոգեբուժական կազմակերպություններում անպատժելիության մթնոլորտին, ապահովել դեռևս գործող հաստատություններում բռնության, շահագործման և խտրականության դեպքերի ահազանգման մեխանիզմների արդյունավետությունը: Արձանագրված դեպքերի կապակցությամբ անհրաժեշտ է ապահովել արդար և արդյունավետ քննություն և դատական կարգով հետապնդել պատասխանատու անձանց:

7. Ապահովել ապահիստիտուցիոնալացման գործընթացի գենդերազգայունությունը: Այս ուղղությամբ իրականացվող գործողությունների իրականացման շրջանակում հասցեագրել հոգեկան առողջության խնդիրներ, սոցիալ-հոգեբանական և այլ հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները, նրանց նկատմամբ խտրականության և բռնության ռիսկերը:
8. Հաջորդիվ ընդունվելիք ոլորտային ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերում առանձնակի ուշադրություն դարձնել հոգեկան առողջության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների ներդրման և այս կապակցությամբ բոլոր մակարդակներում ծառայություն մատուցողների և որոշում կայացնողների շրջանում գենդերազգայուն վերապատրաստումների խնդիրներին և նշված ուղղություններով ապահովել անհրաժեշտ միջոցառումների և գործողությունների իրականացում:

## Բաժին 5

# Հիմնախնդրի հասցեագրում ազատությունից զրկման վայրերի նկատմամբ արտաքին մշտադիտարկման և ներքին վերահսկողության միջոցով

Ազատությունից զրկման պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության և հատկապես բռնության, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման առումով կարևոր են **հաստատություններում արդյունավետ արտաքին մշտադիտարկումը և ներքին վերահսկողությունը**:

Արտաքին մշտադիտարկումը ենթադրում է անկախ մարմին, որն ունի մշտադիտարկման գործառույթ իրականացնելու լիազորություններ, ինչպես նաև հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության բացերի վերհանման համար անհրաժեշտ հմտություններ և գիտելիք, այդ թվում՝ հաստատությունում գտնվող տարբեր խմբերի անձանց խնդիրների ուսումնասիրման կարողություններ և գործիքակազմ:

Արտաքին մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է կարողանան անարգել և սեփական հայեցողությամբ, այդ թվում՝ առանց նախազգուշացման, այցելել ազատությունից զրկման վայրեր, հանդիպել այնտեղ գտնվող անձանց հետ, ինչպես նաև տեղեկատվության ու հաստատության ցանկացած տարածքի հասանելիություն ունենան<sup>154</sup>:

Ծիշտ է, այս մարմինները սովորաբար չունեն հաստատությունների համար պարտադիր բնույթի որոշումների կայացման հատուկ լիազորություն, սակայն նրանց դերակատարումն էական է հաստատություններում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բարձրաձայնման, տվյալների հավաքման, նպատակային զեկույցների պատրաստման, խնդիրների շուրջ հանրային իրազեկման առումով: Այս ամենի արդյունավետ իրականացումը բարձրացնում է հանրության առջև իշխանությունների հաշվետվողականությունը և հանրային մարմինների գործունեության թափանցիկությունը<sup>155</sup>:

**Ազատությունից զրկման վայրերում գտնվող կանանց իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ գենդերային հիմքով խտրականության և բռնության հասցեագրման առումով կարևոր է գենդերազգայուն արտաքին մշտադիտարկման իրականացումը, ինչը պահանջում է համապատասխան ռեսուրսների, կարողությունների և գործիքակազմի առկայություն:**

Մշտադիտարկման գործառույթ ունեցող կառույցները և/կամ խմբերը (պետական լիազոր մարմնի կողմից/օրենսդիր մարմնի կողմից<sup>156</sup> օմբուդսմենի ինստիտուտի շրջանակում/

154. *St'u Naylor B.*, 2016, Human Rights and their application in prisons, Prison Service Journal Vol. 227(17) (անգլերեն), [https://www.researchgate.net/publication/309585460\\_Human\\_Rights\\_and\\_their\\_application\\_in\\_prisons](https://www.researchgate.net/publication/309585460_Human_Rights_and_their_application_in_prisons)

155. *St'u* նույն տեղում:

156. Ազատությունից զրկման վայրերի հանդեպ պառլամենտական (օրենսդիր օղակի) վերահսկողության իրականացման արդյունավետ միջոց է կին և տղամարդ պատգամավորներից բաղկացած աշխատանքային խմբի ձևավորումը, որը պարբերաբար այցել կիրականացնի հաստատություններ: *St'u DCAF, OSCE/ODIHR, UN Women*, 2019, "Places of Deprivation of Liberty and Gender", in Gender and Security Toolkit (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/a/e/442531.pdf>

հասարակական կազմակերպությունների կամ խմբերի կողմից ստեղծված) **պետք է ընդգրկեն գենդերային հարցերով փորձագիտական հմտություններ և կանանց, այդ թվում կանանց տարբեր խմբերի ու անչափահասների հետ աշխատանքի փորձառություն և հատկապես զգայուն խնդիրների լուծման հարցերում, ինչպես գենդերային հիմքով խտրականությունն ու բռնությունն են, փորձառություն և անհրաժեշտ գիտելիք ունեցող անդամների**<sup>157</sup>:

Մշտադիտարկման գործիքակազմերի գենդերազգայունության ապահովման տեսանկյունից կարևոր է, որ համապատասխան մանդատ ունեցող կառույցները և մարմինները **հաստատություններում գտնվող անձանց հետ հարցազրույցների իրականացման շրջանակում ապահովեն հարցվողների գենդերային հավասարակշռությունը**, երաշխավորեն, որ կանանց տարբեր խմբերը **ներառված են ընտրանքում**, նրանց կարծիքները, բողոքներն ու անհանգստությունները **հավասարապես արտացոլված են հավաքվող տեղեկություններում և տվյալներում**<sup>158</sup>:

Մասնավորապես այցելությունների ժամանակ մշտադիտարկողները պետք է ուշադրություն դարձնեն առավել խոցելի խմբերի կարիքներին՝ հաշվի առնելով նրանց հետ հարցազրույցների իրականացման և տվյալների հավաքման առանձնահատկությունները: Այս տեսանկյունից կարևորվում են մշտադիտարկողների կարողությունները՝ էթիկական սկզբունքների, վարքագծային կանոնների, հաղորդակցման հմտությունների և այլ հարակից հարցերի համատեքստում)<sup>159</sup>:

Համապատասխան հմտությունների և գործիքակազմերի առկայությամբ մշտադիտարկողները ոչ միայն պետք է արձանագրեն, թե ինչպես են ազատությունից զրկման պայմաններում ապահովվում կանանց հատուկ կարիքները՝ պահման պայմանները, խցային պայմանները, սնունդն ու առողջապահական ծառայությունները, միջոցառումների, հարմարությունների և այլ ծառայությունների հասանելիությունը, այլև պետք է վերհանեն **գենդերային խտրականության և բռնության ռիսկերն ու հնարավոր խախտումները** և, ըստ այդմ, **հրապարակվող հաշվետվություններում ունենան գենդերազգայուն առաջարկներ**<sup>160</sup>:

**Արտաքին մշտադիտարկումից զատ կարևոր է նաև ներքին վերահսկողությունը:** Գործադիր մակարդակում պատկան կառույցները **պետք է ներդնեն** հաստատությունների ներսում մշտադիտարկման իրականացման, **բռնության դեպքերի ահազանգման, հաստատությունների գործունեության համար պատասխանատու կառույցներին զեկուցման և փաստագրման արդյունավետ ընթացակարգեր:** Կարևոր է, որ հաստատության հանդեպ վերահսկողության իրականացման պարտականությունները դրվեն համապատասխան գերատեսչության ղեկավար օղակի վրա, ինչպես նաև գործի պատասխանատու բաժին, որը կունենա մարդկային և ֆինանսական բավարար ռեսուրսներ և պահանջվող գիտելիքներ<sup>161</sup>:

157. *Տե՛ս* նույն տեղում:

158. *Տե՛ս* նույն տեղում:

159. *Տե՛ս* PRI, 2015, Women in detention: a guide to gender-sensitive monitoring (անգլերեն), <https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2016/01/women-in-detention-2nd-ed-v7.pdf>

160. Միևնույն ժամանակ հաստատություններն իրենց հերթին պետք է ունենան ներքին աուդիտի, աշխատանքների և անձնակազմի գնահատման, ինչպես նաև արտաքին վերահսկողության և մշտադիտարկման մարմինների կողմից առաջարկների արդյունավետ տեղայնացման և դրանց համապատասխան՝ պարբերական ներքին ստուգումների իրականացման արդյունավետ գործիքակազմեր: *Տե՛ս* DCAF, OSCE/ODIHR, UN Women, 2019, “Places of Deprivation of Liberty and Gender”, in Gender and Security Toolkit (անգլերեն), <https://www.osce.org/files/f/documents/a/e/442531.pdf>

161. *Տե՛ս* նույն տեղում:

Ներքին վերահսկողության վերաբերյալ միջազգային չափանիշներում ընդգրկված բաղկացուցիչ տարրերի հատվածական և առանձին դիտարկումն ու հետազոտությունը հայաստանյան համատեքստում նպատակահարմար չեն, քանի որ ներքին վերահսկողության ինստիտուտը մեկ ամբողջական համակարգ է, որի բոլոր տարրերը փոխկապակցված են, հետևաբար դրա հասցեագրումը սույն հետազոտության առարկայի տեսանկյունից պետք է իրականացվի առանձին հետազոտության շրջանակում:

**ՀՀ օրենսդրության համաձայն՝ հետազոտության շրջանակում ընտրված ազատությունից զրկման վայրերի հանդեպ արտաքին մշտադիտարկման գործառույթ ունեն հետևյալ կառույցները.**

- **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը:**

Կառույցի գործունեությունը կարգավորվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով<sup>162</sup>:

Վերոնշյալ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, **որպես կանխարգելման ազգային մեխանիզմ**<sup>163</sup>, ՄԻՊ-ը իրավասու է, ի թիվս այլնի՝

1. *իրականացնելու պարբերական, ինչպես նաև **ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր**, այդ թվում՝ իր ընտրությամբ դրանց հարակից շինություններ կամ կառույցներ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով: **Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցելությունների ժամանակի և նպատակի մասին.***
2. *«իր ընտրությամբ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) և անարգել տեսակցելու ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, ինչպես նաև առանձնագրույցներ ունենալու նրանց հետ: Առանձնագրույցները ենթակա չեն միջամտության կամ գաղտնալսման որևէ մարմնի կամ երրորդ անձի կողմից.*
3. *իրավասու մարմիններին և կազմակերպություններին **ներկայացնելու առաջարկություններ՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով.***
4. ***ստանալու տեղեկություններ** ազատությունից զրկման վայրերի քանակի և տեղակայման, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց քանակի վերաբերյալ.*
5. ***ստանալու տեղեկություններ և պարզաբանումներ** ազատությունից զրկման վայրում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց պահման պայմանների, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ»:*

162. Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123524>

163. Օրենքի 2-րդ հոդվածով Պաշտպանին է վերապահված խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամ ընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը (կանխարգելման ազգային մեխանիզմ):

- **ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը:**

Խմբի գործունեությունը կարգավորվում է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի N 126-Ն հրամանով, որը սահմանում է արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը<sup>164</sup>:

Նշված հրամանի հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ հասարակական դիտորդների խմբի գործունեության նպատակներն են, ի թիվս այլնի՝

- «1. կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկումը, իրավունքների խախտումների բացահայտումը, վերհանված հիմնախնդիրները հասարակությանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնելը, քրեակատարողական ծառայության գործունեությանն աջակցությունը.
2. քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների խախտումների բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելը.
3. քրեակատարողական հիմնարկներում իրավիճակի վերլուծությունները, եզրակացությունները և առաջարկությունները նախարարությանը և հասարակությանը ներկայացնելը...»:

Վերոնշյալ հրամանի հավելվածի 62-րդ կետի համաձայն՝

*«Խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ, տեղում ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում կալանավորված անձանց կամ դատապարտյալների համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը (բացառությամբ օրենքով պաշտպանվող անձնական տվյալների), պատժի կրման պայմաններին, ինչպես նաև հանդիպել կալանավորված անձանց կամ դատապարտյալներին: Անհրաժեշտության դեպքում կարող են կատարվել ձայնագրում, լուսանկարում, տեսագրում պահպանելով օրենքով, սույն կարգով կամ Խմբի գործունեության Էթիկայի կանոններով նախատեսված դրույթները»:*

- **Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խումբը:**

Խմբի գործունեությունը կարգավորվում է ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 13-ի N 63-Ն հրամանով, որով սահմանվում են հոգեբուժական օգնություն

164. Տե՛ս «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի Նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի N 126-Ն հրամանը, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=140628>

և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի իրավասությունը<sup>165</sup>:

Սույն հրամանի հավելվածի համաձայն՝ հասարակական դիտորդների խումբը, ի թիվս այլնի՝

1. *«Չբաղվում է հոգեբուժական կազմակերպություններում (այսուհետ՝ Կազմակերպություն) հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացող անձանց (այսուհետ՝ Պացիենտներ) իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ:*
2. *Կազմակերպությունում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով խումբը կատարում է այցելություններ:*
3. *Այցելությունները կարող են լինել պլանային և ոչ պլանային:*
4. *Այցելությունները կարող են կատարվել առանց նախապես զգուշացման՝ չխախտելով Կազմակերպության ներքին կանոնակարգը:*
5. *Խումբն իրավունք ունի այցելելու Կազմակերպության ցանկացած տարածք՝ Կազմակերպության ներկայացուցչի ուղեկցությամբ՝ չխախտելով Կազմակերպության ներքին կանոնակարգը: Կազմակերպության ներքին կանոնակարգով չեն կարող նախատեսվել խմբի կողմից իրականացվող մշտադիտարկումն ուղղակի կամ անուղղակի կերպով խոչընդոտող դրույթներ:*
6. *Խումբն իրավունք ունի առանձնազրույց ունենալու Պացիենտների հետ՝ Պացիենտի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում նաև՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության դեպքում»:*

**Թե՛ հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցներում, թե՛ ՄԻՊ-ի տարեկան զեկույցներում նշվում է, որ բուն մշտադիտարկման գործառույթի իրականացմանն առնչվող խոչընդոտների հիմնականում չեն բախվում, սակայն նրանց բարձրաձայնած խնդիրներին իրավասու պետական կառույցների կողմից ոչ միշտ է բավարար և արագ արձագանք տրվում:**

ԶԿՀ-ներում դիտորդների խմբի անդամները նշում են, որ միշտ չէ, որ արդարադատության նախարարությունը արագ արձագանքում է կամ առհասարակ արձագանքում է ներկայացված խնդիրներին: Եվ այդ առումով դրանք երբեմն բավական ուշ են լուծում ստանում: Մյուս կողմից էլ դիտորդների խմբի անդամներն ընդգծում են, որ որոշ խնդիրներ հնարավոր է այդպես էլ լուծում չստանային, եթե խումբը չբարձրաձայներ:

Հոգեբուժական կազմակերպություններում դիտորդների խմբի անդամները նույնպես նշում են, որ որոշ խնդիրների լուծման համար միայն առողջապահության նախարարությանը հաշվետվություն ներկայացնելը կարող է բավարար չլինել, և խնդրի լրացուցիչ հանրայնացման կարիք առաջանա: **Այս առումով երկու խմբերն էլ շեշտում են, որ հանրայնացումը խնդիրները բարձրաձայնելու և դրանց լուծմանը հասնելու կարևոր մեխանիզմ է:**

165. Տե՛ս «Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի իրավասությունը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 13-ի N 63-Ն հրամանը, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=155217>

*«Խումբը կարող է հրապարակել, հանրայնացնել, որովհետև մենք միշտ սպասում ենք նաև նախարարության կարծիքին կամ նրա քայլերին, որովհետև դա մեր մանդատի շրջանակներում է, որ պարտադիր պետք է կցվի նաև պաշտոնական տեսակետը տվյալ հարցին: Մենք հնարավորություն ունենք հրապարակելու, ասուլիսներ հրավիրելու հարցը բարձրացնելու, հանրայնացնելու և այդ մեթոդներով, որպես Էդպիսին, լուծումներ պահանջելու, որովհետև Էդ մեր քաղաքացիական հասարակության գործիքակազմի շրջանակներում է գտնվում՝ հանրային ճնշումը, հանրային ուժը օգտագործել խնդիրների լուծման համար որպես փակող միջոց»:* (ԶԿՀ դիտորդների խմբի անդամ)

*«Բայց ավելի գլոբալ փոփոխությունների հարցում, հա, միգուցե այլ քայլերի կարիք էլ կա, որոնք պետք ա արվի ավելի լուսաբանելու, ավելի հանրայնացնելու առումով, բայց համենայնդեպս այս ձևաչափով էլ ա արդյունավետ ինքը լինում»:* (Հոգեբուժական կազմակերպություններում դիտորդների խմբի անդամ)

Ինչպես ՄԻՊ գրասենյակի ներկայացուցչի, այնպես էլ հասարակական դիտորդների խմբերի հետ հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցների ընթացքում քննարկվել է նաև մշտադիտարկման ընթացակարգերի և գործիքակազմերի գեներացայունության խնդիրը:

Ինչպես ԶԿՀ-ներում, այնպես էլ հոգեբուժական կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խմբերի ներկայացուցիչները նշել են, որ իրենց շարքերում ունեն գեներային հարցերով փորձագիտական հմտություններ, գեներային հիմքով խտրականության ու բռնության հետ աշխատանքի փորձառություն և անհրաժեշտ գիտելիք ունեցող անդամներ: Միևնույն ժամանակ հասարակական դիտորդների երկու խմբերի ներկայացուցիչներն էլ նշել են, որ **դեռևս չեն մշակել գեներային բռնությունը և խտրականությունը բացահայտելուն նպատակաուղղված գործիքներ:**

Համապատասխան գործիքակազմի բացակայության խնդրի մասին նշում է նաև ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչը՝ շեշտելով **գեներային բռնության դեպքերը բացահայտելուն ուղղված կարողությունների զարգացման, այս առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրման և մշտադիտարկումներ իրականացնողների շրջանում համապատասխան վերապատրաստումներ անցկացնելու կարևորության մասին**<sup>166</sup>:

*«Մենք կուզենայինք ունենալ ավելի մանրամասն գործիքակազմ, հոգեբանների հետ անցնել վերապատրաստում՝ բացահայտելու համակարգային խնդիրները: Ես կուզենայի, որ իմ վարչությունը*

166. Միևնույն ժամանակ դիտորդների խմբերի ներկայացուցիչները որպես բռնության դեպքերի բացահայտման խոչընդոտ շեշտում են, որ հաստատություններում գտնվող անձինք վախենում են խնդիրները բարձրաձայնելուց, ինչին առավել մանրամասն անդրադարձ է արվել Բաժին 1-ում:



